

8657

ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՒԼՏՈՐՈՊ ԲԱԺԻՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ  
ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ Բ.

ՅԿՈԿ

Ժ-84

ՊԵՏԶՐԱՑ

1932

ՅԵՐԵՎԱՆ



09 DEC 2009

24 SEP 2008

Հ. Կ (Բ) Կ. ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՒՆԸՍԻՍ - ՊՐՈՊ ԲԱԺԻՆ

3K04

Գ - 84

Կր.

# ԺՈՂՈՎԱԾՈՒ

## ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1007  
31219

Պ Ր Ս Կ Բ.

Քարգմ. Հ. ԼԵՎՈՆԹԱՆ  
Խմբ. Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԵՏՐԱՏ



ՅԵՐԵՎԱՆ



2003 932 4 8

0057

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱԼ  
ՔԼԱՎԼԻՏ 7071 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 275  
ՀՐԱՏԱՐ. 2023  
ՏԻՐԱԺ 3000

ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՇԱՂԿԱՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտադրական-տեխնիկական և ֆադաֆական լուսավորութուն

«Այլատանքի արտադրողականությունը,—գրում էր Լենինը,— վերջին հարվով ամենից կարևորը, ամենից գլխավորն է նոր հասարակարգի հաղթանակման համար: Կապիտալիզմն ստեղծեց աշխատանքի այնպիսի մի արտադրողականություն, վորպիսին չէր տեսնված ճորտատիրության որով: Կապիտալիզմը կարող է վերջնականապես հաղթահարվել և կհաղթահարվի այն բանով, վոր սոցիալիզմը կստեղծի նոր, շատ ավելի բարձր աշխատանքի արտադրողականություն» (ընդգծումն իմն է.—Գ. Գ.): Այս նոր, շատ ավելի բարձր աշխատանքի արտադրողականությունն ստեղծելու համար հարկավոր է ունենալ այնպիսի տնտեսական սիստեմ, վորը ներկայացնի արտադրողական ուժերի ազատ զարգացման համար անհրաժեշտ պայմաններն ու նախադրյալները:

Այն ժամանակ, յերբ ճառաջավոր կոպիտալիստական յերկրները, չնայած կապիտալիզմի առատություն, սոցիալիկական կազմերի առատություն և կուլտուրականության ավելի բարձր մակարդակի, գտնվում են աճող տնտեսական նվաճումի վիճակում և տնտեսական զարգացման ասպարիզում իրար յետևից պարտութուններ են կրում» (Ստալին), մեր յերկիրը գտնվում է աճող տնտեսական վերելքի վիճակում, տնտեսական զարգացման ասպարիզում իրար յետևից հաջողութուններ շահելով:

Պատճառն այստեղ,—ասում էր ընկ. Ստալինը կուսակցության XVI համագումարում,—«Մեր և կապիտալիստների տնտեսական սիստեմների տարբերության մեջ է: Պատճառը տնտեսության կապիտալիստական սիստեմի սնանկութունն է: Պատճառը կապիտալիստական սիստեմի համեմատությամբ տնտեսության խորհրդային սիստեմի ունեցած առավելութունների մեջ է»: Տնտեսության խորհրդային սիստեմը սկզբունքորեն նոր, կապիտալիզմի պայմաններում անհնարին՝ վերաբերմունք է ստեղծում աշխատանքի հանդեպ: Սոցիալիստական մրցությունը, հարվածությունը, հանդիպական արգֆինսյանը աշխատանքի նկատմամբ այդ նոր վերաբերմունքի զբսեվորման ձևերն



են, մի վերաբերմունք, վոր հեղափոխական դասակարգի, այդ գլխա-  
վոր արտադրական ուժի չտեսնված ստեղծարար հնարավորութիւն-  
ները դարաշրջան և բաց անում: Մեր տնտեսութեան սխառեմի առա-  
վելութիւնները, վոր ստեղծված են բանվորա-գյուղացիական իշխա-  
նութեան ու խորհրդային կարգերի հիման վրա, և այդ տնտեսական  
սխառեմից ծնունդ առած նոր վերաբերմունքն աշխատանքի հանդէսը,  
ամենալայն ասպարեզ են տալիս տեխնիկայի դարգացմանը, նրա ող-  
տագործմանը՝ նոր, շատ ավելի բարձր աշխատանքի արտադրողա-  
նութիւն ստեղծելու համար: Յե՛վ տեխնիկայի դարգացումն այստեղ  
վճռական նշանակութիւն և ստանում հետագա հաղթական առաջխա-  
ղացման համար: «Տեխնիկան վերակառուցման շրջանում վճռում է ա-  
մեն ինչ» (Ստալին): Վերակառուցման շրջանում տեխնիկայի ունեցած  
այդ վճռական նշանակութիւնից և այն փաստից, վոր սոցիալիզմի ամ-  
բողջ Փրոնտով ծավալված արշավի շրջանում տեխնիկան դառնում է  
դասակարգային պայքարի ասպարեզ, պրոլետարիատի դասակարգա-  
յնորեն թշնամի ուժերի կողմից ոգտադործելով իբրև ղենք ընդդէմ դրո-  
հող սոցիալիզմի, — այս փաստերից բղխում է այն, վոր պրոլետարիա-  
տի առաջավոր ջոկատը պետք է գլխավորի տեխնիկայի տիրապետման  
համար մղվող պայքարը, կապիտալիզմի ղեմ վերջնական հաղթանակ  
տանելու այդ վճռական դիրքը: Կուսակցութեան անդամի տեխնիկական  
գիտումը դառնում է անհրաժեշտ պայման՝ իրադործելու համար այն ա-  
ռաջավոր դերը, վոր ունի կուսանդամն արտադրութեան մեջ: Նոր  
պայմաններում լոկ քաղաքականապես ղեկավարելու կարողութիւնն  
արդեն բավական չէ. արտադրութեան մեջ կուսանդամից պահանջվում  
է նաև տեխնիկապես ղեկավարելու կարողութիւն: «Բայլ չե՛վիկները  
պետք է տիրապետեն տեխնիկային»: Քաղաքական մակարդակի բարձ-  
րացման համար պայքարելուն հուզելից, անհրաժեշտ է պայքարել  
տեխնիկական լուսավորութեան համար, արտադրութեան մեջ աշխատող  
կոմունիստի տեխնիկական պատրաստութեան մակարդակի բարձրաց-  
ման համար:

Սակայն, սխալ կլինի կարծել, վոր տեխնիկական լուսավորու-  
թեան, տեխնիկական գիտելիքների տիրապետման համար պայքարիչը  
նշանակում է վորևէ չափով թուլացնել ուշադրութիւնը քաղաքական  
և կուսակցական լուսավորութեան գործի հանդէսը: Տեխնիկական լու-  
սավորութիւնը և քաղաքական լուսավորութիւնը այնպիսի «բաներ»  
չեն, վոր գտնվելիս լինեն ներհակութեան հարաբերութիւնների մեջ,  
վորտեղ մեկը դուրս մղելիս լինի մյուսին. նրանք չեն դառնում նաև  
«խրավահասարկութեան» հարաբերութիւնների մեջ և նրանց չի կա-  
րելի դիտել իբրև այնպիսի «բաներ», վորոնք գրված լինեն կողք-կող-  
քի մեկը մյուսի մոտ և մեկը մյուսի կողքին»:

«Քաղաքականութիւնը, — գրում էր Լենինը Բուխարին ղեմ վի-

ճելիս, — չի կարող առաջնութիւն չունենալ եկոնոմիկայի հանդէսը...  
Այլ կերպ դատել, նշանակում է մոռանալ մարքսիզմի այբուբենը...  
ասել (կամ թեկուզ կողմնակիրուն այն միտքը թույլ տալ), թե քաղա-  
քական մոտեցումը հավասարաբեք է «տնտեսականին», թե կարելի չէ  
վերցնել «այս և այն», նշանակում է մոռանալ մարքսիզմի այբուբենը»:  
Այդպիսին է քաղաքականութեան և եկոնոմիկայի փոխ-հարաբերու-  
թեան լենինյան բժշկանոցութիւնը: Այդպիսին է հարցի դրուումը նաև  
ընկ. Ստալինի տված՝ տեխնիկայի տիրապետելու լողունդի մեջ: Չէ  
վոր այդ լողունդի ելութիւնը հենց նրանումն է, վոր քաղաքական ղե-  
կավարները պետք է հրաժարվեն տեխնիկական ղեկավարմանը չխա-  
նակ սեխնիկական ղեկավար. բայլ չե՛վիկները, — ասում է ընկ. Ստա-  
լինը, — պետք է տիրապետեն տեխնիկային: Այս լողունդը կոչված է  
վերացնելու անջատումը քաղաքական կարողութեան և տեխնիկական  
կարողութեան միջև, նա կոչված է վերացնելու այն չարիքը, վոր ստաց-  
վել է տեխնիկայի բայլ չե՛վիկային քաղաքականութեանից խղելու վա-  
տից, խղում, վորը և հանդէս այն բանին, վոր տեխնիկական քաղաքակա-  
նութեան ղեկը դարձավ մեր թշնամիների ձեռքում: Յե՛վ ակնհայտու-  
կա դարձնել բայլ չե՛վիկային քաղաքականութեանը՝ նրան պրոլետարական  
գիտատուրայի ամբողջման, սոցիալիզմի կառուցման ղեկը դարձնելու  
համար: Մեկ հարկավոր չէ տեխնիկայի ամեն մի տիրապետումը, այլ  
հարկավոր է միայն այն տիրապետումը, վոր ընդունակ է ծառայելու  
սոցիալիզմի դարձին: Իսկ տեխնիկայի այդպիսի տիրապետումը յեն-  
թաղում է կուսակցութեան գլխավոր գծի հաստատուն ու հստակ լմ-  
ջրոնոցութիւն, այն կենսագործելու անշեղ վճռականութիւն: Այսպի-  
սով, ծավալուն տեխնիկական արշավի պայմաններում կուսուսավոր-  
ութեան ղեկը վոչ միայն չի թուլանում, այլ, ընդհակառակն, ուժե-  
ղանում է: Կուսուսավորութեան ղեկի այդ նշանակաւոր կուսուսավոր-  
ութեան, առաջին, այն բանում, վոր տեխնիկական ուսուցմամբ ընդգրկված  
կոնտրիբենաների ավելացման համապատասխան, քանակապես պետք է  
ավելանան նաև կուսուսուցմամբ ընդգրկվածների կոնտրիբենաները.  
յերբորդ՝ այն բանում, վոր ներկայումս առաջվանից շատ ավելի մեծ  
չափով անհրաժեշտ է քանակապես ու վորակապես ապահովել կու-  
սակցական ու քաղաքական լուսավորութեան մակարդակը ուսումնա-  
կան-կրթական և կուլտուր-լուսավորական հաստատութիւնների ամ-  
բողջ սխառեմում. յերբորդ՝ կուսուսավորութեան բովանդակութիւնը  
պետք է փոխադրվի ավելի բարձր աստիճանի, վորպէսզի կարողանա  
երբք ղեկը դառնալ՝ կուսակցականութիւնն արտադրական գիտութեան  
մեջ առաջ մղելու համար:

Այս ասածներից բղխում է այն, վոր անհրաժեշտ է պայքարել ընդ-



գեմ արտադրական-տեխնիկական և կուսակցական լուսավորութիւնը միմյանց հակադրելու ամեն տեսակ փորձերի, մեկ կողմից՝ ընդդէմ կուսուլուսավորութիւնն ունկնդիրներէ տեխնիկական ղիտելիքներէ բարձրացման խնդիրներէ կողմը դարձնելու քաղաքական նշանակութեան թերազնահատման, մյուս կողմից՝ ընդդէմ կուսուլուսավորութեան քաղաքական նշանակութեան թերազնահատման, փորը նոր պայմաններու տանում և դեպի կուսուլուսավորութեան փաստական վերացումը:

ԿՈՒՍԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՅԻ ՏԵՂԸ ՏԵՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ  
ՀԱՄԱՐ ՄԳՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Բայց իմաստ ունի՞ արդո՞ք, կուսուլուսավորութեան ցանցի ինքնուրույն գոյութիւնը: Արդո՞ք չի կարելի կուսակցական - քաղաքական լուսավորութեան համար ապահովել այն դերը, փոր պատկանում և նրան, յետեւ պրոֆտեխնիկական կրթութեան ցանցում անհրաժեշտ չափով քաղաքական ղիտելիքներ մտցնելը: Այդ դեպքում իմաստ կու՞նենա՞ր արդո՞ք տեխնիկան կուսուլուսավորութեան ցանցում մտցնելու հորցը դնել: Յետեւ մենք ունենք այնպիսի տիպի դպրոց, փորտեղ տեխնիկական, հանրակրթական և քաղաքական առարկաներ են տվանդվում, ապա ի՞նչը մեզ հիմք և տալիս այդ տիպի դպրոցը վերադրել վոչ թե պրոֆտեխնիկական կրթութեան, այլ կուսակցական լուսավորութեան ցանցին:

Այս իբրև թե «կախարդական շրջանակից» յերբեմն փորձում են դուրս դալ այնպիսի մի նկատառումով, թե լոկ արտաքին տարբերութիւն են գնում կուսուլուսավորութեան ցանցի և կրթութեան մյուս դասական տեսակների միջև, թե խնդիրը լոկ քաղաքական և տեխնիկական առարկաներին տրվող ժամերի թվի քանակական փոխհարաբերութեանն և վերաբերում: Յետեւ ուսումնական պլանում դերակշռում են քաղաքական առարկաների ժամերը, ուրեմն կուսուլուսավորութեան իբրև «գեմ-քը» չի կորցրել:

Գործն այսպես հասկանալը սրահկտիկայում հանդում և արդեն այն բանին, փոր կուսուլուսավորութեան ցանցի պահպանման շահերից յեւ-նելով ղիտավորյալ կերպով սահմանափակվում և արտադրական-տեխ-նիկական պրոպագանդը: Այսպես, «Եւկատրոզավորում» կուսուլուսավորութեան ցանցը «ղիմադրկելու» մտավայտութեան պատճառով քաղաքական և տեխնիկական առարկաները սահմանեցին 2:1 հարաբերութեամբ, թեև այնտեղ ղգալիտերն ավելի մեծ հնարավորութիւններ կան տեխնիկական ղիտելիքներէ պրոպագանդը ծավալելու համար (ունկընդիրները ցանկանում են ավելի շատ ժամանակ հատկացնել տեխնիկական առարկաներին, նաև ուժեր կան բանվորներէ տեխնիկական հանջները բավարարելու համար): Կուսուլուսավորութեան ցանցի «ճա-կատադրի» հանդեպ նույնպիսի մտավայտութիւնն ունենալը հաճախ հան-

գում և այն բանին, փոր ձեռնարկութիւնում բավարար չափով չի խրախուսւում պրոֆտեխնիկական կրթութեան բազմազան ձևերի ծա-վալումը—ստացվում և այն, փոր մի տեսակ ապահովադրվում են՝ կուս-լուսավորութեան ցանցից դեպի կրթութեան մյուս տեսակները «չփող-նեքի» հանդեպ: Այնինչ տեխնիկական արշավի հաջող ծավալումը պահանջում և ստացիոնար և ժամանակավոր, դպրոցական և արտա-դպրոցական առավելագույն չափով ձկուն ու բազմազան ձևեր, փորոնք ընդունակ լինեն դիտովին ընդդրկելու դործարանային բանվորներէ, իտրհանտեսութիւններէ բանվորներէ ու կոլտնտեսականներէ ամբողջ մասսային, և միանգամայն սարդ և, փոր այդ դեպքում պետք և ամե-նախիստ կերպով պահպանվի կամավորութեան սկզբունքն ուսուցման այս կամ այն ձևն ընտրելու դործում: Ուստի անհրաժեշտ և վճարկա-նորեն հաղթահարել կուսուլուսավորութեան ցանցի «պահպանման» դրոշի տակ տեխնիկական արշավի թափը սահմանափակելու, տեխնիկական լուսավորութեան բազան սեղմելու փորձերը:

Մյուս կողմից, նույն հիմունքից, կուսուլուսավորութեան ցանցի և կրթութեան մյուս տեսակների արտաքին տարբերութից հաճախ բղխում և դործողութեան միանգամայն հակադրի դիժ: Այսպես, ԱՄՈ-ում, փոր տեղ մեծ հաջողութեամբ ծավալվեց տեխնիկական արշավը, փորտեղ ստեղծված են այնպիսի նոր ձևեր, փորոնք անկասկած ուշադրութեան են արժանի (որինակ՝ ցեխային դպրոց—տեխ ստորև), մենք հանդի-պում ենք կուսուլուսավորութեան ցանցի գրեթե լիակատար անհետաց-ման փաստին, իսկ կուսուլուսավորութեան ցանցից մնացած միավորներն ունկնդիրներէ տեխնիկական ղինավորումն իրենց խնդիրը չեն դարձ-նում:

Թե մեկ և թե մյուս սրահկտիկան հիմնված և այն բանի վրա, փոր նախորդ թույլ են տվել նույնացնելու կուսուլուսավորութեան և պրոֆ-տեխնիկական կրթութեան ցանցերը: Կարծում են, թե կուսուլուսավորու-թեան ցանցը յերեսով դեպի տեխնիկան դարձնելով, մենք դրանով իսկ նրան պրոֆտեխնիկական կրթութեան ցանց ենք դարձնում: Այս-տեղից յեզրակացութիւնն են անում—կա՞մ մենք պետք և պահպանենք կուսուլուսավորութեան ցանցը, և այն ժամանակ մենք այդտեղ պետք և բավականանանք միմիայն տեխնիկայի տիրապետման քաղաքական նշա-նակութեան պրոպագանդով և դրադվենք տեխնիկայի մարքսիստական պատմութեամբ, կա՞մ՝ յետեւ մենք կուսուլուսավորութեան ցանցում մտցնելու լինենք տեխնիկական առարկաներ, ապա մենք կարող ենք և պետք և վերացնենք կուսուլուսավորութեան ցանցը:

Այստեղ, սակայն, սխալ և հենց յեւակետը: Միայն և այն դրու-թիւնը, փոր իբրև թե կուսուլուսավորութեան ցանցը նրա ունկնդիրներէ տեխնիկական ղինավորման խնդիրներէ կողմը շուտ տալը նշանակում և պրոֆտեխնիկական ցանցի վերածել այն: Կուսուլուսավորութեան ցան-



ցի նպատակը արբեր և պրոֆտեստանտական լուսավորութեան ցանցի նպատակադրումից: Այստեղից արբեր և նաև այն տեսակ-կյունը, վերի ներքո այս յերկու ցանցերում կատարվում և ունենդիր-ները տեսնելիական զինավարումը: Պրոֆտեստանտական կրթութեան ցանցը նպատակ ունի պատրաստել ու վերապատրաստել այս կամ այն մասնադիտութունից: Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր դործի ճիշտ կազմակերպումն այստեղ պահանջում է պայքարել «իեշաբա-րութեան» դեմ, զարգացնել արտադրութեան բոլոր իրար կապված ճյուղերը գիտենալու և ըմբռնելու խնդիրը: Կուսարևութեան ցան-ցը, սակայն, վոչ իր նպատակադրումով, հետևաբար վոչ էլ իր բո-վանդակութեամբ չպետք է վոխարինի պրոֆտեստանտական կրթութեան սխտեմին: Տեսնելիայի պրոպագանդան այստեղ այնպես պետք է կառու-ցել, վորպեսզի նա ուղղված լինի՝ տվյալ արտադրութեան կողմից տվյալ ժամանակ առաջադրվող կոնկրետ մարտական խնդիրների լուծ-ման կողմը, այսպիսով իրեն յեխակետ ունենալով արտադրութեան ար-մատական ու վնասական հարցերը, վորոնք կազմում են այն սղակը, վո-րից պետք է բռնի տվյալ արտադրութեանը տվյալ մտվեցողում:

Կուսարևութեան ցանցը, վոր նպատակ ունի իր ունենդիրնե-րի քաղաքական մակարդակը բարձրացնելու միջոցով կոխել իսկական առաջավոր հարվածայիններ արտադրութեան մեջ և նրանցով լրացնել կուսակցութեան շարքերը, չի կարող հաջողութեամբ լուծել իր այդ խնդիրը, յեթե իր ունենդիրներին չդինի ձեռնարկութեան վոչ արտա-դրական պրոցեսն ըմբռնելու կարողութեամբ և սեփական արտադրական աշխատանքի հանդեպ ունենալիք խոհուն վերաբերմունքով: Այդ յեն-թաղում է այն վոր վորոչ խորութեամբ ու բազմակողմանիորեն պետք է ուսումնասիրել արտադրութեանը: Բայց այդ խորութեան և բազմա-կողմանիութեան համար այստեղ, կուսարևութեան ցանցում (տար-բերվելով, որինակ, տեսնելիական ԲՈՒՀ-ից) միջոց է հանդիսանում այն է, վոր բովանդակութեանն ու ծավալը պետք է անմիջապես յենթա-կա դարձվեն ձեռնարկութեան արտադրական պրոցեսի տվյալ վիճակի և ընթացքի կողմից առաջադրվող հանդուցային խնդիրներին:

Դոնբասի վորձը, վոր ներկայացվեց ԿԿ-ի պրոպագանդի սեկտո-րում մարտի 22—23-ին կայացած խորհրդակցութեանը, արդեն կոնկրետ նմուշներ է տալիս այն ճիշտ մոտեցման, վորը գոյութեան ունի կուսարևութեան ցանցում տեսնելիական պրոպագանդի ուղ-ղութեանն ու բովանդակութեանը վորոչելու գործում:

«Դոնբասում, —ասում էր խորհրդակցութեանը ընկ. Մորոզովը, —մի ամբողջ շարք լավագույն ռայոններում կուսարևութեան ցանցը, ճիշտ է՝ մեծապես թափ տալուց հետո, սկսում է առաջավոր գեր խաղալ տեսնելիայի տիրապետման պայքարում: Դոնբասի մի ամ-բողջ շարք գաղտնիներում մտցվեց Դոնբասի մեքենայացման հարցը:

Այստեղ, վոչ քաղաքական դիրքավորման գուզընթաց, ինչպես նաև Դոնբասի վերակառուցման ընդհանուր խնդիրների լուսաբանութեան զուգընթաց, մշակվեցին տեսնելիայի հարցերը—թե ինչ կերպ կազմա-կերպել վորիչ մեքենաների, մղիչ մուրձերի և կոնվեյերները աշխա-տանքը, առհասարակ մի ամբողջ շարք գործնական հարցեր, ինչպես նաև ուղադրութեանը սրվեց այն ուղղութեամբ, թե ինչպես Դոնբա-սում ավելի լավ կազմակերպել աշխատանքը և ոգտագործել այնտեղ յեղած մեխանիզմները: Այս հարցերը վոչ միայն նախնական գաղտնի-րում մտցվեցին, այլև նրանք բավականաչափ մշակման յենթարկվե-ցին:

Կուսարևութեան ցանցի առաջ մենք կարող ենք զնել տես-նելիական գրադիտութեան բարձրացման կամ անգրադիտութեան վե-րացման խնդիրը և վոչ թե վորոչ վորակավորում տալու խըն-դիրը: Այստեղ մենք դեմ առանք Դոնբասի համար չափա-զանց բնորոշ մի հանդամանքի: Դոնբասում այն խմբակներում, վոր-տեղ մշակվում էլին փորիչ մեքենաների հարցերը, այնտեղ մշակվում են նաև այլ հարցեր, ինչպես սրինակ՝ մաթեմատիկա, կոնվեյերային աշխատանք և այլն: Այնտեղ բրիգադներ կան, վորոնք աշխատում են միևնույն ցեխում, բայց տարբեր վորակավորում ունեն, և նրանք նչա-նակված են մեկ արտադրական բրիգադում ու բոլոր բանվորները միա-սին են մշակում այս հարցերը: Յեթե մենք խնդիր դնենք բարձրացնելու այս բանվորները վորակավորումը, ապա հարկավոր կլինի այդ խմ-բերը բաժանել ըստ վորոչակի վորակավորումների. իսկ յեթե մենք այս հարցին մոտենալու լինենք մյուս կողմից, ապա այդ բրիգադները կներկայացնեն մի միասնական ամբողջութուն: Դոնբասի այս սրինակ-ների հիման վրա մենք համոզվեցինք այն բանում, վոր ամենամոտիկ ժամանակում մենք արդյունաբերութեան մի ամբողջ շարք ճյուղերում պետք է փորձ կատարենք կուսարևութեան ցանցի միջոցով բարձ-րացնելու նեղ արտադրական վորակավորումը: Քաղաքական խնդիրներն ապահովում են արգիֆինայանի կատարումը: Տեսնելիայի գծով խըն-դիրը բոլոր մեխանիզմների անխափան նորմալ աշխատանքն ապահովե-լու մեջ է կայանում: Ասել է, մեխանիզմների աշխատանքի մասին ընդ-հանուր ծանոթութեան ունենալը՝ Դոնբասի լավայի տեսնելիական պրոցեսի հարցերն են, սլյուս աշխատանքի կազմակերպման հարցերը:

Յեւ ահա այս տեսանկյան տակ է, վոր մենք անհրաժեշտ ենք հա-մարում զնել տեսնելիայի հարցը կուսարևութեան ցանցում: Դո-մենյան վառարանների արտադրութեան փորձը նույն բանն է ցույց տալիս: Դա ամենից առաջ համառոտակի ծանոթանալն է տեսնելիական պրոցեսների հետ, ձեռնարկութեան արտադրութեան ռացիոնալացումն է: Այնուհետև էլի նույն հարցերն են—տվյալ ցեխի տեսնելիական պրոցեսները, սլյուս տվյալ ցեխի աշխատանքի կազմակերպման հար-



ցերը: Սա յե այն սկզբունքային դիրքավորումը, վորը տրվում է մեզ տեխնիկական հարցերի ծրագրերի համար»:

Այդպես մտանքան խնդրին նաև տրանսպորտում:

Այստեղ, ինչպես այդ հաղորդվեց «КОММ. РЕВОЛЮЦИЯ» ժուրնալի խմբագրութեան կից Մոսկվայի ձեռնարկութեանները խորհրդակցութեանում, տեխնիկական արշավի որչեպ հայտարարեցին «պայքարը նորագույն կատարելագործված մեքենայի համար, պայքարը առողջ շիզոչարմի համար: Կուրսկի յերկաթգծում խնդիր է դրված՝ Լյուբլինի դեպոն պետք է որինակելի դառնա ամբողջ գծում»... Հենց այս մարտական կոնկրետ խնդրի լուծումն է հետապնդում այստեղ տեխնիկական արշավը: Պատահական չէ, վոր հենց Դոնբասում և տրանսպորտումն է, վոր կուսուլուսավորութեան ցանցն ակտիվ կերպով ներգրավված է տեխնիկայի համար մղվող պայքարում, ընդվորում առանց փոխարինելու պրոֆտեխնիկական կրթութեան ցանցին: Խնդիրը նրանով է բացատրվում, վոր Դոնբասը և տրանսպորտը առաջադրել են իրենց ողակային արտադրական-տեխնիկական հարցերը, և այստեղ ինքը՝ կյանքը կուսուլուսավորութեան ցանցը միեց ճիշտ զնելու տեխնիկայի տիրապետման համար մղվող պայքարի հարցը: Տեխնիկական պրոպագանդի սպեցիֆիկ ընույթն ու ուղղութեանը, այն պրոպագանդի, վորն անհրաժեշտ է արժատացնել վորջ կուսուլուսավորութեան ցանցում, իրենց զգացնել են տալիս նաև հենց ունկնդիրները կողմից դրսեվորված պահանջներում: Իհրենք «եկեկորոպրովոդ» գործարանում կատարված անկետային հետազոտութեան հետևյալ տվյալները.

Ի՞նչ ԲԱՆԻ ՊԱՆԱՆՔ ԵՑԻՆ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

(Մոսկվայի «Եկեկորոպրովոդ» գործարանի անկետային հետազոտութեան արդյունքը)

1. Համագործարանային մասշտաբի կուսակալիվ (կուսկուլի ու գործարկուի անդամներ, անտեսավարներ):

1. Հնգամյակի կոնկրետ եկոնոմիկա (յեղնելով գործարանից):

2. Մեր արտադրութեան տեխնոլոգիան (արտադրական պրոցեսի ակնմայով):

3. Պլանավորման մեթոդները:

4. Ռացիոնալացման մեթոդները:

5. Աշխատանքի եկոնոմիկան:

6. Գծագրումների ընթերցանութեան:

7. Վիճակագրութեան տարրեր:

II Ցեխային ակտիվ

1. Մեր գործարանի հնգամյակը:

2. Մեր արտադրութեան տեխնոլոգիան և արտադրական պրոցեսը (եքսպերտիզա կազմակերպելով գործարանում):

3. Գործարանային պլանավորման մեթոդները:

4. Ռացիոնալացման մեթոդները և աշխատանքի կազմակերպումը:

5. Գործարանի կառուցվածքը:

6. Գծագրումների ընթերցանութեան:

7. Աշխարհագրական քարտեզի ընթերցանութեան:

III Շարքայիններ

1. Մեր գործարանի հնգամյակը:

2. Մեր ցեխի տեխնոլոգիական և արտադրական պրոցեսը: (Եքսպերտիզա կազմակերպելով գործարանում):

3. Գործարանային պլանավորման մեթոդները:

4. Ռացիոնալացման մեթոդները:

5. Մեր գործարանի կառուցվածքը:

6. Գծագրումների ընթերցանութեան:

7. Աշխարհագրական քարտեզի ընթերցանութեան:

Մանրութեան.—Այս խմբի ընկերների մի մասը արտահայտվեց ի նպատակով նեղ տեխնիկական ուսուցման՝ ցեխային պրակտիկայի կոնկրետ հարցերի զժով (իր մեքենայի ուսումնասիրութեանը, իր նյութերի տեխնոլոգիան և այլն):

Ընդհանուր առմամբ — ա) դիտելիքների նպատակամուղ—ողտար (և վոչ թե «առհասարակ») և ամբողջական ցիկլի բացահայտորեն դրսեվորվող պահանջ:

բ) Վորոչիչ մոմենտները—կուսակցականի դրութեանը ցեխում, վորպես մասսաների ղեկավարի ու կազմակերպչի՝ պայքարելու արդֆինսլանի, սոցմրցման, վորակի, ռացիոնալացման, պլանը ցեխին հասցնելու և այլ խնդիրները համար:

\* \* \*

Կուսուլուսավորութեան ցանցն ունկնդիրները տեխնիկական գինավորման խնդիրների կողմը շուտ տալու հարցը լոկ կուսուլուսավորութեան ցանցում արտադրական-տեխնիկական հարցեր մտցնելով չի սպառվում:

Մեր առաջ դրված է նաև մարքս-լենինյան թեորիայի և արտադրական-տեխնիկական հարցերի ներքին շաղկապման խնդիրը:

«Տեխնիկայի բնագավառը,—կարդում ենք փետրվարի 1-ի «Պրավդա»-յում,— տեխնիկայի ցիտութեան և տեխնիկական քաղաքականութեան բնագավառը դասակարգային պայքարի մի ասպարեզ է, վորտեղ սոցիալիզմ կառուցող պրոլետարիատը պետք է հաղթահարի կապիտալիզմի և նրա գործակալների կատաղի դիմադրութեանը»: Խնդրի այս կողմի մասին մենք վերևում արդեն մանրամասն խոսեցինք: Պարզ է, վոր տեխնիկայի բնագավառում բուրժուական հարցադրումների դեմ մեր կողմից մղվող պայքարում, կուսուլուսավորութեան ցանցը պետ է



դառնալ մարքս-լենինիս մեքոպոլիտիկայի կիրառող տեխնիկայի և արտիստիկական հարաբերակցութեան ասպարիզում, պետք է իրեն խնդիր: առաջադրի կուսակցութեան այն հարաբերակցութեան պրոպագանդը, վորնա վարում է տեխնիկայի ասպարիզում:

ԿՈՒՍՏԱՆԻ ԿՈՒՍՏԱՆԻ ԿՈՒՍՏԱՆԻ ԿՈՒՍՏԱՆԻ ԿՈՒՍՏԱՆԻ

Կուսուցողականության առաջ դրված նոր խնդիրները նոր ձևով են գնում պեկավարման հարցը: Արտադրութունից կտրված պրոպագանդիստի հին տիպը ամենևին չի կարող բավարարել կուսակցության ներկա պահանջները: Պրոպագանդիստին առաջադրվող պահանջները ներկայումս այնպիսին են, վոր նա պետք է գինված լինի թե՛ կուսակցականապես-քաղաքականապես և թե՛ տեխնիկապես: Հարկավոր չի այդ սպասել «գրքի» պրոպագանդիստից: Հարկվ թե պահանջվի այդ առանձնապես սպասուցել, յեթե նկատի ունենանք, վոր մինչև այժմ էլ շատ հազվադեպ գեղարվեստ է հաջողվել դարձնել պրոպագանդիստի աշխատանքը մոտեցնել ձեռնարկութեան գործնական տնտեսական խնդիրներին: Միանգամայն ակնհայտ է, վոր այստեղ մեր միակ հենարանը կարող է լինել միայն բանվոր պրոպագանդիստը: Ուստի անհրաժեշտ է այժմ առանձին ուղղութեամբ և մեծ լրջութեամբ դնել բանվոր պրոպագանդիստի հարցը: Կարելի յե և պետք է հույս ունենալ, վոր կուսուցողականության ցանցի աշխատանքը նոր պայմաններում զգալիորեն կհեղացնի բանվոր պրոպագանդիստների կազմերը կազմակերպելու խնդիրը, յեթե միայն կուսուցողականության ցանցը կարողանա հարկ յեղածին պես շուտ դալ դեպի ձեռնարկութեան արտադրական-տեխնիկական կարիքները և զգալի եֆեկտ տալ ձեռնարկութեան տնտեսական շինարարութեան գործում: Դա կատարել գործարանի կուսակցական ու տնտեսական կազմակերպութեաններին պատշաճ ձևով դասատել կուսուցողականության ցանցի դերը և հոգ տանելու, վորպեսզի բանվոր պրոպագանդիստների անհրաժեշտ կազմեր ստեղծվեն: Իսկ խոսել «գրքի» պրոպագանդիստների մասին, վորպես այնպիսի կազմերի, վոր ընդունակ են ասպարիզել պատշաճ ղեկավարութեանը թե կուսուցողականության և թե տեխնիկական պրոպագանդի ասպարիզում, միանգամայն ցնորակա է, և մենք այստեղ, պարզ բան է, չենք կարող գործը գլուխ բերել՝ առանց կուսուցողականության ցանցի աշխատանքում ներգրավելու գործարանի ինժեներ-տեխնիկական ուժերին:

ՄԱՐՔՍԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Յեվո մի կարևոր հարց, վոր այսօր առաջադրվում է մեզ. դա ասումնական պլանների և ծրագրերի հարցն է: Կուսուցողականության ցանցի ծրագրերը ձեռնարկութեան արտադրական խնդիրների և տեխ-

նիկայի ուսումնասիրութեան հետ շաղկապել անհնարին է առանց ծրագրերն արտադրութեան առանձին տեսակներին ու ճյուղերին համապատասխան շերտավարելու: Անհրաժեշտ է ծրագրային աշխատանքի վրձնական ապակենտրոնացում կատարել, այդ աշխատանքը լայն չափով տեղերի նախաձեռնութեանը թողնելով: Ինքնըստինքյան հասկանալի յե՞ դրանով մենք չենք վերացնում այն խնդիրը, վոր կենտրոնում պետք է ստեղծվեն որինակելի տիպային ծրագրեր՝ արտադրութեան կարևորագույն ճյուղերին ու տեսակներին համապատասխան: Ծանրութեան կենտրոնը, սակայն, պետք է փոխադրել տեղական կազմակերպութեաններին ծրագրային աշխատանքի նկատմամբ կենտրոնի կոնկրետ ոպերատիվ ղեկավարութեան մեջ:

Գ. ԳԱԿ

«ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒՄ» ԼՈՋՈՒՆԳԸ ՅԵՎ ԿՈՒՍՊՐՈՊԱՇԽԱՆՈՒԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Տեխնիկան վերակառուցման շրջանում վեճում է ամեն ինչ» (ՍՍՍՀԻՆ):

Ծավալուն սոցիալիստական արշավի շղթայում հերթական ողակ է հանդիսանում տեխնիկային տիրապետելու խնդիրը:

«Տեխնիկային տիրապետելու» լողունըն առաջատար, ամենազբաղապար լողունըն է սոցիալիստական շինարարութեան ներկա շրջանում: Նե՞ղ-ի անցած շրջանը մի շրջան էր, յերբ պրոլետարիատը դասակարգային կատարի պայքարի պայմաններում վերականգնելով և վերակառուցելով ժողովրդական տնտեսութեանը սոցիալիստական հիմունքներով, դրանով իսկ հնարավորութեան ստեղծեց ամբողջ լայնութեամբ դնելու տեխնիկային տիրապետելու խնդիրը: Սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը հնգամյակի յերբորդ, վճռական տարում ավարտելու գործը պարտավորեցնում է վերացնել մեր տեխնիկական հետամնացութեանը:

Պրոլետարիատի առաջ ծառայած է արտասահմանյան տեխնիկային տիրապետելու ամենահրատապ խնդիրը, կապիտալիստական տեխնիկայի բարձրագույն նվաճումները միացնելով աշխատանքի սոցիալիստական կազմակերպման հետ և անչափ առաջ տանելով տեխնիկական պրոցեսը:

Պրոլետարական գյուտարարական մտքի հետագա ուժեղ զարգացումը, նոր հայտարարումներն ու դյուտերը պահանջում են լայն չափով տարածել տեխնիկական գիտելիքները, ընդարձակել բանվոր դասակարգի տեխնիկական հորիզոնը:



Գործադրիչութեան վերացումը, վորակյալ արտադրական կադրերի անբարձրագույնը յերկրի վողջ ժողովրդական տնտեսութեան մեջ, նոր, չսովորած բանվորներէ հոսանքը դեպի ձեռնարկութեանները, պահանջ են առաջադրում այս նոր բանվորներին սկզբնական շրջանում տալ գոնե տարրական տեխնիկական գիտելիքներ, նրանց ծանոթացնել արտադրութեան հետ, այն աշխատանքի հետ, վորը նրանք պետք է կատարեն այն մեքենաների ու մեխանիզմների վրա, վորոնց առաջ նրանք պետք է կանգնեն:

Ժողովրդական տնտեսութեան անձան համար նշված տեմպերը պահանջում են տիրապետել արտադրական պրոցեսին, նրա արտադրական ֆինանսական-տնտեսական կողմին՝ իջեցնելու համար ինքնարժեքը, լավացնելու համար արտադրանքի վորակը, բարձրացնելու համար աշխատանքի արտադրողականութեանը:

Ահա թե ինչու, հաղթականորեն լուծելով մի շարք խոշոր քաղաքական և տնտեսական խնդիրներ, կուսակցութեանը սոցիալիստական ժողտնտեսութեան տեմպերի հետագա արագացման համար, վորպէս հերթական քաղաքական լողունգ՝ առաջադրում է տեխնիկային տիրապետելու խնդիրը:

«Մենք լուծեցինք մի շարք խոշորագույն խնդիրներ: Մենք տապալեցինք կապիտալիզմը: Մենք վերցրինք իշխանութեանը: Մենք կառուցում ենք ամենախոշոր սոցիալիստական ինդուստրիան: Մենք միջակին շուտ ավելնք դեպի կոլեկտիվացման ուղին: Շինարարութեան տեսակետից ամենակարևորը մենք արել ենք: Մեզ քիչ բան է մնացել—ուսումնասիրել գիտութեանը, տիրապետել տեխնիկային: Յեւ վերջ մենք այդ կանենք, մենք այնպիսի տեմպեր կունենանք, վորոնց մասին ներկայումս յերազել անգամ չենք համարձակվում: Յեւ մենք այդ կանենք, յեթե հարկ յեղածին պէս կամենանք»:

Տեխնիկային տիրապետելու պրոբլեմը դասակարգային պայքարի պրոբլեմն է: Դասակարգային թշնամին, կատաղի դիմադրութեան ցույց տալով սոցիալիստական արշավին, բոլոր հնարավոր միջոցներով մեզ խանգարելու յե տեխնիկային տիրապետելու, գիտութեանը տիրապետելու գործում: Դասակարգային պայքարի ձեւերից մեկն է հանդիսանում պայքարը գիտութեան ֆրոնտում, վորտեղ թշնամին ճգնում է պահպանել իր դիրքերը և իր թեորիաներով իդեոլոգիայէն ազդել պրոլետարիատի վրա, նրա մեջ սոցիալիզմի համար խորթ տրամադրութեաններ առաջացնել:

Թշնամու ճարտարութեանը, պայքարի նրա յուրահատուկ պրոբլեմները պարտավորեցնում են կուսակցութեան յուրաքանչյուր անդամին և յուրաքանչյուր պրոլետարին սովորել ճանաչելու դասակարգային թշնամու և նրա գործակալների խորամանկութեանները, բաց անելու և մերկացնելու նրա գործողութեանները:

Դա պարտավորեցնում է նաև տիրապետել տեխնիկային, արտադրութեան զիտութեանը, այն ծառայեցնել սոցիալիստական շինարարութեանը:

Ահա թե ինչու վողջ կուսակցութեան, բոլոր բանվորների և կուտնտեսականների խնդիրն է շրջադարձ կատարել դեպի առաջնորդի առաջադրած լողունգը: Ահա թե ինչու մեր կուսակցական և հասարակական ամբողջ սխտեմը պետք է ձեռնարկի այս խնդրի լուծմանը: Առանձնապէս մեծ տեղ, առանձնապէս զգալի տեսակարար կշիռ ունի կուլտուր-պրոպագանդիստական աշխատանքը:

Տեխնիկային տիրապետել, սոցիալիստական հիմունքներով այդ տեխնիկական վերակառուցել կարող է միայն գրագետ, դասակարգայնորոն կուլտուրական բանվորը, իսկ դա նշանակում է այն, վոր անհրաժեշտ է ուժեղացնել բանվորների և կուտնտեսականների կուլտուր-քաղաքական դաստիարակութեանը, բոլոր հատուկ տեխնիկական, տնտեսական, ֆինանսական և այլ առարկաները տողորել մարքս-լենինյան մեթոդոլոգիայով, խորացնել մարքս-լենինյան թեորիայի ուսումնասիրութեանը, մասնավանդ կուսակալի մաս: Այս ամենը խոշոր պարտականութեաններ է դնում կուլտուր-պրոպագանդիստանքի վրա և պահանջում է առավելագույն ուշադրութեան նվիրել մեր պայքարի այս ճակատամասին:

Առանձնապէս հարկավոր է ընդգծել, վոր անհրաժեշտ է լայն պրոպագանդի առարկա դարձնել կուսակցութեան տեխնիկական քաղաքականութեանը, այդ ասպարիզում դրված խնդիրները, այդ հարցում կուսակցութեան ունեցած գիծը, մասսաներին այդ խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու և պրոլետարիատի բոլոր ստեղծագործական ընդունակութեանները նրանց լուծման կողմն ուղղելու համար:

Խորապէս սխալ է կարծել, վոր բոլորն արդեն գիտակցել են տեխնիկային տիրապետելու անհրաժեշտութեանը, վոր մասսաներին մոբիլիզացիայի յեթարկելու գործն արդեն մեջտեղից հանվում է: Անհրաժեշտ է պայքարել նման տրամադրութեանների դեմ, վորոնք սոսկ վրնաս կարող են բերել և դեմոբիլիզացիոն տրամադրութեանների արմատացմանը նպաստել: կուսակցութեան լողունգը չենք արձագանք գտալ բանվոր դասակարգի ներսում, պրոլետարիատն ընդառաջում է նրան և իրագործում է այն: Այս խնդրում նորից յերեան յեկալ զեկավարելու, մասսաներին հասկանալի ու մոտիկ լողունգներ առաջադրելու, նրանց իր յետևից տանելու կարողութեանը, վոր ունի կուսակցութեանը: Սակայն յուրաքանչյուր նոր լողունգի առաջադրումը, լողունգ, վոր հնի համեմատութեամբ մի քայլ է դեպի առաջ, հենց նրա համար, վոր նա նոր, առաջավոր լողունգ է ներկա շրջանի համար, այդպիսի լողունգի առաջադրումը պահանջում է ուժեղ աշխատանք կատարել յուրաքանչյուր կուսակցականի, յուրաքանչյուր բանվորի, յուրաքան-



չյուր կորոնտեսականի դիտակցութեան մեջ արմատացնելու ուղղու-  
թեամբ: Կողունը անխորտակելի դործոն ուժի կլեբածի, յեթե նա  
միլիոնների դործը դառնա, ուստի տեխնիկային տիրապետելու խնդիրը  
կլուծվի այն ժամանակ, յերբ տեխնիկային տիրապետելու բուն ցան-  
կութեանը կհամակրի վողջ բանվոր դասակարգին և վողջ կորոնտեսա-  
կան դյուզացիութեանը, իսկ այդ յենթադրում և վողջ բանվոր դասա-  
կարգի և կորոնտեսական դյուզացիութեան քաղաքական հասունութեան  
հետագա աճումը, դեպի արտադրութեանը հոսող միլիոնավոր նոր  
բանվորների վերադաստիարակումը, վողջ կուլտուր-սլոտադանդիս-  
տական աշխատանքին լայն թափ հաղորդելը:

Աճում և ընդարձակում և մասսաների այն արշավը, վոր նրանք  
կուսակցութեան ղեկավարութեամբ սկսել են տեխնիկայի համար: Ինչ-  
պես մեր վողջ աշխատանքում, այստեղ ևս անհրաժեշտ և ինքնահոսր  
ոպորտունիտետական հույսերին հակադրել կազմակերպչական մեծ աշ-  
խատանք՝ առավելագույն քանակութեամբ բանվորներ տեխնոլոգի-  
ամբ ընդգրկելու, բանվորների և կորոնտեսականների տեխնիկական  
հորիզոնի ընդլայնման համար միջոցառումների մի ամբողջ սխտեմ  
ծավալելու, ախտիվի տեխնիկական խորացրած ուսուցման համար պայ-  
մաններ ստեղծելու ուղղութեամբ:

Այն հիմնական պահանջները, վոր հարկավոր և առաջադրել տեխնի-  
կայի տիրապետման ուղղութեամբ տարվող ամբողջ աշխատանքին, հե-  
տեվյալներն են—բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների ընդ-  
գրկումը գուրդողել բոլոր կազմակերպչական ձևերի ըստ ամենայնի  
մեծ միտումութեան հետ, նրանց հարմարեցնել բանվորների տարբեր  
խավերին, շերտավորված մտեցում ունենալ բանվորական կադրային  
և նոր խավերի, չափահասների և յերիտասարդների հանդեպ, հաշվի  
առնել վարակավորումը, գիտելիքները և այլն:

Անհրաժեշտ և նույնպես վարձակի նպատակավորում անցկացնել  
բոլոր միջոցառումների մեջ, ընդհանուր տեխնիկական գրագիտութեանը  
բարձրացնելու խնդրին գուրդնաց՝ միանգամայն կոնկրետ խնդիրներ  
առաջադրել վարակավորման բարձրացման, վարչա-տեխնիկական կադ-  
րերի պատրաստման ուղղութեամբ և այլն:

Պետք է հշակել, գործնականում փորձարկել և լայն չափով ծա-  
վալել այն արդեն նշված տեղեկները, վոր մենք նկատում ենք տնայնա-  
գործական յեղանակներից, կոնկրետ նպատակների այլադանութեան-  
նից դեպի ուսման բոլոր ձևերն ու տեսակներն ընդգրկող համաչափ  
ու ամբողջական սխտեմի անցնելու ուղղութեամբ ուսումնական միա-  
վորներ կազմակերպելու գործում: Տեխնիկական ուսուցում կազմակեր-  
պելու գործում առաջավոր գործարանների (ՍՄՈ, Դինամո, Էլեկտրո-  
գավող և այլն.) տված որինսկն ամենաուշադիր ուսումնասիրութեան և

արժանի: Ուսուցման այն կործինատներում, վորոնք ստեղծվում են  
ձեռնարկութեաններում, յուրաքանչյուր ստորին ողակ մի ստորիճան  
և հաջորդին անցնելու համար, միաժամանակ տալով ամբողջական  
կրթութեան: Յեթում այդպիսի ստաջին ստորիճան են հանդիսանում  
այսպես կոչված փորակավորման խմբերը, վորտեղ ուսում չառած, ա-  
նորակ բանվորը, սեղործը կամ արտադրութեան նոր մտած բանվորը  
ստանում են գիտելիքների հիմնական տարրերը, դադարահաների վրա  
աշխատելու համար անհրաժեշտ գործնական ունակութեանները, ար-  
տադրութեան ներածական կուրսը: Այս ողակի առաջ խնդիր և դրված  
նաև նախնական քաղաքական դաստիարակութեան տալ բանվոր դասա-  
կարգի նոր կազմերին, նրանց ծանոթացնել կուսակցութեան գլխավոր  
գծի և այն խնդիրներին հետ, վոր ունի յուրաքանչյուր բանվոր սո-  
ցիալիստական ձեռնարկութեանում:

Յերկրորդ ստորիճանն են հանդիսանում փորակավորման բարձրաց-  
ման խմբերը, վորոնք կազմվում են ցեխի վորակավոր բանվորների կո-  
րիզից: Այս խմբերում հիմնական ողակն և հանդիսանում հարվածային  
բրիգադը: Հարվածային բրիգադը—արտադրութեան այդ շարժիչը—  
պետք է զինված լինի տեխնիկայով, և հարվածայինի որը,—յերբ բրի-  
գադը քննարկում և իր աշխատանքի-ընթացքը, իր պլանը, իր առաջ  
ձուռացած խնդիրները,—պետք է միաժամանակ նաև տեխնիկական ու-  
սուցման որ լինի:

Ուսուցման յերրորդ ստորիճանը ցեխում՝ ստորին վարչա-տեխնի-  
կական անձնակազմի պատրաստման խմբերն են, իսկ նրանց յետևից  
գտլիս են համադրածարանային ուսումնական միավորները, վորոնք  
նպատակ ունեն, ցեխային վարչա-տեխնիկական անձնակազմ պատրաս-  
տել,—տեխնիկումը, տեխնիկական ԲՈՒՀ-ը:

Մարքո-լենինյան մեթոդոլոգիայով սողորել բոլոր մասնագիտա-  
կան դիսցիպլինների դասավանդումը, ղեկավարել քաղաքական դիտ-  
ցիվլինների դասավանդումը, կուսդաստիարակչական աշխատանքը  
դնել ուսուցման վողջ սխտեմում ձեռնարկութեան ներսում—այդպիսին  
են կուլտուրոպ-աշխատանքի խնդիրները:

Անսպառ են այն ձևերն ու մեթոդները, այն լծակները, վոր պետք  
է դործի դնել բանվոր դասակարգի տեխնիկական հորիզոնն ընդարձա-  
կելու, մասսաների քաղաքական դիտակցութեանը բարձրացնելու հա-  
մար:

Ակուսրը պետք է հենակետային բաղաներից մեկը լինի այս աշխա-  
տանքում, նա պետք է վճռական շրջադարձ կատարի դեպի այս խնդ-  
րերը: Արտադրական-տեխնիկական ցուցահանդեսների կազմակեր-  
պում, դասախոսութեանների և գրույցների կազմակերպում, յուրա-  
քանչյուր բանվորի ծանոթացում աշխատանքի բոլոր պրոցեսների հետ



Ժողովածու պրոպագանդիստների համար



արտադրութեան, դասախոսութեանները կազմակերպում անտեսա-  
կան աշխարհագրութեան, արդիֆինպլանի և այլ թեմաների շուրջը,  
տեխնիկական կոնսուլտացիաների կազմակերպում, տեխնիկայի հա-  
մար մղվող պայքարի լավադույն որինակների ցուցադրում—ահա ամե-  
նեվին վոչ-լրիվ թվարկումն այն ձևերի, վորոնք պետք է մտնեն ակում-  
բի աշխատանքի ակտիվը:

Կարմիր ակումբները նույնպես պետք է իրենց աշխատանքի պլանի  
մեջ մտցնեն տեխնիկայի համար պայքարելու հարցերը, տեխնիկայի  
ուսումնասիրութեանը:

Այլ խնդիրը դրված է նաև կուլտաշխատանքի բոլոր տեսակներին  
առաջ: Կուլտեստաֆետայի բոլոր մարչուտներին մեջ անհրաժեշտ է  
մտցնել տեխնիկական կրթութեան հարցերը: Կիևում պետք է դառնա  
վերակալորման բարձրացման, տեխնիկական գիտելիքների ավելաց-  
ման ամբողջ աշխատանքի բաղկացուցիչ մասը: Արտադրական Ֆիլմերը  
դասընթացներին, քաղաքացիներ և այլ ուսումնական միավորներին  
հասցնելը հասունացած պահանջ է: Տեխնիկական դասախոսութեան-  
ներն ու գրույցները ուղղիտով հաղորդելու մշակված պլանը, ուղիտ-  
արտադրական դասընթացները պետք է ունենան և ունենալու յեն լայն  
լսարան:

Տեխնիկական ուսուցման լայն թափի անհրաժեշտ մեծ խնդիր է  
դրվում գրադարանների վրա՝ տեխնիկայի համար մարանչող միլիոնա-  
վոր մասսաներին գրականութեամբ սղասարկելու գործում:

Բոլոր գեղարվեստական ձևերը նույնպես պետք է մասնակցեն մաս-  
սաների տեխնիկական գինավորման գործին, ոգտադործելով իրենց  
արամադրութեան տակ յեղած գեղարվեստական ներգործութեան բոլոր  
միջոցներն ու մեթոդները և մշակելով նորերը:

Դպրոցի ուժերն սրվիտեխնիկացիան, անգրադիտութեան վերացման  
դպրոցի սրվիտեխնիկացիան վոզլ խորհրդային հասարակայնութեան  
ամենահրատապ խնդիրն է:

Հսկայական աշխատանք պետք է կատարի մամուլը: Տեխնիկայի  
համար ծավալված արշավի կուլեկտիվ ագիտատորն ու կազմակերպիչը  
լինելով, մամուլը բացառիկ դեր է խաղում մասսաներին տեխնիկայի  
նվաճումների հետ ծանոթանալու գործում: Տեխնիկայի եջ, փորձի  
փոխանակում, ուսցիտանալիցատորական առաջարկների ստուգատես ու  
քննարկում, տեխնիկոնսուլտացիաներ, տեխնիկական տեղեկագրեր—այս  
ամենը պետք է ոգտադործել կուսակցութեան լոզունգն իրագործելու  
համար:

Իրագործելով այդ բոլոր խնդիրները, շրջադարձ կատարելով դե-  
պի «տեխնիկային տիրապետելու» լոզունգը, կուլտպրոպագանդանքը  
կնալաստի կուսակցութեան լոզունգը մասսաների մեջ առաջ մղելու:

մասսաներին կուսակցութեան դիտավոր դժի շուրջը մոբիլիզացիայի  
յենթարկելու և այդ լոզունգը գործնականորեն կյանքում կիրառելու  
գործին:

Վ. ԶեՊՐԱԿՈՎ

### ՄԻՈՐՅԱ ԿՈՒՍԳՊՐՈՑ

«Աշխատանքը դպրոցներում և խմբակներում պետք է այնպես կա-  
ուցել, վորպեսզի դպրոցներն ու խմբակներն իրենց ուսումնական աշ-  
խատանքին դուզենթաց, իրական ոգնութեան ցույց տան կուսակազմա-  
կերպութեաններին՝ նրանց խնդիրների կատարման գործում: Այս շար-  
կապումը սոցիալիստական շինարարութեան գործնական խնդիրներին  
հետ, պետք է հանդիսանա կուսլուսավորութեան վոզլ ցանցի աշխատան-  
քի կարևորագույն սկզբունքներից մեկը» (ՀամԿ(բ) Կ ԿԿ-ի վորոչու-  
մից):

ԿԿ-ի վորոչումը մեկ անգամ ևս կրկնում և ընդգծում է այն խոշոր  
նշանակութեանը, վոր ունի կուսլուսավորութեան ցանցի համար թեո-  
քիայի ու պրակտիկայի շաղկապումը, վորպես սոցիալիստական շինա-  
արարութեան կոնկրետ խնդիրների իրագործման համար մասսաներին մո-  
բիլիզացիայի յենթարկելու և կազմակերպելու միջոց: Բանվորական  
բամենային մասսաների ամենորյա կոնկրետ արտադրական շահերը,  
հասկոնայի և առորյա որինակների հիման վրա ընդհանրացնելով, ուն-  
կնդիրների ուշադրութեանը դրավում են դեպի տեսական հարցերը:

Միորյա կուսդպրոցը որվա կարևորագույն հարցերը մասսաներին  
արագ փոխանցելու մի ճիւղն ձև է, մասսայական պրոպագանդի, մաս-  
սայական ներգործութեան ձև, բանվորական նոր ջոկատներ կուսլուսա-  
վորութեան ցանցում ներդրալելու և ամբացնելու միջոց, իրա-  
կան աջակցութեան կուսակազմակերպութեաններին: Գործնական ար-  
ձագանգը, վոր տալիս են պրոպագանդի այս ձևին մասսաները,  
հանդիսանում են շարթորյակները, բանվորական առաջարկների հե-  
ղեղը, կոնտրակտացիան, հարվածայնութեանը, կուսակցութեան շար-  
քերն անցնելը և այլն:

Մտակվայի սրբիտարական ուսյոնի կուսկոմիտեն նոյեմբերի 17-ը  
և 22-ը հայտարարեց՝ «Սպորտունիզմի դեմ մղվող պայքարը ներկա  
շրջանում» թեման կուսլուսավորութեան և բանվորական կրթութեան  
վոզլ ցանցում մասսայական մշակման յենթարկելու որեր: Դրա հետ  
մեկտեղ, նույն թեմայի շուրջը միորյա կուսդպրոցներ կազմակերպ-  
վեցին նաև ցեխերում, հարվածային բրիգադներում, խմբերում: Կուս-  
կումը վաղորդ՝ հիմնականում բավարար՝ նախապատրաստական աշ-  
խատանք կատարեց, միորյակի բոլոր հարցերը կուսակտիվի ժողովում



դնելով: Նշանակված որևէ ին թեմայի մշակման դործում ընդգրկեց մոտ 30,000 բանվոր: Սրա հետ մեկտեղ պետք է նշել, վոր մի քանի խորհրդարանային բջիջներ, որինակ՝ ԺՅԳՍ-ի և Աշխատանքի պալատի բջիջներն այս կարևորագույն թեմայի մշակման դործը չկազմակերպեցին: Այսպիսով, այդ բջիջներն այս կարևոր հարցում կարճատևություն հաստատեցին: Այդ առավել ևս կարևոր է նշել այն պատճառով, վոր, ընդհանրապես ասած, կուսուցակորույթյան ցանցն այս բջիջներում չափաքանց թույլ է ծավալված: Առանձին ձեռնարկություններ («կոտլոսպաս», բեռնաբարձ սարքավորումների դործարան) չկարողացան կազմակերպել այս թեմայի մշակումը, այդ աշխատանքը սնորոշ ժամանակով հետաձգելով:

Նոյեմբերի 17-ին և 22-ին կուսուցակորույթյան ցանցի ընդհանուր հաճախունակությունը հասավ 85-90 %-ի: Միորյա դպրոցն ընդգրկեց «ձնչված դաղի» դործարանում բանվորների 70 %-ը, վաղոնների նորոգման դործարանում՝ մոտ 600 բանվոր և այլն:

Բանվորները յեյույթները միջով կարմիր թելով անցնում էր կուսակցության դիտավոր դժի ճշտություն ընդունումը, տատանումները և թեքումների դեմ անհատ պայքար մղելու անհրաժեշտությունը: Առանձին անձիչա յեյույթներին վճռական հակահարված տրվեց: Միորյա կուսուցակորույթը նշում է բանվորների ընդհանուր առմամբ առողջ քաղաքական տրամադրությունները: Այդ մասնավորապես հաստատում են միորյա պարագրույթներում բանվորների ունեցած յեյույթներից բերված հետևյալ քաղվածքները:

«Այ ուկրոնիսաները կտրվել են արտադրությունից, մասսաներից, ուստի չեն հավատում բանվոր դասակարգի ուժերին ու ընդունակություններին և այն տեմպերին, վոր բանվոր դասակարգը կիրառելի չէ համարում և դործնականում դերակատարում է» (անկուսակցական բանվորուհի «Չայեռադվեսկա» դործարանից):

«Մենք պետք է աջ-ձախ» բլոկը դեն չպրահենք մեր հանսպարհից, մենք ժամանակ չունենք նրանով դրողվելու» (Դանելին, «Ելեկարուպրովոդ» դործարանից):

«Ըստ Միլեցովի՝ մեզ մոտ ճեղքվածք կա, այնինչ իրականությունում մեջ մենք ունենք անտեսություն վերելք և աճում, այդ նշանակում է, վոր նա կտրվել է մասսաներից» («Մոսկվոչվեյ» № 8 դործարանից):

Առանձին բանվորների համար պարզ չէր, թե ինչու աջ թեքումը դիտավոր վասնդ է հանդիսանում ներկա շրջանում. նրանք իրար էյին խառնում աջ և ձախ թեքումները (վաղոնների նորոգման դործարան): Այդ ընկերները պրոպագանդիսաներից սպառիչ բացատրություններ ստացան այն հարցերի առթիվ, թե ինչու աջ թեքման և վնասատացան այն հարցերի առթիվ, թե ինչու աջ թեքման և վնասատարություն ուրեկտիվ կապը (Բոյենակի կոմբինատ), ինչու աջ թեքման

2. «ձախերի» միացումը ինդուստրացման և նրա տեմպերի խնդրում («Կլեյտուկ» դործարան):

Միորյա կուսուցակորույթը, վոր անցկայվեց անբնագրույթի գրույցի պայմաններում, նպատակ ունի մեծ ակտիվություն յերևան հանելու գրված հարցերի ըննարկման դործում, յերևան հանեց բանվորների յարձք շահագրգռությունը քաղաքական հարցերի նկատմամբ: Մշակումն ավարտելուց հետո բանվորները խնդրեցին հաճախ այդպիսի դրույցներ կազմակերպել («Ինամո», «Մուրճ և Մանդաղ» և այլն):

Միորյակի առթիվ կուսակցություն մեջ մտնելու դեպքեր յեղան: «Մուրճ և Մանդաղ» դործարանի շինարարական ցեխի բանվորները գիտում ավին կուսակցություն մեջ մտնելու համար, նույնը նաև վաղոնների նորոգման դործարանում և «Ելեկարուպրովոդում»: Միորյակը յուշոր դեր յաղաց նաև բանվորներին կուսուցակորույթյան ցանցում հավաքողելու («Մոսկվոչվեյ» № 15, «Մարտի 8-ի» անվան դործարան, «Ձնչված դաղի» դործարան և այլն), նոր յամբակներ կազմակերպելու տեսակետից: «Կլեյտուկ» դործարանում դրույցից հետո 12 անկուսակցական բանվորներ գրվեցին կուսուցակորույթում պարապելու:

Կուսակոմի քարտուղարությունը միանգամայն ճիշտ նշում է «միորյա կուսուցակորույթի» պատիարակչական յուշոր նշանակությունը, կուսուցակորույթի, վորոնք դրական արդյունքներ են տալիս և կուսակազմակերպությունների ուշադրությունը սրում են կուսուցակորույթյան այս ձևի ուղղությունը:

Այս ձևի կիրառումը վոչ մի դեպքում չպետք է նսեմացնի սխառնակի ուսուցման նշանակությունը: Միորյակը պետք է ոժանդակի բանվորական լայն յավերին կուսացանցում ներգրավելու, և վոր առանձնապես կարևոր է, նրանց ամբացնելու գործին: Կարևոր է, վոր մասնավորապես ընթացիկ քաղաքականություն յամբակները միորյակից ընդորինակեն նրա ճկունությունը, տնտեսական-քաղաքական հարցերի հետ շղկապելու արագությունը, վորպեսզի չգառնան «անցած» քաղաքականության յամբակներ, այսինքն՝ չգրադվեն վաղուց ծանոթ հարցերը ծամձմելով: Այսոր, առավել քան յերբեք, անթույլատրելի չէ, վոր կուսուցակորույթյան ցանցը յետ մնա կուսաշխատանքի ընդհանուր տեմպերից: Բոյոր միջոցները, ամբողջ յեռանդը պետք է նվիրել կուսուցակորույթյան ցանցի աշխատանքի տեմպերի արագացմանը:

Վ. ՅՈՄԻՆԱ



Ներկայումս կյանքն արդեն ամբողջովին լուծել և պրոպսեմինարներին ձևի նպատակահարմարութեան հարցը: Պրոպսեմինարներն անպայման անհրաժեշտ են պրոպագանդիստների բոլոր կասեզորիաների և մասնավորապես բանվոր պրոպագանդիստների համար: Ներկայումս վեճը այդ սեմինարների աշխատանքի և բովանդակութեան մասին և քիսյն:

Մենք կամենում ենք բաժանել բանվոր պրոպագանդիստների սեմինարի ղեկավարման աշխատանքի մեր բազմամյա փորձը:

Բանվոր պրոպագանդիստների պրոպսեմինարի աշխատանքի բովանդակութունը, ձևերն ու մեթոդները վորոշվում են, ամենից առաջ, նրա մասնակիցների կազմով: Վորպես կանոն, բանվոր պրոպագանդիստները կուսակցական և արտադրական աշխատանքի գղափի փորձունեն, բայց նրանց մոտ, հատկապես սկզբնական շրջանում, բավարարչափով տեսական և գործնական պատրաստութունը բացակայում է: Այսպիսով, պրոպսեմինարի խնդիրն է՝ բարձրացնել նրանց տեսական պատրաստականութունը և այնպիսի մեթոդական ուսուցում տալ, փոր բանվոր պրոպագանդիստները կարողանան հետագայում ինքնուրույն աշխատանք կատարել կուսյուսավորութեան դպրոցներում և խմբակներում:

Համաձայն այս նպատակադրման, պրոպսեմինարի ծրագիրը բաղկացած է յերկու հիմնական բաժիններից — ըստ աշխատանքի բովանդակութեան և մեթոդիկայի:

Բովանդակութեան հարցերը ստորաբաժանվում են հետևյալ կերպ — 1) հերթական պարապմունքների թեմաներ (աշխատանքի սկզբնական շրջանում անհրաժեշտ է յուրաքանչյուր թեման մշակել ըստ բովանդակութեան և մեթոդական տեսակետի), 2) ծրագրի հանգուցային թեմաների մշակում, 3) թեմաների մշակումն ըստ ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի, ԿԻԳԿ-ի վերջին պլենումների հարցերի, կամ այս ու այն հարվածային կամպանիաների հետ կապված հարցերի, 4) կանոնավոր ծրագիրը կամպանիաների հետ կապված հարցերի, 4) կանոնավոր քաղաքական ինֆորմացիա:

Մեթոդական ծրագիրը բաղկացած է հետևյալ թեմաների մշակումից.

1. Կուսակցութեան հիմնական խնդիրները կուսյուսավորութեան ապարիզում և նրա կազմակերպման հարցերը (կոմպլիկտավորում, լրտարանի ուսումնասիրութուն, հաշվառում, ղեկավարման հարցեր, դպրոցական խորհրդի, պրոպսեմինարի հարցեր և այլն):

2. Պարապմունքները կենդանի գրույցի միջոցով վարելու թեորիան և պրակտիկան:

3. Թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու փորձը և նրա կիրառման մեթոդիկան:

4. Գրքի և թերթի վրա ինքնուրույն աշխատանք կատարելու մեթոդիկան:

5. Աշխատանքի գործնական՝ ստուգում, պրոպագանդիստների հրահանգավորում և նրանց աշխատանքի փորձի ամփոփում:

Նախ՝ հարկավոր է լինում պրոպսեմինարում 1-2 պարապմունքով տալ ծրագրի ու աշխատանքի մեթոդների շատ հակիրճ նպատակադրումը, նյութ ունենալով հերթական գրույցները և այն դպրոցների դրութունը, վորակը պրոպագանդիստները պետք է աշխատեն:

Այս պարապմունքներում շեշտը պետք է դնել հետևյալ յերեք հիմնական հարցերի վրա, — կուսակցութեան գլխավոր դժի անշեղ կիրառումը, պարապմունքների իղելողիական կայունութունն ու տեսական խորութունը, պարապմունքները կենդանի գրույցի մեթոդով պատրաստելու ու անցկացնելու կարգը և դպրոցի գործնական աշխատանքի ճիշտ կազմակերպումը:

Իրոք ապահովելու համար պրոպագանդիստի ճիշտ աշխատանքը և ցույց տալու համար նրան, առաջին՝ պարապմունքներին խնամքով պատրաստվելու անհրաժեշտութունը և յերկրորդ՝ ապացուցելու համար գրույցն անցկացնելու հնարավորութունն անգամ այն դեպքում, յերբ ունինդիրները տանը վոչինչ չեն մշակել, — մենք հերթական առաջին պարապմունքն ըստ էյութեան մշակեցինք կենդանի գրույցի մեթոդով: Զրույցից հետո մեթոդական վերլուծութեան յենթարկեցինք անցկացված պարապմունքները:

Զրույցը վերլուծման է յենթարկվում այն նպատակադրման տեսանկյան տակ, թե ինչ աստիճանի և ինչպես է հաջողվել լսարանի ու շաղրութունը կենտրոնացնել արմատական ու գլխավոր հարցերի վրա, ինչ կարգով է ղեկավարը մշակման յենթարկել գրույցի հարցերը, ինչպիսի պրիոմներ է կիրառել նա և ինչ արդյունքներ են ստացվել նրանց կիրառումից, ինչպես է նա զրույցում ամրացրել առանձին մոմենտները, յերթակացութուններ ու ընդհանրացումներ արել և, վերջապես, ինչպես է թեորիան շաղկապել պրակտիկայի հետ:

Այսպիսի մեթոդական վերլուծութունից հետո ղեկավարը ցույց մունքներ է տալիս, թե այժմ, գործնական ցուցադրումից հետո, ինչպես պետք է այս թեման մշակել դպրոցներում:

Պրակտիկան ցույց է տալիս, վոր պարապմունքները կենդանի գրույցի մեթոդով անցկացնելու ձևի այսպիսի ակնառու ցուցադրումը լավ



արդյունքներ և սալիս, վորովհետև ունկնդիրները նրա կիրառումը ասեսնում են գործողութեան մեջ և իրենց վրա:

Ծանրութեան կենտրոնը պետք է փոխադրել այն հարցերի վրա, վորոնք վերաբերում են պրոպագանդիստների պարապմունքների համար ինքնապատրաստվելուն:

Վերցվում է հերթական թեմաներից մեկը և կատարվում է հետևեցյալ աշխատանքը — մշակվում է ծրագրի թեման, այնուհետև նշվում էն հիմնական գրականությունն ու ձեռնարկները: Գեկավարի կողմից արվում են արմատական կոնտրոլ հարցերը, նշվում են զարգացում կատարվելիք գործնական աշխատանքների թեմաները: Այնուհետև տանը, կամ ավելի լավ կլինի՝ զարգացում պրոպագանդիստների ղեկավարի ղեկավարությունում կատարվում է բուն նյութի մշակումն ամբողջությամբ վերցրած:

Կատարված ամբողջ աշխատանքի արդյունքներից յեղնելով կազմվում է հակիրճ աշխատանքային մեթոդական մշակումը:

Այս մեթոդական մշակման մեջ պրոպագանդիստների ունկնդիրները պետք է ինքնուրույն կերպով նշեն պարապմունքների նպատակագրումը, առանձնացնեն արմատական հարցերը կուսակցության ներկա խնդիրների տեսանկյան տակ, դասավորեն այդ հարցերը լավագույն մշակման համար՝ հաշվի առնելով տվյալ լսարանի կազմը, նրանց համար ընտրեն համապատասխան մեթոդական պրիոմներ, որիննախընթաց փամփեռներ սահմանեն մշակելի հարցերի համար և, վերջապես, սնկնդիրների համար ընտրեն գործնական աշխատանքներ այս թեմայի սահմանում:

Այս աշխատանքը վերջացնելուց հետո կազմակերպվում է կոլեկտիվ պարապմունք, վորտեղ և զրույցի կարգով վերլուծություն են յենթարկվում աշխատանքային մեթոդական մշակումները և արվում են անհրաժեշտ ուղղումներն ու լրացումները: Վերլուծությունը կարելի չէ կատարել նաև տվյալ մեթոդական մշակումների ելույթյան վերաբերյալ յերկու-յերեք ղեկուցումներ լսելու միջոցով (վաղորդ գեկուցողներ նշանակելը հանձնարարելի չէ): Համապատասխան դիսկուսիայից հետո ընդունվում են մեթոդական մշակումների փոփոխումներն ու լրացումները:

Նույն պարապմունքում վերլուծություն և յենթարկվում նաև սնկնդիրների կատարած աշխատանքը, — նայվում են նրանց գրավոր աշխատանքները, քաղվածքները, ընդհանրապես վերլուծության և յենթարկվում պարապմունքներին նախապատրաստվելու ուղղությամբ կատարվող աշխատանքի ամբողջ ընթացքը:

Ծրագրի թեմայի քննություն, մշակելի գրականության վերաբե-

րող կոնտրոլ հարցերի կազմություն, ձեռնարկների ընտրություն, նյութի ըստ ելույթյան մշակում, նրա վերլուծություն, մեթոդական մշակման կազմություն, արդյունքների ամփոփում (կոնֆերանս), — այս բոլորը կազմում են պարապմունքի բովանդակությունը:

Կատարած աշխատանքից հետո պետք է ունկնդիրներին հակիրճ ցուցմունքներ տալ, թե ինչպես պետք է դարձնել իրենց ու թերթի վրա կատարվելիք աշխատանքը: Այս աշխատանքում հարկավոր է մեծ հետևություններ ընդհանուր և հատուկ կերպով, հարկավոր և նախապատրաստական աշխատանք:

Որինակ՝ գրքի վրա կատարելիք աշխատանքում պետք է սովորեցնել կարգալի և հասկանալի կարգացածի տեքստը — առանձին բառերը, նախադասությունները, հատվածները. այնուհետև սովորել անձատել գլխավոր մտքերը. միաժամանակ կարելի չէ սովորեցնել պատասխանել վոչբարդ կոնտրոլ հարցերի՝ նախ բանավոր, ապա և գրավոր ձևով, վերջապես, սովորեցնել վերապատմել, թեղիսներ և պլան կազմել:

Թերթի նկատմամբ աշխատանքը նույնպես բաղկացած է դանսպան տարրերից — թերթի կառուցվածքի անխնդիր յուրացումը, այնուհետև՝ առանձին հոդվածների ընթերցանությունը (անալիտիկական, հիմնական հոդվածներ և այլն) և, վերջապես, ամբողջ թերթի ընթերցանությունը:

Մեծ նշանակություն ունի գրքում և թերթում նյութի ընտրություն կատարելը, գրքերի ընտրության հարցականությունը (հետո զլթելից պետի դժվար գրքերը և այլն):

Գրքի և թերթի վրա աշխատանքը պետք է կատարել անույսյան զարգացի գասատուի ղեկավարությամբ կամ 2-3 հոգուց բաղկացած յամբով: Գրքի և թերթի վրա աշխատելու պլանը պետք է մշակել տվյալ զարգացի համապատասխան և ամբողջ փամանակ ուշադիր կոնտրոլ ու հակոսություն սահմանել այդ աշխատանքի նկատմամբ:

Թերթի սրբակտիկայի հետ շարկապելու սկզբունքային նշանակություն հարցը պրոպագանդիստների ղեկավարը պետք է ղնի առաջին խոսքը ղուցներում. ինչ վերաբերում է այդ շարկապման գործնական կիրառման, ապա մենք այդ ցույց եյինք տալիս յուրաքանչյուր պարապմունքի փամանակ:

Այս հարցի մեթոդական մշակումը կատարվում է հետևյալ կերպներկա տկաուալ քաղաքական թեմաներից մեկն ըստ բովանդակության մշակման յենթարկելուց հետո, ունկնդիրները պրոպագանդիստների ղեկավարի ղեկավարությունում նշում են այս կամ այն գործնական աշխատանքը, կազմում են նրա պլանը, յամբեր են կազմակերպում, մշակում են ուսումնասիրություն համար լրացուցիչ նյութերը, կապ են հաստատում ուրիշ կազմակերպությունների հետ և կատարում են այդ աշխատանքը, ձգտելով վորոշակի գործնական արդյունքներ ձեռք բերել:



Մեթոդական ունակութիւնները, որինակ՝ դպրոցը կոմպլեկտացիոնը, ունկնդիրներին ուսումնասիրելու, ավագների հետ աշխատելու կարողութիւնը և ԿԿ-ի ու Մոսկվայի կոմիտէի մեթոդական մշակումները որոշորձումը մենք աշխատում եյինք ցույց տալ նախ՝ մեր սեփնարի փորձով և յերկրորդ՝ դպրոցի աշխատանքի կապակցութեամբ:

3-5 պարագմունքից հետո, յերբ մեզ հաջողվեց մշակել մեր այստեղ նկարագրած ծրագիրը, մենք ծանրութեան կենտրոնը փոխադրեցինք պրոպեմինարի ունկնդիրներին կատարած աշխատանքի հետադրութեան և հրահանգալորման վրա:

Դրա համար, աշխատանքի արաջին իսկ սրահից մեր խնդրանքով հետադրողներին բրիգադ նշանակվեց: Երիզադի յուրաքանչյուր անդամ ուներ մինչև 5 դպրոց, վորոնց նա շարունակ հետևում էր, հետադրում էր նրանց աշխատանքը և ողնում էր դպրոցի ղեկավարներին:

Մենք հետադրութեան համար վերցնում եյինք վոչ միայն ամբողջ դպրոցի աշխատանքը, այլև առանձին պրորէմները, որինակ՝ թեորիան պրակտիկայի հետ շաղկապելու, ունկնդիրներին ուսումնասիրելու, թերթի վրա աշխատանք կատարելու և այլն պրորէմներ:

Նյութը նախ մշակվում էր բրիգադի կողմից հետադրող դպրոցների ղեկավարների հետ միասին, ապա այդ մասին լայնում էր սեմինարում, վորտեղ նա ըննարկվում էր, և ընդունվում էյին լրացուցիչ վորոշումներ, արվում էյին համապատասխան յեղրակացութիւններ:

Այս աշխատանքը, յերբ միաժամանակ մշակվում էյին հանդուցային հարցերն ըստ բովանդակութեան, ժամանակակից քաղաքական հարցերը և ծրագրի ամենից ավելի դժվարին թեմաները, հաշվի յեր առնվում տեղերի մեթոդական փորձը, շարունակվեց ինչպես ասացինք, մտաւորապես մինչև հունվարյան արձակուրդը: Արձակուրդից հետո, պրոպեմինարի սավորական աշխատանքին զուգընթաց, սեմինարի բոլոր ունկնդիրներին մենք բաժանեցինք առանձին բրիգադներին՝ ուսումնասիրելու համար կուսուրուսութեան առանձին անտուալ հարցերը, որինակ՝ ծրագրի, դասագրքի, պրոյեկտներին մեթոդի և նրա կիրառման հարցերը և այլն:

Այս թեմաները բրիգադներում մշակելու վերաբերյալ հիմնական վարչումները հաստատվում էյին պրոպեմինարում: Այս նյութերը խիտ կենսական են և հարուստ փորձ են տալիս հետագա ուսումնական հետադրողական աշխատանքի համար:

Սեմինարի աշխատանքի մեր նկարագրած փորձը ծրագրային նյութի մշակումն ըստ բովանդակութեան կոնկրետ կերպով շաղկապում է մեթոդական պրակտիկայի հետ ինչպես սեմինարի ներսում, այնպես էլ նրանից դուրս, այսինքն փորձ է անում ճիշտ լուծելու ժամանակակից դպրոցի ամենադժվարին ու արմատական պրորէմներից մեկը, այն է՝ հեղափոխական թեորիան սոցիալիստական շինարարութեան պրակտիկայի հետ շաղկապելու պրորէմը:

Պետք է ասել, վոր կուսուրուսութեան կարինետներին աշխատանքով և կոմունիստական լուսավորութեան աներով մինչև այժմ հարկ յեղածին պես չեն զբաղվել և լուրջ վերաբերմունք ցույց չեն տվել: Դրանով էլ կարելի յե բացատրել այն, վոր կուսուրուսութեան աների և կուսակցական ու մեթոդական կարինետներին աշխատանքի հարցի առթիվ ԿԿ-ի կուսպրոպագանդին կից վերջերս կայացած խորհրդակցութիւնում կուսակարինետներին տված ղեկուցումներից կարելի յեր վորոշակի յեղրակացութիւն անել այն մասին, վոր մեկ կարինետի կառուցվածքը բոլորովին նման չի մյուս կարինետի կառուցվածքին:

Ի՞նչ են ներկայացնում դոյութիւն ունեցող կարինետներն իրենց ձևով: Իբրև որինակ կարելի յե բերել չորս հատկանշական կարինետ — Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի և «Ելեկտրոգալոդ»-ի կարինետները: Կիևի կարինետը հիմնականում ղեկավարում է կուսուրուսութեան և աղետացիայի մեթոդիկան: Մոսկվայի կարինետն ընդհանուր առմամբ կուսաշխատանքի կարինետ է: «Ելեկտրոգալոդ»-ի կարինետն ըստ էութեան կուսաշխատանքի կարինետ և լաբորատորիա չէ, այլ պարզապես մի կադակերպութիւն է, վոր մասսայական աշխատանք է կատարում, դա ըստ էութեան մի փոքր ակումբ է, ճիշտ է, շատ ախույժ, մարտական մի կարմիր անկյուն, բայց վոչ մի ղեկընդ կուսակարինետ: Լենինգրադում յեղած կոմ. լուս. տունը ներկայացնում է մի ուսումնական կոմբինատ, յուրատեսակ կուսխորհրդային դպրոց, վոր ունի իր ճյուղավորումները և նպատակ ունի կուսակալի պատրաստել:

Այսպիսով, նշանակալից չափով տարածութիւն դոյութիւն ունի մեկ կարինետից, ասենք թե Կիևի կարինետից, վորը հիմնականում կուսպրոպագանդի մեթոդիկայի ղեկավարման աշխատանք է կատարում, մինչև Լենինգրադի կոմ. լուս. տունը, վորն անմիջապես վարում է կադերի պատրաստութեան աշխատանքը: Միաժամանակ նույն Կիևի կարինետը տարբերվում է Մոսկվայի կարինետից, վորը վարում է վոչ միայն մեթոդական-պրոպագանդիստական, այլև կադակերպական-կուսակցական աշխատանքը:

Իրենց աշխատանքի բովանդակութեամբ և կարինետները տարբերվում են: Կարինետներից վումանք փաստորեն իրենց վորոշումները դորձնականում իրացնում են վորոչ չափով փոխարինելով կուսակադակերպութեանը, մյուս կարինետները մտնում են նյութ պատրաստող, փորձը հաշվի առնող ու ընդհանրացնող հետադրողական հիմնարկների աստիճանի վրա (որինակ՝ Կիևի կարինետը): Անմիջապես կուսակադակերպական աշխատանքով զբաղվող կարինետներ են հանդիսանում Մոսկվայի և մասամբ էլ Լենինգրադի կարինետները: Իժբատարար, գեռև



քիչ է լուսարանված և ուսումնասիրված այնպիսի կարիքները փորձը, ինչպիսին է «Նլեկտրոգալու»-ի կարիքները, այսինքն՝ առանձին ձևո՞ւնարկությունների կարիքները: Կարևոր է փորձել, արդյո՞ք այնպես ենք մենք պատկերացնում ստորին կարիքները, ինչպիսին է «Նլեկտրոգալու»-ի կարիքները, յի՞նչ նրա ամբողջ աշխատանքը հետևանք է կարիքներում աշխատող ընկերների բարձր ակտիվության, ընկերներ, վորոնք համապատասխան ղեկավարութուն չեն ստանում և չգիտեն, թե այլ հերպ ո՞ւր կամ ի՞նչպես դործադրեն իրենց յեռանդը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում «Նլեկտրոգալու»-ի կարիքները: Ամենից առաջ՝ պետք է նշել, վոր կարիքների շուրջը համախմբված է գործարանի աշխատողների բավական լայն մի ակտիվ, ըստ վորում կարիքների աշխատանքին աշխուժ մասնակցող 230 հոգուց 120-ը հարվածայիններ են:

Կարիքներն իր աշխատանքում ինչպիսի է հետապնդում՝ լինել արդ-Ֆինալանի համար մոլոր պայքարի ակտիվ մասնակիցը, գործնականորեն աջակցել իրադրձեյու այն խնդիրները, վոր զբված են կուսակցու-թյան առաջ, յերկրի առաջ, սեփական ձեռնարկության առաջ: Այդ իհարկե, ճիշտ է: Բայց խնդիրը այդ աշխատանքի մեթոդն է:

Հիմնական մեթոդը, վոր գործադրում է կարիքները ցեխերի աշխա-տանքի փորձն ուսումնասիրելու համար, բրիգադներ կազմակերպելն է, բրիգադներ, վորոնք վոչ միայն արձանագրում են փաստերը, այլև յավազույն ցեխերի փորձը փոխադրում են յետ մնացած ցեխերը:

Փորձի ակնատու ընդհանրացման համար կարիքները կազմակերպում է արդ-Ֆինալանի տարտակներ, նշելով յավազույն և վտաթար ցեխերը:

Փորձարանի բակում, —ինչպես հաղորդում է կարիքների վարիչ ընկ. Կլիմուչեյը, —կուսակարիքները սլակատների և հաղորդադրություն-ների ձևով տալիս էր 50 ցեխերի արդ-Ֆինալանի կատարման որական ցուցանիշները... Լավագույն ձեռնարկության կոնկուրսի համար մոլոր պայքարում ստեղծվեցին 18 մարչրուասյին բրիգադներ, ամեն մեկը 18 հոգուց բաղկացած... բրիգադներն որն որին ուսումնասիրում է յին արտադրական փորձը: Իրրե արդյունք՝ բազմաթիվ նյութեր հավաք-վեցին յավազույն ցեխերի աշխատանքի վերաբերյալ»:

Սակայն «Նլեկտրոգալու»-ի կարիքներն իր աշխատանքի կենտրոնը դարձրե՞ծ մասսայական աշխատանքը, այսինքն, այն, ինչ պետք է անեն մասսայական աշխատանք կատարող մյուս կազմակերպությունները— կուսբընթը, պրոֆկազմակերպությունը, կարմիր անկյունները, ակումբ-ները և այլն:

Այսպես, որինակ, կարիքները նոյեմբեր ամսին «կոնկուրսի դազա-դադորձ» ցեխերի թափոք կազմակերպեց: «Վերցրին յերաժշտախումբ ու պրկատներ, վերցրին մի քանի դազադ... և ճաշի դադարի ժամա-

նակ ցեխերը գնացին»: Դեկտեմբեր ամսին «վոդերի կարնավալ» կազ-մակերպեցին:

Այսպիսով, կարիքներն աշխատանքն ըստ եյության դառնում է մաս-սայական աշխատանքի կազմակերպումը ձեռնարկություններում, վոր-պիսին, անչույս, ամենևին չի համապատասխանում կարիքների խոն-դիրներին և չի կարող ճիշտ համարվել: Դրանումն է «Նլեկտրոգալու-ը»-ի կարիքների աշխատանքի կառուցման սխալը:

Կարիքներները հիմնականում պետք է հանդիսանան այնպիսի կենտ-րոններ, վորոնք ուսումնասիրում և ընդհանրացնում են տեղական կազ-մակերպությունների աշխատանքի փորձը, ոգնում են այդ կազմակեր-պություններին աշխատանքի նոր ուղիներ ու մեթոդներ գտնելու գոր-ծում, խորհուրդներ են տալիս այս կամ այն տեսակի աշխատանքի վե-րաբերյալ, հրահանգներ են տալիս այս կամ այն ձևի մասսայական աշխատանքի անցկացման մեթոդիկայի և սրտոպագանդի մեթոդիկայի մասին, հավաքում են փորձը, հրահանգում են կուսկազմակերպ-չական աշխատանքի հարցերի մասին, կազմակերպում են տեղեկատու աշխատանքը:

Ահա թե ինչ են սլատմում խորհրդակցության մասնակիցները կու-րիքներների աշխատանքի բովանդակության մասին:

«Լեինդրադում մարդային կուսկարիքներն ընդհանրացնում է կուս-աշխատանքի վոզը կուսակված փորձը և անմիջական մեթոդական ղե-կավարություն և ցույց տալիս ինչպես կուլտ-պրոպի կազմակերչական կուսաշխատանքի, այնպես էլ ազխամասսայական աշխատանքի դժով: Դրանից բացի, կուսկարիքներն զբաղվում է, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, հրատարակչական աշխատանքով—նա սխտեմավորում և ջոկում է կուսլուսավորության ցանցի համար անհրաժեշտ ամբողջ նյութը: Այսպես, կուսակցության XVI համագումարի նյութերի վերա-բերյալ կարիքներն ողոստա ամսին արդեն հրատարակել և դիադրամ-ների մի սերիա կուսլուսավորության ցանցի համար և կանոնավոր կեր-պով յույս է ընծայում «Вопросы и ответы», յուսարանում է կու-սակցական և խորհրդային կյանքի հարցերը: Այս «Вопросы и ответы»-ն հրատարակվում է («Красная газета» թերթի յամբարութ-յան կլեց»:

Ընկ. Եպանյնը (նիժնու կարիքների վարիչ) հաղորդում է, վոր «կուսկարիքների անտեսական սեկցիան քարտուղարության համար պատրաստում է մի շարք պրոբլեմներ—կազրերի պատրաստություն, շրջանի դիմագձի հայտարարում»: Իվանովում սեկցիայի աշխատանքի հետևանքով մի բրոշյուր հրատարակեցին մարդի փայտամթերումների մասին:

Կիևվի կուսկարիքները շատ մեծ ուշադրություն է դարձնում զեկու-ցողների համար թեղիսներ կազմելուն: Կիևվի կոմրինատը հետազոտող



Գնկ. Մաղինի ասելով «ազխտ-մասսայական սեկտորի աշխատանքի 75%-ը գնում է թեղիներ կազմելուն»:

Ընկ. Կառավարման (Կրեմլի կարինետի վարիչ) հաղորդում է, վոր կուսկարինետները զեկուցողներին ողնելու համար մասսայական կամպա նիաների շուրջը մի ամբողջ շարք հրահանգչական զեկուցումներ են կազմակերպում (Կրեմլ, Լենինգրադ, Սորմովո):

Ընկեր Լյուդվինսկայան (Մոսկվայի մարզկոմ) հաղորդում է— «Програндист»-ի տված մեթոդական մշակումներին մենք ավելապես ենք տեղեկատու բնույթ ունեցող նյութեր—աղյուսակներ, կոնսպեկտներ, թեղիներ: Որինակ՝ Լենինյան օրերին մենք ավինք այնպիսի մի մշակում, վորին կցված էլին աղյուսակներ, լոզունգներ, հանձնարարվող զբաղանդության ցուցակներ»:

ԿԱՐԻՆԵՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Անհրաժեշտ է նշել, վոր գոյություն ունեցող կոմ. լուս. տների և կարինետների միջև ֆունկցիաների հստակ բաժանում չկա: Ուստի հրամայական ինդիք է հանդիսանում կոնկրետացնել կարինետների աշխատանքի ձևերն ու բովանդակութունը, սահմանադրել կարինետ և կոմ. լուս. տուն հասկացողութունները:

Կուսաշխատանքի կարինետը և կոմ. լուս. տունը յերկու բոլորովին տարբեր կազմակերպություններ են: Կոմ. լուս. տունը ուսումնական եւմբինատ է, վորի աշխատանքի բնույթն ու բովանդակութունը պետք է անջատել կարինետներից և քննարկել առանձնապես: Կարինետն ուսումնական կոմբինատ չէ: Անմիջական ուսումնական աշխատանք նա չի տանում: Նա ողնում է կուսկազմակերպության բաժիններին աշխատանքի հաշվառման ու փորձի ընդհանրացման միջոցով տանելու գործում, նա ողնում է կուսլուսավորության ցանցի աշխատանքին իր մեթոդական ղեկավարությամբ, տեղական և լուսարանող նյութերի հայթայթումով, նա ողնում է մասսայական աշխատանքը նոր, ավելի բարձր աստիճանի փոխադրելու, նա ողնում է սկիտիվին այն աշխատանքում, վոր վերջինս կոտորում է ինքնազարգացման համար:

Պարզություն չկա նաև այն հարցում, թե ով է ղեկավարում կարինետները: Մեկ դեպքում՝ կարինետները ղեկավարում են կուսպրոպ բաժինները և տեղական համապատասխան կուսպրոպները. մյուս դեպքերում՝ կարինետները գտնվում են կուսկազմակերպություններին կից և նրանց ղեկավարում է այս կամ այն բաժնի բյուրոն: Վերջապես, կան այնպիսի կարինետներ էլ, ինչպես Սարկովինը, վորոնք սպրում են ինքնուրույն կյանքով, առանց վոչ վոքեց ուղղախի ղերեկտիվներ ստանալու:

Կարճ առած, կարինետների միասնական ղեկավարություն գոյություն չունի, ինչպես գոյություն չունեն նաև այդ ղեկավարության համապատասխան ձևեր: Կուսպրոպները, վորոնք իրավարանորեն պետք է ղեկավարեն կարինետները, փաստորեն այդ ղեկավարությունը ցույց չեն տալիսկամ ցույց են տալիս շատ թույլ չափով:

Հարկավոր է պարզ ու հստակ պատկերացում ստեղծել, թե ով և ինչպես պետք է ղեկավարի կարինետների աշխատանքը:

Կարինետներն սպասարկում են կուսկազմակերպության բոլոր բաժիններին և, հետևաբար, պետք է ղեկավարություն ստանան բաժիններինց ամեն մեկից ըստ աշխատանքի համապատասխան ճյուղի: Այսպես, սեկցիայի ներսում ղեկավարություն է ցույց տալիս կուսկազմակերպության համապատասխան բաժինը, բայց ընդհանուր ղեկավարությունը համենայն դեպս կուսպրոպի վրա յե: Առանց կուսպրոպի աջակցի միասնական ղեկավարության, անկարելի յե վերացնել բազմազանությունն ու տնայնագործական բնույթը կուսկարինետների թե կազմակերպման ձևերի և թե՛ վողջ ընթացիկ աշխատանքի մեջ:

Բայց նույնքան կարևոր է նաև կենտրոնական կարինետների կողմից տեղականներին ղեկավարություն ցույց տալու հարցը, վորտեղ, ի դեպ ասենք, նույնպես առանձին նվաճումներ չկան:

Այստեղ թեպես և վորոչ փորձ կարելի յե նշել, բայց այդպիսին թավականաչափ հաշվի չի աւնված, բավականաչափ չի ուսումնասիրված և դեռևս մեծ աշխատանք է պահանջում: Փոքր ինչ փորձ գոյություն ունի, մասնավորապես, Լենինգրադի և Մոսկվայի կարինետներում:

Այսպես, ընկ. Կեռմուրովը (Լենինգրադ) Լենինգրադի փորձի մասին հետևյալն է հաղորդում—«Մարգային կուսկարինետն իր ղեկավարությունն իրազործում է ամենից առաջ անմիջական կենդանի կապ հաստատելով—խորհրդակցություններ, հետազոտությունների, հրահանգավորման և, վերջապես, կարինետի աշխատողների առանձին խմբերի հետ զրույցներ կազմակերպելու միջոցով: Դրանով մենք այն արդյունքն ունեցանք, վոր ձեռնարկություններում մի քանի անկյուններ կարինետների վերածվեցին»:

Մոսկվայի մարզում, ինչպես հաղորդում է ընկ. Լյուդվինսկայան, ղեկավարությունը հետևյալ կերպ է իրազործվում—«Մոսկվայի կարինետը շրջանների համար կանոնադրություն է մշակում: Այդ կանոնադրությունը ղեկավարություն է հանդիսանում բոլոր կարինետներին համար: Մենք որինակելի թեմա յենք տալիս կոնսուլտացիայի և զրույցների համար: Այնուհետև մենք ստորին կարինետների կոնսուլտանտներին ու զեկուցողներին տալիս ենք համապատասխան նյութեր և, բացի այդ, հրավիրում ենք պարբերական խորհրդակցություններ: Քաղաքային կարինետ ենք զուգարում ամսական 2 անգամ, ծայրահեղ դեպքում»:



առնվազն ամիսը մեկ անգամ, և առհասարակ մեր սրտնի մեջ մտնում են կուսաշխատանքի կաբինետները սխտեմատիկ ժողովներ: Մենք ունենք 144 շրջան, ըստ վորում աշխատանքի բնույթը յուրաքանչյուր շրջանում բոլորովին առանձին է. դյուրատեսակի շրջանում այլ ծավալներ ու ընդլիքի աշխատանք է, քաղաքային շրջանում՝ բոլորովին այլ: Ուստի մենք գործադրում ենք զեկալարության հետևյալ ձևերը—արդյունաբերական շրջանային կարիներներն առանձին ենք հավաքում, դյուրատեսակի շրջանային կարիներները՝ առանձին, ընդ վորում բաժանում ենք մի շարք հարցերի, ասենք թե՛ անասնաբուժական տրնտեսություն, դաշտաբուժական տնտեսություն և այլն»:

Կարիներների կազմակերպչական կառուցվածքին վերաբերող այլ հարցերի թվում կարևոր տեղերից մեկն է գրավում սեկցիաների աշխատանքի հարցը, մասնավորապես նրանց քանակության հարցը:

Սորհրդակցությունն այն յեզրակացությանը յեկալ, վոր շատ սեկցիաներ կազմակերպել չի հարկավոր, պետք է կանգ առնել կարիներտի հիմնական սեկցիաների վրա: Դա թույլ կտա ամրացնել աշխատանքը, իսկ սեկցիաների աշխատանքը բազմազան պահանջներին առավելագույն չափով համապատասխան դարձնելու համար, հարկավոր է դնալ վոչ թե սեկցիաների բաժանման դժով, այլ սեկցիաների ներսում աշխատանքը շերտավորման յենթարկելու դժով: Պետք է այնպես անել, վոր սեկցիան չմնա մենակ, լծացած, չիորձի ընդգրկել ամեն ինչ. սեկցիայի ներսում աշխատանքը կարող է ստորաբաժանվել, նայած նրա բնույթին: Մոտապորապես այսպիսի սեկցիաներ պետք է լինեն—պրոպագանդիստական, ագիտ-մասսայական և կուս-կազմակերպչական աշխատանքի սեկցիաներ:

Այս սեկցիաների աշխատանքում պետք է անդրադառնա և՛ պրոֆեսիոնալ, և՛ խորհրդային, և՛ կոոպերատիվ աշխատանքը:

Այս հարցը պետք է յենթակա դարձնել կուսկարիներների Փոռնկցիոնալ սեկցիաներին այն սկզբունքով վորով կանուցվում են մեր վողջ կուսաշխատանքն ու կուսապարատը, վորոնք գործում են Փոռնկցիոնալ նշանաբանով: Այս բոլոր բաժինները աշխատանքի վորոշակի ճյուղեր ունեն: Յեթե կուլտպրոպը վորոշակի աշխատանք է կատարում խորհրդային, կոոպերատիվ կամ պրոֆմիլութենական դժով, ասել է այս կուս-կարիներտի համապատասխան սեկցիայի ներսում պետք է նախատեսել մեր աշխատանքի այս ճյուղին վերաբերող համապատասխան հարցեր: Ճիշտ այդպես էլ պետք է շերտավորված լինի ագիտ-մասսայական սեկցիայի աշխատանքը համաձայն այն աշխատանքի ու խնդիրների, վորովիված են կուսկազմակերպության ագիտ-մասսայական բաժնի առաջ:

Այս Փոռնկցիոնալ սեկցիաների կողքին կուսկարիներներին ներսում էլի ինչ-վոր լրացուցիչ սեկցիաներ, ասենք թե՛ պրոֆմիլութենական կոոպերատիվ և այլ սեկցիաներ ստեղծելը միանգամայն ավելորդ է:

Առանձին պետք է խոսել տեղական շինարարության նյութերի մասին: Միանգամայն աննպատակահարմար կլիներ, յեթե, ինչպես խորհրդակցությունում առաջարկում է յին միջանի ընկերներ, յուրաքանչյուր սեկցիային կից տեղական շինարարության բաժին կազմակերպվի:

Տեղական շինարարության բաժինն այն ներվն է, դեպի վորը ձգվում են բոլոր սեկցիաները: Յեթե յուրաքանչյուր սեկցիա իր համար տեղական շինարարության առանձին բաժին ունենար, կարելի չէ պատկերացնել, թե ինչպես կարիներտի կամ տան ուշադրությունը պիտի ցրվի դար այդ նյութերի հավաքման համար: Տեղական շինարարության բաժինն այն անոթն է, վորից քաղվում են թե՛ ադիտացիոն, թե՛ պրոպագանդիստական աշխատանքի և թե՛ կոնսուլտացիայի նյութերը: Ուստի նպատակահարմար է, վոր այդ սեկցիան կամ անկյունը ամբողջական լինի: Ավելի ճիշտ կլինի այդ աշխատանքը, վորպես միջսեկցիոն աշխատանք, կենտրոնացնել մեկ վայրում, և վոչ թե ցրվի տալ համապատասխան սեկցիաներում:

Տեղական նյութեր տալը յուրաքանչյուր կարիներտի ամենակական խնդիրն է: Տալ միայն համադրամարներն ու կոնֆերանսների վորոշումները, տնտեսական շինարարության մասին խոսելիս՝ տալ միայն հանրապետության ժողտնտեսական պլանը— դա կարիներտի կես աշխատանքն է: Դրան զուգընթաց կարիներտը պետք է տա թվեր, տեղական նյութեր, մարդի, շրջանի տնտեսական շինարարության պլանը: Յուրաքանչյուր կարիներտում պետք է կազմակերպել տեղական շինարարության անկյուն, վորն արտացոլի տեղական շինարարության բոլոր հարցերը նրանց ամբողջ ծավալով, այստեղ մտնում են և՛ տնտեսական, և՛ կուլտուրական, և՛ կենցաղային շինարարության հարցերը. ըստ ամենայնի դյուրամարս ձևով պետք է տրվի հիմնական նյութը, վորը պետք է հավելված հանդիսանա պրոպագանդիստի յուրաքանչյուր պարագրաֆում համար: Ձեկուցողը պետք է կարողանա կարիներտում տեղական նշանակություն ունեցող թվեր ու նյութեր ստանալ:

Եստ թույլ է ծավալված, իսկ մեծ մասամբ բոլորովին չի ծավալված աշխատանքը միջազգային բանվորական շարժման և կոմիտեներնի պատմության դժով: Այս խումբը կամ սեկցիան ևս, ինչպես տեղական շինարարության սեկցիան, պետք է ինքնուրույն դյուրություն ունենա, իրև ամբողջական, կարիներտի աշխատանքի մյուս ճյուղերի վիճել չբաժանված սեկցիա: Այս աշխատանքը հարկավոր է բոլոր սեկցիաների համար, նա պետք է սպտարիի կարիներտի բոլոր սեկցիաներին, և այդ աշխատանքը սեկցիայի մեջ բաժանել, ասել է՝ նրան նեղ, միակողմանի ու վոչ-լրիվ դարձնել:

Բնտերնացիոնալ պրոպագանդի համար, գեկուցողների և ագիտատորների համար կարիներտում հարկավոր է ունենալ այնպիսի մի խումբ, վորը միջազգային բանվորական շարժման հարցերը մշակելիս լինի:



Այդպիսի խումբ կամ սեկցիա, իրրև աշխատանքի բնադաշտս, պետք է գոյություն ունենա կարինեստում:

Դիվիզիոնն հարցերից մեկն է հանդիսանում այն տեղի հարցը, վոր պետք է ունենա մեթոդական բյուրոն կարինեստների սիստեմում: Պե՞տք է արդյոք մեթոդական բյուրոներ գոյություն ունենան կարինեստներին դուրսհանա: Փորձն ասում է, վոր նրանք չպետք է գոյություն ունենան: Որինակ՝ ԿԿ-ում առարկայական մեթոդական հանձնաժողովների սիստեմ գոյություն ունի: Յեթե մենք ԿԿ-ում ունենայինք կուսաշխատանքի համաժողովներական կարինեստ, առարկայական-մեթոդական հանձնաժողովներ մեզ ամենին պետք չէին լինի: Կուսաշխատանքի կարինեստը մի ինտոլիտուտ է, վոր իր մեջ տեղավորում է նաև այս աշխատանքը: Մեթոդական հանձնաժողովները կամ մեթոդական բյուրոները կարինեստի լազկացուցիչ մասն են, նրա որդանը, և նրանց այնտեղից հանել, կնշանակի՝ անարյուն դարձնել կարինեստի ամբողջ աշխատանքը:

### ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կարինեստները մի շարք տեղերում արդեն անցնում են և անցել են կուսլուսավորության ցանցի շերտավորված մեթոդական դեկավարմանի, շրջանի տնտեսական բնույթի համեմատ փորձը շերտավորելուն: Հարկավոր է ընդգծել, վոր ավյալ շրջանում այս մոմենտը մեր աշխատանքի առանցքն է հանդիսանում: Իրան պետք է ձգտեն այժմ մեր կարինեստները, վորովհետև առանց այդ լուծելու՝ նրանք չեն լուծի և վոչ մի պրոբլեմ, նրանք չեն կարողանա լուրջ ոգնություն ցույց տալ կուսկազմակերպության աշխատանքին:

Մեզ մոտ անց են կացվում արդյունաբերական և դյուրատնտեսական բնույթի կամպանիաներ: Նրանց միջև համապատասխան կապ կա, այդ միանգամայն ճիշտ է, բայց դրա հետ միասին նրանք ունեն նաև իրենց առանձնահատկությունները: Նրանց պետք է տարբեր կերպ մշակման յենթարկել: Նույնը նաև կուսլուսավորության սիստեմում: Միանգամայն ակնհայտ է, վոր քաղաքի դպրոցը, կոլտնտեսության դպրոցը և խորհանտեսության դպրոցը տարբեր դպրոցներ են: Այնուհետև, առանապահական և հացահատիկային շրջանների դպրոցները նույնպես յերկու տարբեր դպրոցներ են, վորոնք բոլորովին տարբեր մոտեցում են պահանջում: Կարինեստների աշխատանքն այնպես պետք է վերակառուցել, վորպեսզի հնարավոր լինի դեկավարել վոչ-ընդհանրապես, փորձը վաճառահանրապես ընդհանրացնել, այլ դեկավարել համաձայն այն պայմանների, վորոնց մեջ գտնվում է դպրոցը, համաձայն շրջանի բնույթի, յուրահատուկ իրադրության:

### ՄԻՔԱՆԻ ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհրաժեշտ է, վոր կարինեստներն իրենց աշխատանքը վերակառուցեն համակարգված ձևով՝ այնտեղ նոր ձևերն ու մեթոդները անդրադարձնելու, մեր վողջ աշխատանքում տեղի ունեցած և տեղի ունեցող տեղաշարժերն անդրադարձնելու տեսանկյան տակ:

Կուսլուսավորության ցանցի աշխատանքում ներկայումս հիմնական խնդիր է հանդիսանում պրակտիկան չաղկապել ուսուցման հետ, ուսուցման մեջ անդրադարձնել մեր սոցիալիստական շինարարությունը: Առանց այդ հարցը լուծելու, մեր դպրոցն անկյանք կլինի, այդ ասպարիզում թե՛ կուսլուսավորության թերազնահատում և թե՛ խոտորումներ կլինեն: Կուսլուսավորչն իրոք կուսլուսավորչ կլինի այն ժամանակ, յերբ հնարավոր կլինի ուսուցման այս յերկու կողմերն անխզելի կապերով չաղկապել իրար:

Ձեռն լինի այնպիսի փաստեր, յերբ կուսլուսավորության ցանցը «տնտեսական կամպանիաների անցկացման» պատճառով ընդհատում է աշխատանքը, չեն լինի, յեթե մենք լուծենք թեորիայի ու պրակտիկայի ըստ ամենայնի սամբոլական ու ներդաշնակ չաղկապման հանգուցային հարցը: Աշխատանքի պրակտիկայում յեղել են դեպքեր, յերբ տնտեսական պլանների թերակատարման պատճառով փակվել է կուսլուսավորության ցանցը:

Մենք սովորել ենք հայհոյել տեղական կուսկազմակերպություններին: Բայց բանն այստեղ դրանում չէ: Բանը նրանումն է, վոր մենք չենք կարողանում ուսուցումն այնպիսի բարձրության վրա դնել, վոր ամբողջ ուսուցումը դուգորգվի կուսկազմակերպության աշխատանքի հիմնական գծերի հետ, վոր դպրոցը վոչ միայն չխանդարի, այլ ընդհակառակն, կուսկազմակերպություններին ողնի տնտեսական քաղաքական կամպանիաներն անցկացնելու գործում: Լուծելով այդ խնդիրը, մենք լուծած կլինենք մի ամբողջ շարք ամենալուրջ խնդիրներ: Ուստի հարկավոր է այդ հարցի վրա կենտրոնացնել կարինեստի պրոպագանդիստական սեկցիայի ու շաղրությունը:

Վերցնենք, որինակ, տեղական նյութերը, այնպիսի մի մոմենտ, ինչպիսին է կուլեկտիվացումը մարդում: Կարինեստը դիտե՞ արդյոք, թե յուրաքանչյուր տասնորյակում, յուրաքանչյուր հնգորյակում ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել մարդում կուլեկտիվացման ասպարիզում: Սովորաբար, չգիտե: Բայց չե՞ վոր նա չափազանց լարված կերպով պետք է հետևի այդ խնդրին: Ձե՞ վոր դա հենց ողնություն է գեկուցողին, աղիտատորին, պրոպագանդիստին: Կարինեստը օովորաբար դեպքից դեպք է այդ խնդրով հետաքրքրվում:

Վերցնենք պրոֆիկազմակերպության աճումը: Գիտե՞ արդյոք կարինեստը, թե ինչպես է աճում տեղական պրոֆիկազմակերպությունը, նա



իր մոտ նշո՞ւմ ե արդյոք կազմակերպութեան աճումը, տվյալ մարզի տվյալ շրջանի արտադրութեան մեջ զբաղված բանվորների աճումը: Առ վորաբար, յերբեք: Կարինետի տեղական շինարարութեան բաժնում ա մայրաթյուն և իշխում, և այդտեղից ել՝ թույլ ե ցանցի աշխատանքը, բավականաչափ տեղական նյութեր չկան կուսուրսավորութեան ցանցի համար, մասսայական կամպանիաների համար, դործնական աշխատանքի կազմակերպման համար:

Պետք ե նաև մշակել այն կազմակերպչական լծակները հարցը, վորոնց միջոցով կուսկարինետները վորոշ սեկցիաները կկարողանան ընդգրկել այն բոլոր հարցերը, վոր զբված են ընդհանրապես ամբողջ կարինետի և առանձնապես նրա յուրաքանչյուր մասի առաջ: Կարինետի աշխատանքին պետք ե մասնակից դարձնել ուսանողներին, պրոպագանդիստներին, ագիտատորներին: Կարինետի շուրջը պետք ե համախմբել կուսակալիկին, նրան շահագրգռել կարինետի աշխատանքով: Կարինետի աշխատանքում պետք ե սոցմբքում և հարվածայնություն մտցնել: Հարկավոր ե կարինետում, ինչպես արտադրութեան մեջ, պայքարել աշխատանքի վորակի համար, տեմպերի համար, աշխատանքի հատկութեան համար: Ագիտացիայի և պրոպագանդի փոխարեն՝ կուսաշխատանքի կարինետ կամ տուն տեղում կանգնած մնալու փոխարեն՝ իրական աշակցություն՝ կուսկազմակերպութեանը, ակտիվին, պրոպագանդիստին և ակտիստորին՝ այդպիսին ե որվա մարտական լողունը:

ՅԵ. ՏԱՄԱՐԿԻՆ

ԿՈՒՍԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՅԲԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏԻ ՎՐԱ ՆԵՐԿԱ ՆՐՋԱՆՈՒՄ\*)

(Կուսուրսավորութեան ցանցի պրոպագանդիստները համար) Մեքոդական ցուցմունքներ

Այս թեմայի մշակման հիմնական նպատակն ե պարզել կուսակցութեան յերկու Փրոնտով պայքարի ներկա շրջանի յուրահատուկ դժբը և կուսակցութեան հերթական խնդիրներն այն պայքարում, վոր մղում ե նա ընդդեմ գլխավոր վտանգ աջ ոպորտունիզմի, ընդդեմ տրոցկիզմի և ցիդիվը հանդիսացող «ձախ» սատանումների, ինչպես նաև ընդդեմ կուսակցութեան գլխավոր դժից յեղած ամեն տեսակ թեքումների նկատմամբ հաշտվողականութեան:

Պարզելու համար ներկա շրջանում կուսակցութեան յերկու Փրոնտով պայքարի յուրահատուկությունները, անհրաժեշտ ե նախորդ քննել յերկու հիմնական հարց— 1) վոր յերկու Փրոնտի վրա և հաշտվողական

\*) Այս թեմայի մեթոդական մշակումը լույս ե տեսել առանձին դրբուհեով Համպ(բ)Կ Մոսկվայի Կոմիտեի մեթոդական բյուրոյի հրատ.: 1930 թ. նոյեմբեր:

նութեան դեմ պայքարը— կուսակցութեան գլխավոր դժի համար պայքարելու այդ կարևորագույն պայմանը— կարմիր թելով անց ե կենում քայլը իղմի ամբողջ պատմութեան միջով. 2) վոր յուրաքանչյուր պատմականորեն վորոշված շրջանում կրակն ուղղվում ե ընդդեմ գլխավոր վտանգի, ընդդեմ աջ կամ «ձախ» ոպորտունիզմի:

Կուսակցութեան յերկու Փրոնտով պայքարի ներկա շրջանի յուրահատուկութեան ուսումնասիրությունը պետք ե ընթանա այդ յուրահատուկությունը բացահայտող հետևյալ հիմնական դժերի պարզաբանման ուղղութեամբ— 1) վոր հակահեղափոխական տրոցկիզմի լիակատար ջանքախումբից հետո աջ ոպորտունիզմը գլխավոր վտանգն ե հանդիսանում. այստեղից՝ աջ ոպորտունիզմի իբրև գլխավոր վտանգի դեմ վրձնացնելու պայքարը տրոցկիզմի մնացորդների և նրա կրկնությունը հանդիսացող «ձախ» սատանումների դեմ կուսակցութեան մեջ. 2) վոր աջ և «ձախ» ոպորտունիստների նոր մանևվըը կուսակցութեան դեմ վարած ճրանց պայքարում, վոր արտահայտվում ե յերկերեսանիութեամբ և կուսակցութեանը դիտակցաբար դավաճանելով, պահանջում ե անխնայ պայքարել նրա ամեն տեսակ դրսեվորումների դեմ. 3) վոր աջ և «ձախ» ոպորտունիստների այն փորձերը, վոր անում են նրանք կուսակցութեան դեմ միասնական պայքարի համար, տրոցկիստական վերքավորումների հետ զուգորդվող աջ ոպորտունիզմի պլանֆորմի վրա՝ բրիկ կտրվելու ուղղութեամբ, առանձին ուժգնութեամբ պահանջում են մշտական ու համառ պայքար մղել յերկու Փրոնտի վրա, հատկապես աջ ոպորտունիզմի դեմ, վորոպես գլխավոր վտանգի:

Կուսակցութեան յերկու Փրոնտով պայքարի ներկա շրջանի բոլոր յուրահատուկ դժերի պարզաբանումը պետք ե հիմնված լինի ներկուսակցական պայքարի պատմական փորձի ընդհանրացման վրա, վորը հեշտացնում ե յերկու Փրոնտով պայքարի նոր շրջանն ըմբռնելու դրժը:

Մրան համապատասխան, մշակման պլանը հետևյալ կերպ պետք ե լինի.

1. Կուսակցությունը յերկու Փրոնտով և հաշտվողականութեան դեմ պայքարելու ներկա շրջանում:
2. Միրքով—Ջոմինաճեյի աջ—«ձախ» բրիկը:
3. Կուսակցութեան պայքարը յերկու Փրոնտի վրա և աջ ոպորտունիզմի նախկին լիզերները վարմունքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ЛЕНИН.—Детская болезнь «левизны» в коммунизме. «В борьбе с какими врагами вырос, окреп и закалился большевизм» գրուելը (Յերկեր, XXV հատոր, կամ Յերկերի Ժողովածու—XVII հատոր):



ЛЕНИН.—Заметки публициста. Обединительный кризис в нашей партии. «Два взгляда на объединение» и «Борьба на два фронта» и «Преодоление уклонений» (Յերկեր, XIV հատոր, կամ Յերկերի ժողովածու, XI հատ., 2-րդ մաս) :

ЛЕНИН.—Новые времена, старые ошибки в новом виде. (Յերկերի ժողովածու, XVIII հատ., 1-ին մաս) :

СТАЛИН.—Еще раз о социал-демократическом уклоне. Раздел I. Предварительные замечания.

СТАЛИН.—Об индустриализации страны и о правом уклоне в ВКП(б).

СТАЛИН.—О правом уклоне в ВКП(б).

ՍՏԱԼԻՆ.—ԿԿ-ի քաղաքական հաշվետվության շարունակումը ՀամԿ(Բ)Կ XVI համադրումարին և հաշվետվության յեղրամակման խոսքը :

ЯРОСЛАВСКИЙ.—О новейшей эволюции троцкизма. ՀամԿ(Բ) Կ XVI համադրումարի բանաձեղերը :

Постановление Бюро МК о фракционной антипартийной работе Сырцова и Ломинадзе. ԿԿ-ի 1930 թ. սեպտեմբերի 3-ի դիմումը :

### ՀՈՒՎԱԾՆԵՐ «ՊՐԱՎԴԱ»-ԻՑ

ЯРОСЛАВСКИЙ.—Тринадцать лет борьбы с оппортунизмом. № 308.

Г. АВЕРБАХ.—О двурушничестве. № 300.

ГАРИН.—Блок на оппортунистической платформе. № 318.

Разоблачить в массах маневры правых. № 290.

Логика антипартийной борьбы № 297.

Партия не потерпит двурушников в своих рядах. №303.

Сильней огонь направо и налево. №303.

Как т. Рыков борется с правым уклоном. № 303.

Капитулянтская позиция правых и «левых» в вопросах индустриализации. № 304.

Старые песни на новый лад. № 305.

Тов. Бухарин проводит правооппортунистическую фракционную политику. № 305.

Нытье и хныканье правых и «левых» оппортунистов. № 306.

Партия дала единодушный отпор фракционерам, двурушникам предателям. № 307.

Против клеветы на аппарат пролетарской диктатуры. № 309.

Против клеветы на партийные кадры. № 310.

«Левые» лохматя правых оппортунистов. № 311.

О право-«левацких» «сигнализаторах» или суздальских звонарях № 312.

Против клеветы на рабочих класс. № 314.

ПЕСКАРЕВ.—Маневры «левака» Газганова. № 317.

(Մեթոդական մշակում)

### I. Թեմայի նպատակադրումը

Թեմայի հիմնական խնդիրն է՝ կուլտուրական հեղափոխության լինելու ուսմունքի հիման վրա, կուսակցության XV և XVI համադրումարները համապատասխան վերաշունչները հիման վրա կուլտուրականության ցանցում մշակել կուլտուրական շինարարության այն հիմնական խնդիրները, վոր դրված են կուսակցության առաջ տվյալ շրջանում, ամբողջ Ֆրոնտով ծավալված սոցիալիստական արշավի պայմաններում, ընթացիկ տարում ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ախարտելու համար մղվող պայքարի պայմաններում :

Ունենդիրները ուշադրության մոբիլիզացիան այդ խնդիրների շուրջը, վորոնք հաջողությամբ կարող են լուծվել կուլտուրայի Ֆրոնտում հայտարարվող թեքումների դեմ յերկու Ֆրոնտով անխնա պայքար մղելու և դասակարգային թշնամու ու նրա դադարարական գործակալների դեմ դրոհը շարունակելու հիման վրա միայն :— պետք է ապահովել ունենդիրների մասնակցությունը կուլտուրական հեղափոխության խնդիրների անմիջական իրականացման գործին :

Թեմայի մշակումը դուզադիպում է 1931 թ. կուլտուրայի կատարման համար պայքարելու հարվածային միամսյակին (վոր անց է կացվում Լեդսեյի, անվան դործարնի բանվորների նախաձեռնությունարտեսն «Իդվեստիա», 1931 թ. մայիսի 11-ի համարը) : Մշակման հետևյալանքով յուրաքանչյուր դպրոցն ու յուրաքանչյուր խմբակը ախարի պայքարը հանելով միամսյակի հաջողության համար, անհրաժեշտ է դրանով իսկ սկիզբ դնել ունենդիրների հետագա սխառեմատիկ մասնակցությանը կուլտուրական հեղափոխության մարտական խնդիրների լուծման դործում :

Կոմունիստը կուլտուրանակային է, կուլտեստաֆետայի առաջամարտիկը, կուլտարչավի կադակերպիչը, նոր դպրոցի համար պայքարող մարտիկը, կուլտուրական շարժման առաջավորը— ալպիսին են այն դործնական արդյունքները, վոր պետք է ձեռք բերվեն տվյալ թեման դպրոցներում և խմբակներում մշակման յենթարկելու հետևանքով :

### II. ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆԸ

1. Կուլտուրական հեղափոխությունը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման կարեորագույն պարբերակներից մեկն է :

<sup>1)</sup> Սույն մեթոդական մշակումը տանձին հրատարակությամբ լույս է տեսել 1931 թ. մայիսի 17-ին :



2. Կասկածազուրկ պայքարը կուլտուրական ֆրոնտում :
3. Յերկու ֆրոնտով պայքարը կուլտուրական շինարարութեան մեջ :
4. «Յերեսներս դեպի տեխնիկան» լողունը :
5. Կուլտուրական շինարարութեան կենտրոնական ճակատամասերը— ա) պայքար կադրերի համար, բ) ընդհանուր ուսուցում և դպրոցների սովորեցնելու համար, գ) անդրազրուցության վերացում :
6. Մասսաներին կուլտուրական ֆրոնտի հիմնական խնդիրները շուրջը մտքի լիզացիայի յենթարկելու ձևերը (կուլտարչավ, կուլտեստաֆետա) :
7. Միասնական կուլտուրան :

III. ԵՆԹՈՒԴԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՅԻ ՀԱՐՅՅԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ

1. Կուլտուրական հեղափոխությունը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման կարևորագույն պարբերակներից մեկն է

Այս բաժինը մշակելիս անհրաժեշտ է ամենից առաջ ընդգծել, Վոր կուլտուրական հեղափոխության ծավալումը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների հաջող լուծման կարևորագույն պայմաններից մեկն է հանդիսանում : Սոցիալիստական շինարարության շտեմնում տեմպերը, յերկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական խոչընդոտները, մասսաների քաղաքական ակտիվության վիթխարի աճումը աշխատավորական ամենալայն մասսաների հսկայական կուլտուրական վերելքի պահանջն են առաջադրում :

Այնուհետև անհրաժեշտ է կանգ առնել կուլտուրական շինարարության հարցերի առթիվ կուսակցության XV և XVI համագումարների ընդունած հիմնական դիրքավորումների վրա : Կուսակցության XV համագումարը առաջադրեց կուլտուրական հեղափոխության լողունը, Վոր առաջարկում է մտքի լիզացիայի յենթարկել միլիոնավոր մասսաներին կուլտուրային տիրապետելու և կուլտուրական շինարարությունը բայցևեիկյան տեմպերով ծավալելու համար : Կուսակցության XVI համագումարն իր վորոշումներում մատնանշեց, Վոր «կուլտուրական շինարարության տեմպերը յերկրում դեռևս բոլորովին անբավարար են» (ԿԿ-ի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևից), Վոր նրանք դեռևս յետ են մնում սոցիալիստական շինարարության տեմպերից, և առաջարկեց ուժեղացնել այդ տեմպերը : Այսպիսով, գրոհը կուլտուրական ֆրոնտում դառնում է սրբաբարձի և վող սոցիալիստական գրոհի անխզելի մասը :

Այնուհետև հարկավոր է մատնանշել, Վոր կուլտուրական հեղափոխության ծավալումը Վ. Ի. Լենինի համապատասխան ցուցմունքների և պատգամների ուղղակի կատարումն է հանդիսանում :

1922 թ. Լենինը գրում էր—«գլխավոր բանը, Վոր մեզ պակասում է, կուլտուրականությունն է, կառավարելու կարողությունը : Տնտեսապես և քաղաքականապես ՆԵՊ-ը մեզ համար ապահովում է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման հնարավորությունը : Խնդիրը «միայն» սրբաբարձի և նրա ավանդադրի կուլտուրական ուժերի մեջ է» (VIII Ленинский съезд, էջ 68) : Լենինյան այս արտահայտությունը, ինքնըստինքյան հասկանալի յե և առանձնապես ակտուալ նշանակություն է ստանում ներկայումս, յերբ մենք ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը :

Լենինը բազմիցս է ընդգծել կուլտուրական հեղափոխության սրբաբարձի : Նրա մասին նա գրել է նաև իր «Կոոպերացիայի մասին» վերջին հոդվածում :

«Մեզ մոտ,—գրում էր Լենինը,—քաղաքական և սոցիալիստական հեղաշրջումը նախորդը հանդիսացավ այն կուլտուրական հեղաշրջման, այն կուլտուրական հեղափոխության, Վորին դեմ առ դեմ մենք համենայն դեպս կանդնած ենք հիմա» : Այնուհետև—«Մեզ համար ներկայումս բավական է այդ կուլտուրական հեղափոխությունը, Վորպեսզի մենք դառնանք ամբողջապես սոցիալիստական յերկիր (Յերկ. ժող., XVIII հատ., II մաս, էջ 134-135) :

Այս բաժինը մշակելիս անհրաժեշտ է ողտադործել մեր կուլտուրական հետամնացության փաստերը (մեքենաների փչացման փաստերը Ստալինդրդի գործարանում, մի շարք փաստեր տվյալ ձեռնարկությունից, իորհանանությունից, կոլտնտեսությունից. գործալքում, հարբեցեղություն), Վորոնք արդեյակում են մեր զարգացման արագ տեմպերը :

2. ԴՍՍԱԿՍՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Բացատրելով, Վոր սրբաբարձի գրոհը կուլտուրայի ֆրոնտում հանդիսում է դասակարգային թշնամու կատաղի դիմադրության, սրբաբարձի սրբաբարձի պետք է բաց անի այդ դիմադրության զանազան ձևերը : Անհրաժեշտ է ցույց տալ, Վոր դասակարգային թշնամին կուլտուրական ֆրոնտում առանձին ճիւղերում ու ճարտարություն է հայտարարում, ամեն կերպ աշխատելով արդեյակել կուլտուրական հեղափոխությունը :

Անհրաժեշտ է, Վոր սրբաբարձի սրբաբարձի առանձնապես ընդգծի կուլտուրական ֆրոնտում դասակարգային թշնամու ցույց տված դիմադրության հետևյալ ձևերը .

- ա) Վնասարարություն դիտության մեջ—սոցիալիստական շինարարությանը թշնամի թեորիաների տարածումը, դիտական հետադո-



տության փոխարինումը կեղծ-գլխական նյութերով, փորձը նպատակաւն վնաս հասցնել խորհրդային իշխանությանը այս կամ այն բնագավառում: Իբրև որինակ կարելի չե բերել տեխնիկական պրոբլեմների «մշակումը» Ռամզինի և «Արդյունաբերական կուսակցության» մյուս անդամների կողմից, ագրարային պրոբլեմների «մշակումը» Կոնդրատյի, Չայանովի և մյուսների կողմից, տնտեսական պրոբլեմների մշակումը՝ Գրոմանի, Սուխոմի, Բազարովի, Ֆինն-Յենտտայիսկու, Ռոբինի և մյուսների կողմից:

բ) վնասարարություն կազերի պատրաստության դործում, վոր արտահայտվում է այն բանում, վոր ձգտում են կասեցնել ԲՈՒՀ-երի և տեխնիկական ԲՈՒՀ-երի վերակազմությունը, վիթեցնել ուսանողներին արտադրական պրակտիկան, դասավանդման նոր մեթոդները և այլն:

գ) Հոգեվորականության հակահեղափոխական ակտիվության աճում, վորոնք ձգնում են արգելակել կուլտուրական հեղափոխության պարզացումը:

դ) Կուլակային հակահեղափոխական ագիտացիան ընդհանուր պարտաիր ուսուցման և անբարեխոսության վերացման դեմ:

ե) Կուլակների փորձերը՝ քանդելու կուլտուրական աշխատանքի նյութական բազան (գարոցական շենքերի, խրճիթ-ընթերցարանների հրկիրումներ և այլն) և մեր շարքերից խլելու կուլտուրական ֆրոնտի առաջամարտիկներին (մահափորձեր կուլտուրչավի կազմակերպիչներին, լավագույն խրճիթավարներին, խորհրդային իշխանությանը նվիրված սուսցիչներին վրա):

զ) Կուլակային հակահեղափոխական իղկաները գեղարվեստական պրականության մեջ խոթելը (Պիլնյակ, Չամյատին):

Այս բաժնում անհրաժեշտ է կանգ առնել նաև այն շերտավորման վրա, վոր կատարվում է ղեկավարում և ինտելիգենցիայի ներսում: Մեկ կողմից, ինտելիգենցիայի զգալի ջանքերով մասսաներն սամբողջովն անցնում են պրոլետարիատի կողմը, մասնակցելով նրա սոցիալիստական արշավին: Մյուս կողմից, հին պեպետները և արտահայտվող ինտելիգենցիայի մնացորդները, վորոնք առաջ հույս էին դրել խորհրդային սիստեմի «խաղաղ վերաբերման» վրա, այժմ, հաջողութամբ ծավալվող սոցիալիստական շինարարության դեմ առ դեմ գալով, անցնում են հակահեղափոխության բանակը, «սոցիալիստական բազա» հանդիսանալով վրասարար Ռամզինիների, Կոնդրատյիսկուների, Գրոմանների և մյուսների համար:

3. ՅԵՐԿՈՒ ՅՐՈՆՏՈՎ ՊԱՅԲԱՐԸ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԵԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս բաժնում պրոպագանդիստն ունի զիրենքին պետք է բացատրի, վոր կուլտուրական ֆրոնտում կուսակցության գլխավոր գծից յեղոք

թեքումները անվում են նույն հյուսիսում, վորով անվում են սպորտոնիստական «թեքիան» ու սրակախկան քաղաքականության ու տնտեսական շինարարության հարցերում, և արտահայտություն են հանդհանում «բուրժուազիայի և բուրժուական իդեոլոգիայի ճնշմանը պրոլետարիատի ու նրա կուսակցության վրա դասակարգային պայքարի պայմաններում» (Մտային):

Այնուհետև անհրաժեշտ է բաց անել աջ և «ձախ» թեքումների դրսեվորումները կուլտուրայի ֆրոնտում:

Աջ սպորտուլիստները չեն տեսնում դասակարգային պայքարը կուլտուրական ֆրոնտում, տնտեսում են կուլտուրական հեղափոխության խնդիրները, չեն են դուրս գալիս կուլտուրական շինարարության բայլչելիլյան տեմպերին, «մանր-բուրժուական լիբերալիզմ» են հայտաբերում, ամբացնելով կուլտուրական աշխատանքի քաղաքական բովանդակությունը, մասսաների քաղաքական դաստիարակության մարտական աշխատանքը փոխարինելով սոսկական «կուլտուրարարությամբ»: Ինչպես տնտեսական շինարարության մեջ, այնպես էլ կուլտուրայի ֆրոնտում աջերը ինքնահոսի թեքիայի և սրակախկայի կրողներն են հանդիսանում, չմտնելով մասսաներին դեկավարելու, կուլտուրական հեղափոխության մարտական խնդիրներին շուրջը նրանց մոբիլիզացիային թարկելու անհրաժեշտությունը:

Կուլտուրական ֆրոնտում սպորտուլիզմի ամենից ավելի ցայտուն որինակ էր հանդիսանում ՀՍՄԿԽ-ի նախկին սպորտուլիստական դեկավարության կուլտուրական «սլավոֆորմը»: Փոխանակ պրոֆմիտությունների կուլտուրատը վորպես դասակարգային պայքարի գեղ ոգտապործելու, ընկ-Տոմսկին հանձնարարում էր հրաժարվել մասսաների քաղաքական դաստիարակությունից: «Գուք բանվորին ամեն ինչ տալիս եք տեղեկացով, վորոչ ուղտությամբ, —ասում էր ընկ-Տոմսկին պրոֆմիտությունների VI համագումարում, —դա բանվորին ձանձրացնում է, և նա ցանկանում է ինչ վոր ուղտություն չունեցող բան» (պրոֆմիտությունների VII համագումարի սղագրված հաշվետվություն, հրատ. ՀՍՄԿԽ-ի):

«Ձախ» սպորտուլիզմը կուլտուրական ֆրոնտում, ինչպես և մյուս ֆրոնտներում, արտահայտվում է «մանր-բուրժուական ուղիկալիզմով»: Մեկ կողմից, Տրոցկին ժխտում է անցման շրջանում բանվոր դասակարգի միջնոցով պրոլետարական կուլտուրա ստեղծելու հնարավորությունը, աշխատելով, վոր պրոլետարիատն անձնատուր լինի բուրժուական կուլտուրայի առաջ, մինիմալիստական խնդիրներ առաջադրելով, ամբողջ գործը հասցնելով իմպերիալիստական բուրժուազիայի կուլտուրայից ինչվոր մինիմում յուրացնելու աստիճանին («Մեր դարաշրջանը դեռևս նոր կուլտուրայի դարաշրջան չէ»: «Մեզ մասորահանդիստ է: Հարկավոր է լվանալ շապիկը, խուզել ու սանրել մազերը և, առաջին հերթին, մաքրել ու յուզել հրացանը»—(Л. Троцкий—«Литература и революция», 2-е изд. стр. 145):



Մյուս կողմից, որոշակիստները և «ձախ» խոստորողները կուլտուրական ֆրոնտում ձգնում են ուլտրա-«ձախ», «ուղղիկալ» ֆրազի ոգնությամբ կուսակցությանը հեռացնել կուլտուրական հեղափոխության մարտական խնդիրները լուծման աշխատանքից: Այսպես, որինակ, «ձախերը» գաղտնի վերացման իդեան են առաջադրում, այդ հիմնավորելով վաղջ ուսուցումն անմիջապես արտադրությունը փոխադրելու անհրաժեշտության մասին խոսող ճոճուան ֆրազով: Այս «խոստորումները» ձեռնուու յեն միայն կուլակներին և նրանց իդեոլոգներին, վորոնք չահագրդւլած են պարտադիր ուսուցման և դպրոցի պոլիտեխնիդացիայի վիժեգրման խնդրով: «Չախ» խոստորման այդպիսի արտահայտություն և հանդիսանում նաև մի քանի աշխատողների դիրքը հակաիրոնական պրոպագանդի հարցերում: Նրանք պնդում են, թե «մեր լանվորներն աստուուն չեն հավատում, և հակաիրոնական աշխատանքը մեղ մոտ այնքան էլ ախուուալ չե»: Թուլացնելով հակաիրոնական ֆրոնտը, «ձախերը» գրանուլ իսկ ուժեղացնում են յեկեղեցականների և կուլակության դիրքերը:

#### 4. «ՅԵՐԵՍՆԵՐՍ ԴԵՊԻ ՏԵՆՆԻԿԱՆ» ԼՈՁՈՒՆԳԸ

Այս բաժնին վերաբերյալ զրույցը պետք է շարկապել անմիջապես այն պայքարին, վոր մղվում է կուլտուրայի ֆրոնտում, կուսակցության գլխավոր դժի համար: «Յերեսներս դեպի տեխնիկան» լոզունդը շինարարության մեջ կենսագործելու կարողություն, այս վճռական ողակից բռնելու և նրան համապատասխան կուլտաշխատանքի վողջ սխտեմը փոխելու կարողություն—այդպիսին է այն փորձաքարը, վորի վրա պետք է առաջին հերթին ստուղման յենթարկվի այս կամ այն կադակերպության կարողությունը կուլտուրայի ֆրոնտում կուսակցության գլխավոր գժի իրականացման համար պայքարելու խնդրում:

Այս բաժնի մշակման հիմքում պետք է դնել ընկ. Ստալինի ճառը «տնտեսավարների խնդիրների մասին» (տես «Սոցիալիստական արդյունարերության տնտեսավարների կոնֆերանսի արդյունքները» վերնագրով մեթոդական մշակումը): Հետևաբար մշակման պլանը կլինի հետևյալ կերպ.

ա) Արդֆինպրնի կատարման համար անհրաժեշտ յերկու հիմնական պայմանները—մեկ կողմից՝ որյեկտիվ հնարավորությունների սուկայությունը, մյուս կողմից՝ «մեր ձեռնարկությունները դեկավարելու ցանկություն և կարողություն»:

բ) Առաջին պայմանը մենք ունենք:

գ) Անհրաժեշտ է նվաճել յերկրորդ պայմանը: «Հարկավոր է վոր քնններս դառնանք մասնագետներ, մեր գործի տերեր, հարկավոր է յե-

րեսներս շուտ տալ դեպ տեխնիկական գլխավորները» (Ստալին—«Տրնտեսավարների խնդիրների մասին»):

Այնուհետև հարկավոր է կանգ առնել տեխնիկայի համար պայքարելու նոր ձևերի վրա, վորոնք ներկայումս առաջադրվում են մասսաների կողմից—Ստալինի անվան տեխնիկայի բրիգադներ, ՃՏՄ-ների շեֆությունը տեխնիկան ուսումնասիրող բանվորական խմբակների վրա, տեխնիկան մասսայական լուսավորության և կուլտուրավորության ցանցի մեջ մտցնելը, դասընթացների նոր ցանցը, հեռակա տեխնիկական կրթության ամուսը և այլն:

Առանձնապես պետք է կանգ առնել ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի վերջին վորոշման վրա, վորը վերաբերում է բանվորական կրթության միասնական սխտեմ մտցնելուն (տես «Իդվեստիա», 1931 թ. մայիսի 10-ի համարում): Այդ սխտեմի առանձին ողակիները (ներածական դասընթացներ, արտադրական-պոլիտեխնիկական դասընթացներ, բանվորական տեխնիկական դպրոց, տեխնիկում և տեխնիկական ԲՈՒՀ) պետք է ապահովեն տնտեսագրական վորակավորումների և պատրաստության տեր բանվորների ընդդրվումը տեխնիկական ուսուցման ցանցում: Այնչեվ որս էլ բանվորական կրթության ցանցում դոյություն ունեցող անախագործական յեղանակների ու աշխատակցության վերացումը և առավելադույն չարիով կարճ ժամկետում բանվորների ընդհանուր տեխնիկական ուսուցումն իրագործելը պետք է հսկայական արդյունք ունենան «յերեսներս դեպի տեխնիկան» լոզունդն իրականացնելու գործում:

#### 5. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱԿԱՏԱՍՍԵՐԸ

Անհրաժեշտ է ունկնդիրներին ծանոթացնել կուլտուրական ֆրոնտի կենտրոնական ճակատամասերում (պայքար կադրերի համար, պարտադիր ուսում, անդրագիտության վերացում) կուսակցության ձեռք բերած նվաճումների և հետագա անելիքների հետ: Հասկանալի յե, վոր նախորդը պետք է հիմնավորել, թե ինչու՞ այս ճակատամասերը հիմնական ու գլխավոր են հանդիսանում:

Ինչ վերաբերում է կադրերի պրոբլեմին, ապա անհրաժեշտ է ունկնդիրներին հիշեցնել այդ հարցի առթիվ կի-ի հուլիսյան և նոյեմբերյան (1928 թ.) պլենումների վորոշումները: Հուլիսյան պլենումը կադրերի պատրաստման գործն ուղղակի կապակցեց «վող միայն մեր, այլև արտասահմանյան գլխությունն ու տեխնիկան մեր արտադրության մեջ ամեն կերպ արմատացնելու» (պլենումի բանաձևից) անհրաժեշտության հետ: Նշելով, մի կողմից՝ այն, վոր տեխնիկական մասնագետների պահանջը չի համապատասխանում նոր կադրերի պատրաստության գործի դրությանը, իսկ մյուս կողմից այն, վոր հին մասնագետների մեջ կան «սոցիալիստական ինդուստրացման վնասարարներ»



և այն սարտաթի յենթարկողներ», հուլիսյան պլենումը կազմեցին պատրաստման համար պայքարելը գտավ վորսես «վողջ կուսակցութեան կարևորագույն խնդիրը»: ԿԿ-ի նոյեմբերյան պլենումը նշեց, վոր «մենք գտնվում ենք մասնագետների պահանջի ու նրանց անմասնակց տեսլաների «մկրատի» ծայրերի հսկայական հեռացման առաջ»: «Դա, —ասվում է պլենումի վորոշման մեջ, —կարող է արգելակ դառնալ սոցիալիստական անտեսութեան հետագա զարգացման համար»:

Ընդհանուր պարտադիր ուսման մասին ընկ. Ստալինը կուսակցութեան XVI համագումարում խոսում եր վորսես կուսակցական հեղափոխութեան վճռական քայլի մասին: XVI համագումարն իր վորոշումների մեջ գտավ, վոր «ընդհանուր պարտադիր ուսուցման և անգրագիտութեան վերացման կիրառումը վողջ կուսակցութեան մարտական խնդիրը պետք է դառնա» (ԿԿ-ի ղեկուցման առթիվ ընդունված բանաձևից):

Կուսակցական շինարարութեան հարվածային ճակատամասերի լուսարանման կապակցութեամբ հարկավոր է ունկնդիրներին ուշադրութեամբ դարձնել նաև նախադրոցական դաստիարակման գործի վրա, վորն առանձնապես մեծ նշանակություն է ստանում կանանց արտագրութեան մեջ ներգրավելու հետևանքով:

Պարզաբանելով կուսակցական Փրոնտի կենտրոնական ճակատամասերը, պրոպագանդիստը պետք է ունկնդիրներին ծանոթացնի այն արդյունքներին հետ, վոր կուսակցութեանը ձեռք է բերում այդ ճակատամասերից յուրաքանչյուրում ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Մոսկվայի մարզում: Ինչ վերաբերում է Մոսկվայի մարզի ավյալներին, ապա այդ պետք է քաղել Մոսկվայի մարզի խորհուրդների և համագումարի նյութերից (ընդհանուր պարտադիր ուսուցման ու անգրագիտութեան վերացման մասին զբված ղեկուցումը և համագումարի բանաձևերը): Հարկավոր է նաև մշակման յենթարկել ավյալ շրջանում կատարված կուսակցական շինարարութեան արդյունքները, ոգտագործելով տեղական նյութերը և ամենից առաջ խորհուրդների շրջանային համագումարների նյութերը:

Ստորև ապիս ենք մի քանի տեղեկատու նյութեր ԽՍՀՄ-ի և Մոսկվայի մարզի վերաբերյալ: Թե այս և թե պրոպագանդիստների ու ունկնդիրների ձեռք բերած այլ ավյալների հիման վրա, անհրաժեշտ է ավելի մանրամասն կանգ առնել կուսակցական շինարարութեան հետագա խնդիրների վրա, յենթելով այն բանաձևից, վոր ընդունեց Մոսկվայի մարզի խորհուրդների յերկրորդ համագումարն ընկ. Լյուբիմովայի ղեկուցման առթիվ:

ա) Կադրերի համար պայքարելու մասին

«Վերջին յերեք տարում, յերբ Շախտիի գործի կապակցութեամբ կուսակցութեանը տեխնիկական կադրերի պատրաստման համար հրահայական աշխատանք ծավալեց, մենք այդ գործում խոշոր առաջնացում ունեցանք: Տեխնիկական ԲՈՒՀ-երի ու տեխնիկումների ավարտողները ներկայումս մի քանի անգամ ավելի յեն քան այն, ինչ մենք ունեյինք ըմգամենը յերկու տարի առաջ: Արդյունաբերութեան մեջ զգալի չափով ավելացել են ինժեներ-տեխնիկական անձնակազմի կադրերը, առավելապես յերիտասարդները: Ընթացիկ տարում արդյունաբերութեան մեջ մենք ինժեներ-տեխնիկական անձնակազմ կուսակցական համեմատաբար (100 բանվորին) յերեք անգամ ավելի, քան 1927 թ.: Արդյունաբերութեան ղիտական աշխատողների կադրերը հենց միայն անցյալ մեկ տարում ավելացան 100%-ով, իսկ ղիտական-հետադրոսական մարմինների աշխատողների ընդհանուր թիվն ավելացավ 106%-ով: Հարկավոր է առաջիկայում ևս յեռանդով ծավալել այս աշխատանքը» (Մոլոտով, խորհուրդների համամիութենական VI համագումարում աված ղեկուցումից):

բ) Պարտադիր ուսուցման և պալիտեխնիկայի մասին

Նախնական դպրոցներում սովորողների թիվը հասցված է 14 միլիոնի: 1930 թ. յերկրորդ կիսամյակում նախնական դպրոցներն են ուղարկված 60 հազար նոր ուսուցիչներ. բանվորական շրջաններում և բանվորական ավաններում փաստորեն իրագործվում է պարտադիր յոթնամյա ուսուցման անցնելը:

Հայտնի յե, վոր ցարական Ռուսաստանում նախնական ուսուցման ամենից ավելի արագ աճումը յեղել է 1905-1914 թ. թ.: Այդ ժամանակամիջոցում (9 տարում) նախնական դպրոցներում սովորողների թիվը 4,479,741 հոգուց բարձրացավ 6,535,955 հոգու, կամ 45%-ով: Իսկ խորհրդային յերկիրը 8 տարում—1923-1931 թ. թ.—կարողացավ նախնական դպրոցներում ձովորողների թիվը 6.721.567 հոգուց հասցնել 14.380.000 հոգու, այսինքն ավելի քան յերկու անգամով:

Դպրոցի պոլիտեխնիկացիան իրագործվում է. ա) դպրոցներն ամբողջնելով գործարաններին, մեքենա-տրակտորային կայաններին, յտրհանտեսութեաններին և կալտեսութեաններին. բ) կադմակերպելով աշակերտների արտադրական աշխատանքը, վոր սերտորեն չաղկապվում է տեսական ուսուցման հետ, և աշակերտական ամբողջ մասային ակտիվ մասնակից դարձնելով սոցիալիստական շինարարութեանը:

Պարտադիր ուսուցման և պոլիտեխնիկացիայի հետագա խնդիրները նշված են ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի 1931 թ. փետրվարի 31-ի վորոշման և խորհուրդների համամիութենական VI համագումարի վորոշումների մեջ:



Մոսկվայի մարդում ընդհանուր պարտադիր ուսուցման գործում ձեռք են բերված հետևյալ արդյունքները: 8-11 տարեկան յերեխաներին դպրոցում ընդգրկելու խնդիրը հիմնականում արդեն լուծված է: I աստիճանի դպրոցներն են ընդգրկված 1.062.000 յերեխաներ: Մոսկվայում և 99 քաղաքային ու արդյունաբերական կետերում մտցված և պարտադիր յոթնամյա ուսուցում: Պարտադիր ուսուցմամբ ընդգրկված են 11-15 տարեկան 44000 պատանիներ: 1930 թ. չինված է 436 նոր շենք. նախնական դպրոցների հասկացումները 1930 թ. 32 միլ. ուսուցող 1931 թ. հասցված են 46 միլ. ուսուցող: Համաձայն Մոսկվայի մարդի խորհուրդների II համագումարի վերջին, 1931 թ. լրացուցիչ կերպով պարտադիր յոթնամյա ուսուցում և մտցվելու 29 չըջանում (Յենթամոսկովյան ավազանի և ՄՏԿ-ներին չըջաններ):

գ) Անգրագիտության վերացման մասին:

«ՌՍՖՍՀ-ի ժողովուրդները, անդրադիտությունը յերեք տարում վերացնելու հաշվից յեղնելով, 1929-30 տարվա համար հաստատեց 4 միլ. հոգու անգրագիտություն վերացման ուղեքարտի պլան: Տեղական կազմակերպությունները կողմից այս պլանը ավելացվեց 10 միլ. հոգով, ըստ վորում աշխատանքն սկսեց ծավալվել սոցմրցման և կուլտարաշարժի մեթոդների լայն կիրառման հիման վրա: Յեթե 1927-28 թ. մենք սովորեցրինք 50.000 հոգու, 1928|29 թ. 2 միլիոն հոգու, ապա 1929|30 թ. սովորեցվելու յեն 10.5 միլ. անգրագետները» (Կազանովիչ—XVI կուսհամագումարում տված զեկուցումը): 1931 թ. նախատեսված է ուսուցմամբ ընդգրկել 17.5 միլ. անգրագետ:

Մոսկվայի մարդում ծավալված կուլտարաշարժի հետևանքով ուսուցմամբ ընդգրկված է 600.000 հոգի: Սակայն այս արդյունքները միանգամայն անբավարար են. Մոսկվայի մարդի խորհուրդների II համագումարն անգրագիտության վերացման աշխատանքի դրույթունը գտավ վոչ-բավարար: Համագումարը խնդիր առաջադրեց մարդի վողջ չափահաս աղջարնակություն (մինչև 50 տարեկանները քաղաքներում և մինչև 40 տարեկանները գյուղերում) անգրագիտության վերացումն ավարտել 1931 թ., իսկ կիսաանգրագիտության վերացումը՝ 1932 թ.: Մրա համար լիկկայանները պետք է դարձնել յերկամյա և յեռամյա դպրոցներ՝ պոլիտեխնիկական թեքումով, իսկ գյուղում՝ աղբո թեքումով: Այժմ Մոսկվայի մարդում մենք ունենք ուսուցմամբ չընդգրկված 50.000 հոգի, պրոֆմիտության անդամները թե քաղաքում և թե մարդում ընդգրկված են ամբողջապես: Բացի դրանից, մենք ունենք համատարած գրագիտության ամբողջ չըջաններ, որինակ՝ Պոդոլսկի, Մխտիչլինյան, Շատուրի, Կլինի, Կանակովկսի, Կլեպիկովսկի և այլն:

6. ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐԱԸ ՄՈՒԻԼԻԶԱՑԻԱՑԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ

Այս բաժինը պետք է նվիրել կուլտուրական աշխատանքի այն նոր ձևերի ու մեթոդների պարզաբանմանը, վոր ստեղծել են յրենք մասսաները կուլտուրայի համար պայքարելու: Այս ձևերից հիմնականներն ու գլխավորներն են կուլտարաշարժ և կուլտեստաֆետան:

Կուլտարաշարժն յերենից ներկայացնում է մասսաների այն շարժումը, վոր նպատակ ունի արտադետել կուլտուրական ֆրոնտի վորոշ բնագավառին: Այդպիսին է արշավը անդրադիտություն վերացման համար. պարտադիր ուսուցման համար, գրագրաբանային արշավը, նախադպրոցական արշավը և այլն: Արշավները, վոր մեղ մոտ լայն տարածումն են գտել, կուլտուրայի համար մղվող պայքարի մեջ են ներգրավել հարյուր հազարավոր կուլտրանակայիններին՝ բանվորներին, գյուղացիներին և ինտելիգենցիային: Կուլտրանակայինները կուլտուրական աշխատանքի ազդիտատորներն են, նրա կազմակերպիչները և մի շարք դեպքերում՝ անմիջական կիրառողները: Կուլտարաշարժը պայմաններում կուլտաաշխատանքը դադարում է գերատեսչական գործ լինելուց և դառնում է դասակարգային թշնամու գլխավորությունը յորտակող ու կուլտուրական շինարարության գործում վիթխարի տեմպեր ձեռք բերող մասսաների անմիջական գործը:

Կուլտեստաֆետան սոցմրցման ամենաբարձր ձևերից մեկն է կուլտուրական ֆրոնտում: Նրա տարբերիչ առանձնահատկությունները հետևյալներն են— ա) նա տարվում է լայն ֆրոնտով, ընդգրկելով կուլտուրական շինարարության վոչ-առանձին բնագավառները (ինչպես այդ կուլտարաշարժումն է), այլ նրա ամենից ավելի վճռական ողակները. բ) նա տարվում է կոնկրետ առաջադրությունների (մարչրուտներին) հիման վրա. գ) կուլտեստաֆետային հենակետերն են ձեռնարկությունները, կոլտնտեսությունները և յորհանտեսությունները, վորոնք իրար հետ մրցության են յեղնում. կուլտրանակայինների հիմնական մասսան կազմում են բանվորները, կոլտնտեսականները, չըավորները և միջակները. դ) կուլտեստաֆետան անմիջապես շողկապվում է արդ-ֆինսյանի և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարին: Կուլաշինարարության գործում մասսաներից ուց տված մասնակցություն ամման պրոցեսում կուլտարաշարժ և կուլտեստաֆետան լրացվում են կուլտուրական հեղափոխության խնդիրներին հարվածային իրադորմման մի շարք ձևերով ու մեթոդներով: Կուլտպոստեր կն առաջանում ձեռնարկություններում և կոլտնտեսություններում, հետզհետե ավելի ու ավելի յե տարածվում կուլտուրամբ, վորպես կուլտաաշխատանքի արադ վերակառուցման և ձեղբվածքների վերացման մեթոդ: Կուլտուրական շինարարության պրակտիկայի մեջ է փոխադրված «հասարակական բուքսիրը» և այլն:



7. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈՒԼՏՊԼԱՆԸ

Թեմայի վերջին մասում ունկնդիրներին առաջ պետք է դնել միասնական կուլտուրային պրոբլեմը: Միասնական կուլտուրային խնդիրն է՝ միացնել զանազան կաղամկերպությունների (լուսբաժինների, պրոֆմիությունների, կոմյերիտմիության, կամավոր ընկերությունների, կոոպերացիայի) կողմից տարվող կուլտուրատանը և ճիշտ պլանապրոբլեմի յենթարկել: Միասնական պլանի մշակման և իրականացման գործը ղեկավարում են կուլտխորհուրդները, վորոնք դառնում են կուլտուրական հեղափոխության շտաբներ: Միասնական կուլտուրային պետք է ունենա յուրաքանչյուր գործարան, կոլտնտեսություն, խորհանտեսություն, գյուղ, շրջան և վերջապես՝ մարդ: Այս պլանը հանդիսանում է ծավալուն ստրատեգիական պլան այն գրոհի համար, վոր վարում է պրոլետարիատը կուլտուրական ֆրոնտում:

Կուլտուրային համար մղվող պայքարում, մասսաներին կուլտուրական ֆրոնտի հիմնական խնդիրներին շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու գործում ամենալուրջ առաջընթաց քայլ պետք է հանդիսանա հարվածային միամսյակը, վոր անց է կացվում Լեպսեյի անվան գործարանի բանվորների նախաձեռնությամբ (մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ը): Միամսյակի նպատակն է՝ ստուգել 1931 թ. կուլտուրային իրացման ընթացքը և ապահովել նրա 100% -ային կատարումը:

Ամսվա ընթացքում անհրաժեշտ է կուլտուրային հասցնել յուրաքանչյուր կուլտրանակայինին, խոշոր չափով բարձրահինել կուլտխորհուրդներին ակտիվությունը, անհապաղ վերացնել յեղած ձեղքվածքները: Վողջ լուսավորության աշխատանքը փոխանցել ամառային ձևերի և լուսապարտը ամենավաճառական ձևով շուտ տալ յերեսով դեպի արտադրությունը, դեպի արդֆինսպլանի համար մղվող պայքարը, դեպի գյուղատնտեսական կամպանիաների խնդիրները, դեպի շինարարությունները և այլն:

Ամբողջ մշակման ավարտումն ու գործնական արդյունքը պետք է լինի այն, վոր կուլտուրավորության ցանցը մասնակցի հարվածային միամսյակի անցկացմանը: Սրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գայրոցում ամենից առաջ պարզաբանել և քննարկել կուլտ-կրթական աշխատանքի դրությունը տվյալ ձեռնարկությունում, տվյալ խորհանտեսությունում ու կոլտնտեսությունում, ստուգել, թե կուլտուրային կա՞րողյոք, կուլտխորհուրդը կաղամկերպված է, ի՞նչպես են բոլոր տեղական կուլտուրական կրթությունների և լուսհիմնարկների կիսամյա աշխատանքի կոնկրետ արդյունքները: Պարապմունքներում անհրաժեշտ է մշակել միամսյակի պլանը, ստուգել, թե նա ի՞նչ չափով է համապատասխանում կուլտուրական ֆրոնտում կուսակցության ունեցած խնդիրներին և այլն, վերջապես խմբակը պետք է ակտիվ մասնակցություն ունենա միամսյակի ծավալմանը, առաջամարտիկը հանդիսանա կուլտ-

բանակներին վողջ աշխատանքը նոր, ավելի բարձր աստիճանի փոխադրելու գործում, աշխուժացնի կուլտարչալին ու կուլտեստաֆետան, առաջ յարժի ընդհանուր տեխնիկական ուսուցման իրականացման գործը, կարգավորի պրոլետարիական դպրոցի յերեսաների պարապմունքները գործարանում կամ գյուղատնտեսության մեջ, մի շարք ղեկուցումներ անցկացնի միամսյակի նշանակության մասին: Այդպիսին են այն խնդիրները և աշխատանքի որինակելի ձևերը, վորոնք կարող են հանձնարարվել տեսական ուսուցումը մեր շինարարության պրակտիկայի հետ շաղկապելու համար: Ունկնդիրներին մասնակցությունը հարվածային յեռամսյակին պետք է սկիզբը հանդիսանա այն սիստեմատիկ մասնակցությանը, վորը նրանք պետք է ունենան հետագայում կուլտուրական շինարարության գործում:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ-Ի 1931 Թ. ՈՂՈՍՏՈՍԻ 5-Ի ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱԲ

ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԱՐՈՒՄԸ

Տվյալ թեման մշակելիս հիմնական խնդիրներն են— հիմք ունենալով տեխնիկայի՝ վորպես սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն այլախելու գործում վճռական դեր խաղացող ողակի նշանակության յուրացումը, պարզել, վոր տեխնիկական ուսուցումն ու տեխնիկական պրոպագանդը ներկա մոմենտի կարևորագույն խնդիրն են հանդիսանում. մանրամասն մշակման յենթարկել Համկ (բ) Կ ԿԿ-ի վորոցումը, ինչպես և ԿԿ-ի կողմից հավանություն ստացած այն դիրքավորումները, վորոնք ներկայացվեցին տեխպրոպագանդի վերաբերյալ ղեկուցազրում, այդ տեսանկյան տակ վերլուծության յենթարկելով տեխպրոպագանդի դրությունն ու հեռանկարները տվյալ ձեռնարկությունում. ցույց տալով, վոր մենք ունենք տեխնիկայի տիրապետման խնդրում մեր նշած պլաններին կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները, դպրոցի ունկնդիրներին մոբիլիզացիայի յենթարկել ակտիվ մասնակցություն բերելու տեխպրոպագանդի կաղամկերպման գործին. բացատրել, վոր տեխնիկայի տիրապետման ֆրոնտը դասակարգային պայքարի ճակատամասերից մեկն է հանդիսանում, և ունկնդիրներին պետք է պայքարելու ընդդեմ ինքնահոսիսն ապավինելու աջ ոպորտունիստական պրակտիկայի, նմանապես ընդդեմ «ձախ» խոտորումների, վորոնք տեխնիկական պրոպագանդը փոխարինում են սոսկական վարչարարությամբ:



ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆԸ

- I. Տեխնիկային տիրապետելու խնդիրը :
- II. Տեխնիկական պրոպագանդի նշանակութիւնը ներկա շրջանում :
- III. Տեխնիկական պրոպագանդի մեթոդները :
- IV. Բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական խնտելիզեցեցիկ ստեղծելու խնդիրները :

ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆԲՆԵՐ ՅԵՎ ԹԵՄԱՅԻ ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՄՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Թեմայի առաջին բաժնի մշակումը պետք է կառուցել այն հիմնական դրութիւններին շուրջը, վոր առաջադրեց ընկ. Ստալինը սոցիալիստական արդյունաբերութեան աշխատողներին համամիտութեան կոնֆերանսում և տնտեսալարներին շորհրդակցութիւնում : Մասնանշեկում այն անհամաշարիութիւնը, վոր կա մեր ամենատաղաւոր սոցիալիստական կարգերի և մեր տեխնիկական-տնտեսական հետամնացութեան միջև, ունկնդիրներին հիշեցնելով առավելն տասը տարում տեխնիկական-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու մեր պատմական խնդիրը, հարկավոր է մանրամասն վերլուծել մեր այն առավելութիւնները, վորոնք հնարամարման վերլուծել են տալիս լուծել այդ պատմական խնդիրը : Վերջին հարցի վերլուծութեան համար հարկավոր է ընթերցել ընկ. Ստալինի հունվարյան ճառի այն հատվածը, վորը նվիրված է մեր կարգերի բնութադրութեանը :

Յերկրի ինդուստրացման և դյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ասպարիղում ձեռք բերված վիթխարի հաջողութիւններին բնութագրութեամբ հարկավոր է հաստատել այն դրութիւնը, վոր «խորհրդային կարգերը մեզ տալիս են արդէ առաջխաղացման այնպիսի հնարավորութիւններ, վորոնց մասին չի կարող յերագել և վո՛չ մի բուրժուական յերկիր» (Ստալին) :

Այնուհետև ունկնդիրներին հիշեցնելով մեր պլաններին իրացման համար անհրաժեշտ յերկու պայմանների մասին («որչեկտիվ» հնարավորութիւնները և ղեկավարելու ու նոր ձևով աշխատելու կարողութիւնները), ընդգծելով վերևում վերլուծված «որչեկտիվ» հնարավորութիւններին առկայութեանը, հարկավոր է մանրամասն կանգ առնել նոր ձևի աշխատանքի ու ղեկավարման եյութեան վրա, վորը մասնանշեց ընկ. Ստալինն իր հունիսի 23-ի ճառում : Այստեղ գլխավոր խնդիրն այն է, վորպետք է ունկնդիրները հասկանան, վոր տեխնիկային տիրապետելու խնդիրը անխղիչ, որդանական կապերով կապված է նոր ձևով ղեկավարելու խնդրի հետ :

Տվյալ ձեռնարկութեան կյանքից որինակներ բերելու միջոցով հարկավոր է ցույց տալ թե ի՞նչպես տեխնիկայի տիրապետումը տնտեսաւարներին ու բանվորներին կողմից կոժանդակի բարձրացնելու աշխատանքի արտադրողականութիւնը, լավացնելու արտադրանքի վորակը, ուժեղացնելու արտադրութեան տեմպերը, պայքարելու համասարեցման ու դիմադրկութեան դեմ, կատարելու արդիւնաւորանք : Այնուհետև կարճ կերպով կանգ առնելով այն բանի վրա, վոր վնասարարութիւնն, իրեն հիմք ունենալով դասակարգային պայքարը, լայն չափեր է ստացել շորհիւլ այն հանգամանքի, վոր շատ տնտեսաւարներ չեն կամենում խառնվել տեխնիկայի խնդիրներին, — հարկավոր է ունկնդիրներին հանդել տալ այն յեղրակացութեան, վոր մենք ինքներս «պետք է դառնանք մասնագետներ, մեր գործը գիտակցողներ, դառնանք մեր գործի լիակատար տերեր», վորովհետև «միայն դրանումն է այն բանի յերաշխիքը, վոր մեր պլանները լիովին իրագործելի յին» :

ՏԵՄՆԻԿԱՅԻՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՆՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱ ՇՐՋԱՆՈՒՄ

Թեմայի տվյալ բաժնի մշակման հիմքում պետք է դրվի ՀամԿ(Բ)Կ Կցի-ի ռոգոտտի 5-ի վորոշումը տեխնիկական մասին և տվյալ արտադրութեան ու մի շարք այլ ձեռնարկութիւնների կյանքից վերցված փաստերը :

Ամենից առաջ անհրաժեշտ է ունկնդիրներին առաջ նշել սոցիալիստական տեխնիկայի դարգացման հիմնական դժերը — ելեկտրիֆիկացիան, մեխանիկացիան և քիմիկացիան, բացահայտել այս յերեք խնդիրներից յուրաքանչյուրի դերն ու նշանակութիւնը, ընդգծելով նրանց փոխադարձ կապը և ելեկտրիֆիկացիայի առաջատար նշանակութիւնը : Հարկավոր է նաև կանգ առնել ստանդարտիկացիայի մասնագիտացման և այլ խնդիրների վրա, վոր անխղիչ կապերով կապված են մասսայական արտադրութեան մեթոդների հետ :

Այս հիման վրա հարկավոր է ունկնդիրներին հանդել տալ այն յեղրակացութեանը, վոր այն ժամանակ, յերբ անլուծելի հակասութիւններից բղկալված կապիտալիստական հասարակարգը խոչընդոտ է դառնում տեխնիկայի առաջադիմութեան ճանապարհին, խորհրդային Միութեան պրոլետարիատը, որտաղործելով կապիտալիստական տեխնիկայի ամբողջ վործը, դարգացնելու և կառուցելու յե նոր տեխնիկա — սոցիալիստական տեխնիկա : Այստեղ ունկնդիրների ուշադրութիւնը պետք է սրել այն անհամաշարիութեան վրա, վոր դրութիւնն ունի վերելում ցույց տրված խնդիրների և բանվորութեան տեխնիկական ցածր մակարդակի միջև :

Ունկնդիրներին հիշեցնելով այն մասին, վոր ընթացիկ տրաին 518 նոր ձեռնարկութիւնների դործարկման տարի յե հանդիսանում, ընդ-



զծելով, վոր մենք մեր ձեռնարկութիւնները կահավորում ենք նորա-  
զույն սխտեմներէ իմպորտային մեքենաներով ու սարքավորումներով,  
արձանագրելով գործող ու նոր ձեռնարկութիւններէ համար պահանջ-  
վող վորակյալ բանուժի պահանջը և արդշունարբութեան մեջ առա-  
ջին անգամ մտնող բաղմամբի նոր բանվորներէ հոսանքը դեպի ձեռ-  
նարկութիւնները, հարկավոր և հիմնավորել այն յեղրակացութիւնը,  
վոր անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներէ բացակայութիւնը փաս-  
տորեն դառնում է մեր տնտեսական պլաններէ կատարման գլխավոր  
խոչընդոտը:

Համապատասխան որինակներ բերելով Ստալինգրադի տրակտորի  
գործարանի արտադրութեան տիրապետման փորձից և տվյալ ձեռնար-  
կութեան աշխատանքից, հարկավոր է ունկնդիրներէն հանգել տալ այն  
յեղրակացութեանը, վոր տեխնիկայի տիրապետումը պետք է մասնա-  
յական բնույթ ստանա և վոր տեխնիկական անգրագիտութեան վերա-  
ցումն անհրաժեշտ է անցկացնել «բոլոր կողմերից, բոլոր հնարավոր  
միջոցներով», այդ թիւում նաև «բաղմազան տեխնիկական պրոպագան-  
դով»: Դրանից հետո հարկավոր է անցնել չսովորած բանվորներէ, վո-  
րակյալ բանվորներէ, միջին ու բարձր տեխնիկական և վարչա-տնտե-  
սական անձնակազմի մեջ տեսլարողանդ վարելու ընթացիկ խնդիր-  
ներէ բացատրմանը:

Զրույցի այս մասը պետք է անցկացնել առավելագույն չափով ող-  
տագործելով տեղական նյութերը, քննելով այն հանգամանքը, թե  
այդ խնդիրներն ինչպես պետք է կոնկրետացվեն տվյալ ձեռնարկութեան  
պայմաններում, ըստ վորում ցանկալի յե պլան մշակել այն մասին, թե  
դպրոցն ինչպես պետք է մասնակցի տեսլարողանդ խնդիրները գոր-  
ծարանում մասսայականացնելուն, այդ խնդիրներէ իրացումն ստուգե-  
լուն և այլն:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Այս բաժնի մշակման սկզբում պետք է ընդգծել, վոր տեխնիկա-  
կան պրոպագանդի մեթոդներն ամբողջապես պայմանավորվում են այն  
հիմնական նպատակներով, վոր դրված են նրա առաջ: Ուստի անհրա-  
ժեշտ է կանգ առնել այդ նպատակներէ վրա, վորոնց իրագործմանը  
պետք է հարմարեցնել տեխնիկական պրոպագանդի վորջ սխտեմը:

Հենց այս տեսանկյան տակ էլ հարկավոր է քննարկել տեխնիկական  
պրոպագանդի մեթոդները: Հարկավոր է ունկնդիրներէն բացատրել,  
վոր չափահասներէ տեխնիկական անգրագիտութեան վերացումը պա-  
հանջում է տեխնիկական ուսուցումն անպայման համատեղել բանվորի  
արտադրական ակտիվութեան ու տեխնիկական ստեղծագործութեան  
դրսեվորման հետ: Ուշադրութեան կենտրոնակետ դարձնելով սովորող  
դպրոցային, նրա աշխատանքի տեղի, համապատասխան տեխնալոգիա-

կան պրոպեսի վերակառուցումը, ուսուցումը մեկ միասնական շղթա-  
յում պետք է կապակցի այդ խնդիրները հնգամյակի յերրորդ, վճռա-  
կան տարվա ժողանտեսական պլանի կատարման խնդիրներէ հետ: Պետք  
է ցույց տալ, թե ինչպիսի նշանակութիւն ունի յուրաքանչյուր անգամ  
ձին բանվորի դործունեյութեանը տվյալ ձեռնարկութեան, ժողանտե-  
սութեան տվյալ ճշույլի, վորջ ժողովրդական տնտեսութեան արդիւն-  
պլանի կատարման գործում: Այդպիսի կապ սահմանելու մեջ է կայա-  
նում առաջին խնդիրը տեխնիկական պրոպագանդի բնագավառում:

Տեխնիկական պրոպագանդի յերկրորդ հիմնական խնդիրն է՝ ա-  
մենասերտ կապ ստեղծել տեխնիկական ուսուցման և տվյալ կոնկրետ  
արտադրական ձեռնարկութեան խնդիրներէ ու կարիքներէ միջև: Տեսլա-  
պրոպագանդի համար պայքարելու կենտրոնը պետք է դառնա գործա-  
րանը, խորհանտեսութիւնը, կոլտնտեսութիւնը, շինվայրը: Պետք է  
ունկնդիրներէն բացատրել, վոր այն խոցումը, վորը միջև այժմ նկատե-  
լի յե մեկ կողմից՝ տեխնիկական կադրերի դպրոցական պատրաստու-  
թեան, մյուս կողմից՝ արտադրողական ուսուցման լայն արմատաց-  
ման միջև, — այդ խոցումը պետք է վերացվի վոչ թե տեխնիկայի տիրա-  
պետման մեկ ձևը մյուս ձևին յենթակա դարձնելով, այլ թե՛ դպրոցը  
և թե՛ արտադրողական ուսուցումը արտադրութեան հետ առավելա-  
գույն չափով շաղկապելով:

Հենց այս տեսանկյան տակ էլ անհրաժեշտ է քննարկել տեխնիկա-  
կան պրոպագանդի այն ձևերը, վորոնք հանձնարարված են ընկ. Խու-  
խարինի ղեկուցադրում, այն ձևերը, վորոնք դոյութիւն ունեն տվյալ  
ձեռնարկութիւնում և ուրիշ առաջավոր ձեռնարկութիւններում:

Այսուհետև, ունկնդիրներէն հիշեցնել այն մասին, վոր առաջավոր  
տեխնիկայի փորձն իրենց ձեռնարկութիւնը փոխադրելը բայլելիկի և  
հարվածայինի կարևորագույն խնդիրն է հանդիսանում, վոր 7-ժամյա  
բանվորական որվա անցած ձեռնարկութիւններում 8-րդ ժամը տեխնի-  
կական ուսուցման հատկացնելը տեխնիկայի տիրապետման Ֆրոնտում  
մեր ծավալած դրոշի բայլելիկյան տեմպերի կարևոր պայմաններից  
մեկն է հանդիսանում: Այստեղ հարկավոր է ընթերցել մեր կուսակ-  
ցութեան ծրագրի այն կետը, վորտեղ խոսվում է կրճատված բանվորա-  
կան որվա անցած լինելու պեպքում պարտադիր ուսուցում անցկացնե-  
լու մասին, և ունկնդիրներէն ծանոթացնել Մոսկվայի մի շարք գոր-  
ծարաններէ, որինակ՝ Լեպսեյի անվան, Մեքենաշինարարական, Կա-  
լինինի անվան և այն գործարաններէ փորձի մասին, վորոնք 8-րդ ժա-  
մը հատկացրել են ուսման գործին:

Այստեղ հրկավոր է նաև քննել բանվորներէ ընդհանուր տեխնի-  
կական ուսուցման և այդ ասպարիզում կուսակցութեան նշած միջոցա-  
տումներէ հարցը: Այս բաժնի զրույցն անցկացնելիս հարկավոր է ուն-  
կընդիրներէ ուշադրութիւնը սրել այն նշանակութեան մասին, վոր



ունեն աշխատանքի սոցիալիստական ձևերը (սոցիալիզմն ու հարվածայնութունը) տեխնիկայի տիրապետման գործում, նրանց մոբիլիզացիայի յենթարկելով առաջին հերթին «տեխնիկական ուսուցմամբ հարվածային բրիգադներն ընդգրկելու» լողունի իրադրժման համար:

Միաժամանակ պետք է ընդծել, վոր մենք չենք կարող սահմանափակվել սոսկ կապիտալիստական տեխնիկան յուրացնելով, վոր այդ յուրացումը պետք է կատարվի քննադատաբար, քանի վոր սոցիալիստական արտադրական հարաբերություններն ստեղծում են արտադրողական ուժերի զարգացման այլ պահանջներ: Մասնանշելով, վոր մեր ինդուստրիայի զարգացման համեմատ նեղանալու յե կապիտալիստական տեխնիկայի կիրառման շրջանակը, հարկավոր է բռնաձնապես կանգ առնել այն դերի վրա, վոր ունի բանվորական գյուտարարությունը սոցիալիստական տեխնիկա ստեղծելու ասպարիզում: Կարևոր է, վորպեսզի ունենդիրները պարզեն, վոր բանվորական գյուտարարությունը և նրա՝ ՍՍՀՄ-ում մասսայական չափերով տարածված՝ ձևը աշխատանքի նոր սոցիալիստական ձև են հանդիսանում: Այս տեսանկյան տակ պետք է քննել գյուտարարական խմբակների, ռացիոնալիզատորական խմբակների, կոնստրուկտորների խմբակների հարցը և այլն:

Անհրաժեշտ է ունենդիրներին բացատրել, վոր տեխնիկական պրոպագանդի գործը հարկ յեղած ձևով դրված կլինի միայն այն պայմանով, յերբ այդ գործին անմիջական ակտիվ մասնակցութուն կբերեն բոլոր կուսակցական, պրոֆմիութենական ու հասարակական կազմակերպությունները և յուրաքանչյուր առանձին բանվորը: Այստեղ անհրաժեշտ է նաև քննության առնել այն ձևերը, վորոնցով դպրոցը պետք է մասնակցի տեխպրոպագանդը դարձարանում ծավալելու աշխատանքին: Հարկավոր է կանգ առնել այն հարցի վրա, վոր տեխնիկայի տիրապետման ֆրոնտը դասակարգային պայքարի կարևորագույն ճակատամասերից մեկն է հանդիսանում, վոր մեզ համար անհրաժեշտ է տեխնիկան սողորել կուսակցականությամբ և վոր մարքս-լենինյան դաստիարակությունը տեխնիկական պրոպագանդի սխառնում ստանում է բացառիկ նշանակություն:

Ի վերջո՝ հարկավոր է պարզաբանել աջ ուղորտունիստական պրակտիկայի և «ձախ» խոտորումների եյությունը տեխնիկական պրոպագանդի բնագավառում, ունենդիրներին մոբիլիզացիայի յենթարկելով տեխնիկայի իսկական բայլչելիյան տիրապետման համար:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՏԵՆԵԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Ձրույցի վերջին բաժնի մշակումը հարկավոր է կառուցել այն հիմնական դրությունների շուրջը, վոր առաջադրեց ընկ. Ստալինը բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելու և հին արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի ներսում յեղած շրջադարձի նշանների մասին (Ի. Ստալին— «Նոր պայմաններ—անտեսական շինարարության նոր խնդիրներ»):

Մենքից առաջ պետք է բացատրել, վոր «վոչ մի տիրող դասակարգ չի կարող յուրա գնալ առանց սեփական ինտելիգենցիայի: Վոչ մի հիմունք չկա կասկածելու, վոր ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգը նույնպես չի կարող յուրա գնալ առանց իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա ունենալու» (Ստալին):

Կարևոր է, վորպեսզի ունենդիրներն ըմբռնեն այն անմիջական կապը, վոր կա ՍՍՀՄ-ի սոցիալիստական ինդուստրացման ծրագրի և մեր ինժեներ-տեխնիկական անձնակազմի դերի միջև տվյալ շրջանում: Այդ կապն ըմբռնելուց հետո անհրաժեշտ է քննել ինժեներ-տեխնիկական աշխատավորի և արդյունաբերության հրամանատարի այն տիպի հարցը, վորովիսին հարկավոր է սոցիալիզմ կառուցող յերկրին: Դրա հիման վրա հարկավոր է ունենդիրներին հանդել սալ այն յեղրակացության, վոր բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա ստեղծելը մասնատի ամենահրատապ խնդիրն է հանդիսանում: Միտեղ զուգընթացաբար հարկավոր է կանգ առնել հին արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի ներսում սկսված շրջադարձի նշանների և այդ կապակցությամբ նրա նկատմամբ ունեցած մեր վերաբերմունքը փոխելու հարցի վրա, ընդգծելով, վոր այդ շրջադարձը վոչ մի չափով չի պակասեցնում պրակտարական ինտելիգենցիա ստեղծելու հարցի սրությունը:

Անցնելով մեր արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի կազմավորման ուղիներին, հարկավոր է ընդգծել, վոր այդովիսին կազմավորվում է վոչ միայն ուսումնական հաստատություններում, այլև մեր ձեռնարկությունների լավագույն բանվորներից:

«Սոցիալիստական մրցության նախաձեռնողները, հարվածային բրիգադների ստալնոբուները, աշխատանքային վերելքի գործնական վոդեյնչոդները, — ահա՛ բանվոր դասակարգի այն նոր խավը, վորը, իր ձրաբառույն դպրոց անցկացած ընկերներին հետ միասին, պետք է կազմի արդյունաբերության հրամանատարական կազմի կորիզը» (Ստալին):

Այս տեսանկյան տակ էլ պետք է քննել լայն տեխպրոպագանդի նշանակությունը:

Ի վերջո՝ հարկավոր է մատնանշել բուրժուական կարգերից մեզ ժառանգություն մնացած այն հակասությունը, վոր դրյություն ունի ֆիզիքական և մտավոր աշխատանքի միջև մեր յերկրում, ընդգծելով, վոր տեխնիկայի տիրապետման ֆրոնտում ծավալված լայն հարձակողականի պայմաններում, սեփական վորակավորման բարձրացման համար պայքարելու և միաժամանակ կառավարման ու դիտության րնագավառում սոցիալիստական համատեղության դանազան ձևեր դարգայնելու



Հետ մասին՝ ֆրոնտիստական և մտավոր աշխատանքի ներկայացուցիչներին միջև յեղած ուժեղ սահմանադեմերը հետզհետե պետք է ջնջվեն :

Ի վերջո՝ հարկավոր է մատնանշել, վոր յերկրորդ հնգամյակի համար նախագծված են մի շարք կոնկրետ միջոցառումներ, վոր ամբողջ ջուլյամբ վերցրած կարելի յի բնորոշել վորպես «ֆրոնտիստական և մտավոր աշխատանքի հակասութունների վերացման ձեռնարկում» :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՊԱՐՏԱԴԻՐ)

ЛЕНИН.—Великий почин (սոցիալիստական հարցի շուրջը) : Ի. ՍՍԱԼԻՆ.—Տնտեսավարների խնդիրները մասին. սոցիալիստական արդյունաբերության աշխատողների առաջին համամիութենական կոնֆերանսում արտասանած ճառը :

ԸՆԿ. ՄՈՂՈՏՈՎԻ ճառը խորհուրդներին VI համագումարում : Ի. ՍՍԱԼԻՆ.—Նոր պայմաններ-տնտեսական շինարարության նոր խնդիրներ :

ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ոգոստ. 5-ի վորոշումը տեխնիկական գիտությունների մասին :

Կուլյբիչևի ճառը ՀամԿ(բ)Կ XVI համագումարում. «Ռացիոնալացումը հիմնական խնդիր է» բաժինը :

И. РУБИНШТЕЙН.—Основные задачи технической политики. «Правда» от 22 сентября 1931 г.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԼՐԱՅՈՒՑԻԶ)

И. СТАЛИН.—К вопросам аграрной политики в СССР. Մարքսիստ ագրարագետների 1929 թ. դեկտ. 27-ի համամիութենական առաջին կոնֆերանսում արտասանած ճառը :

Ф. ЭНГЕЛЬС.—Анти-Дюринг, стр. 201, 208, 220, 229. 1929 թ. հրատ. :

К. МАРКС.—Ницета философии, стр. 378, 392, ГИЗ, 1929 г. т. V.

ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐՍԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ\*)

Նպատակադրում

Մույն մեթոդական մշակումը նպատակ ունի— 1) ցույց տալ, վոր ՄՏԿ-ները պրոլետարական պետության ձեռքում դասակարգային պայքարի հզոր զենք են հանդիսանում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում : Դրա համար անհրաժեշտ է կանգ առնել

\*) Մույն մեթոդական մշակումը նախատեսված է գյուղական կուսակազմի և արհմիակցների ղեկավարներին համար :

նեղ այն աշխատանքի վրա, վոր կատարել են ՄՏԿ-ները անցած տարի, նշել ինչպես նրանց հիմնական նվաճումները, այնպես էլ հիմնական թերութունները. 2) ընդհանուր գծերով ծանոթացնել ՄՏԿ-ների շինարարության 1931 թ. ուղանի հետ, ընդգծել այն դերը, վոր կատարում են ՄՏԿ-ները վորպես շրջանների մասնագիտացման և գյուղատնտեսության վերակառուցման գործոններ, հատկապես Մոսկվայի մարզում : 3) ուշադրությունը կենտրոնացնել պայմանագրային կամպանիայի, նրա քաղաքական խոշոր նշանակության և այն խնդիրների վրա, վոր ունի կուսակցության ՄՏԿ-ների ու կոլտնտեսության ձեռնարկի միջև սոցիալական գրեթե կամպանիան անցկացնելիս :

Վերահիշյալ խնդիրների հետ միատեղ, կարևոր է ցույց տալ, վոր աջ ուղորտունիստները, ժխտելով պրոլետարիատի և դեյուդացիության հիմնական մասսաների գործման նոր, արտադրական ձևերը, ձգտելով կասեցնել և տապալել խորհանտեսության ձևերի ու կոլտնտեսության ձևերի զարգացումը, հրաժարվելով ինդուստրացման արագ տեմպերից, ժխտելով սոցիալիստական արդյունաբերության առաջատար դերը գյուղատնտեսության նկատմամբ, չնդունելով կուսակցության գլխավոր լուրջը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության վորպես դասակարգի՝ վերացնելու մասին, — գործնականում պայքարում ելին ՄՏԿ-ների դեմ :

Այլ ուղորտունիստի այլաձևություն է հանդիսանում, մեկ կողմից՝ ՄՏԿ-ների քաղաքականապես առաջատար ու կազմակերպիչ նշանակության թերահնահատումն ու ամլացումը, մյուս կողմից՝ ՄՏԿ-ների հիման վրա կազմված կոլտնտեսության ձևերի հակադրումը այն կոլտնտեսության ձևերին, վորոնք կազմված են պարզապես միացնելով գյուղացիական ինվենտարը, մի հակադրում, վոր նշանակում է հրաժարվել գյուղացիական ինվենտարի պարզ միացմամբ կոլտնտեսության ձևերի կազմակերպելուց, իսկ բոլոր կոլտնտեսության ձևերը ներկայումս ուժեղ տեխնիկա ունենալ չեն կարող :

ՄՏԿ-ների հանդեպ աջ ուղորտունիստական, նեղ գործամուլական տեխնիկական մոտեցում ունենալուն անհրաժեշտ է հակադրել ՄՏԿ-ների դերի և նշանակության բնորոշումը վորպես դասակարգային սոցիալական գրեթե զենքերի, շեշտը դնելով կուսակցության գլխավոր գծից բղխող դասակարգային, ընդհանուր քաղաքական խնդիրների վրա : Միաժամանակ չպետք է մոռանալ, վոր ՄՏԿ-ները բարձր տեխնիկական բազայով խոշոր կոլեկտիվ գյուղատնտեսություն կազմակերպելու ձևերից մեկն են հանդիսանում :

ՄՏԿ-ների աշխատանքի փորձը Մոսկվայի մարզում չափազանց անհաջան է և թույլ չի տալիս անհրաժեշտ ուղորտունիստական յեղրակացություններ անելու : Ուստի կոլտնտեսական արարության վրա ՄՏԿ-ների ունեցած ազդեցության հիմնական ցուցանիշները, ինչպես նաև նրանց աշխատանքի



քի թերութիւնները վերցված են հիմնական հացահատիկային շրջաններէ ՄՏԿ-ներէ դործունեութեան պրակտիկայից: Այս մեթոդական մշակման մեջ քննութեան չեն առնվում պայմանագրի բոլոր կէտերը, այլ կանգ է առնված լոկ կարեօրազույն մոմենտներէ վրա, վորոնք ունեն քաղաքական նշանակութիւն:

Թեման մշակելիս անհրաժեշտ է ունենդիրներէ ուշադրութիւնը կենտրոնացնել կուսակցութեան գլխավոր գիծն անշեղ կենսադործելու, կուսակցութեան դժից յեղած թեքումներէ դեմ վճռական պայքար մղելու, ներկա շրջանի գլխավոր վտանգ՝ աջ ուղորտունիղմի իրեւոյթիայի և պրակտիկայի, աջ—«ձախ» բլոկի և հակահեղափոխական տրոցկիղմի կրկնութիւններէ դեմ անհաշտ պայքար մղելու խնդիրներէ վրա: Պայքարի և շինարարութեան դժվարութիւնները կարելի չէ հաղթահարել միմիայն սոցիալիզմի ամբողջ Ֆրոնտով ծավալված հարձակողականի հիման վրա, միմիայն պայքարելով յերկու Ֆրոնտի վրա, պայքարելով ընդդէմ թեքումներէ, վորոնք արդէլակ են հանդիսանում մեր աճման արագ տեմպերի համար, հարյուրավոր ու հազարավոր նոր ՄՏԿ-ներէ աճման ու ծավալման համար:

Յենելով այս նպատակադրումից, թեմայի մշակումը պետք է ընթանա հետեյալ կարգով.

### ԹԵՄԱՏԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԼԱՆ

1. ՄՏԿ-ները համատարած կոլեկտիվացման և կուլակութեան վորպես դասակարգի՝ վերացման հենակետերն են:
2. ՄՏԿ-ներէ աշխատանքի հիմնական թերութիւնները:
3. ՄՏԿ-ներէ շինարարութեան 1931 թ. պլանը: ՄՏԿ-ները վորպես շրջաններէ մասնագիտացման դործունեք:
4. ՄՏԿ-ներէ պայմանագրային կամպանիան, վորպես դասակարգային պայքարի կարեօրազույն բնագավառ և նրա խնդիրները:

### 1. ՄՏԿ-ՆԵՐԸ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՅԵՎ ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ՝ ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԻ՝ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՆԱԿԵՏԵՐՆ ԵՆ

Թեքնատրակտորային կայանների տարեկան աշխատանքի արդունքները բավական համողիչ կերպով դալիս են ասելու, վոր ՄՏԿ-ները սոցիալիզմի ուղղութեամբ արագորեն վերակառուցվող դյուղի խորը արտադրական և քաղաքական կենտրոններն են հանդիսանում: Անցյալ տարում կայանքն ապացուցեց Համ Կ(բ)Կ ԿԿ-ի նոյեմբերյան (1929 թ.) պլենումի այն ցուցմունքների ճշտութիւնը, թե «դյուղացիական տնտեսութիւններում ժամանակակից տեխնիկայի առավելութիւնների ոգտագործման լայն հնարավորութիւն ստեղծելով, մեքե-

նատրակտորային կայանները պետք է դառնան ամբողջ շրջանների համատարած կոլեկտիվացման կենտրոններ»:

ՄՏԿ-ները կոլեկտիվացման հոր դործունեք են հանդիսանում, վորովհետեւ նրանք նպաստում են կոլտնտեսութիւններէ կազմակերպման ու ամրացմանը, նրանց փոխադրելով խոշոր, մեքենայացված, սոցիալիստական հողագործութեան ուղիների վրա: ՄՏԿ-ն լուծում է ինվէստարպուրի չքալար տնտեսութիւններին արտադրութեան միջոցներով ապահովելու հարցը, ջախջախիչ հարված հասցնելով կուլակային շահագործմանը, այդ շահագործումից ապատարելելով թե՛ շքաւորներին և թե՛ միջակներին, վորնչացնելով այդ շահագործման բոլոր արմատները (հողի վարձակալութիւն, բանող անասունի և ինվէնտարի վարձում, սերմվարի և այլն): Կայանների միջոցով բարդ, կատարելագործված դյուղատնտեսական մեքենաներ դործադրելու հետևանքով բարելավվում է հողամշակութիւնը, խիստ բարձրանում է բերքատուլութիւնը, ավելանում է աշխատանքի արտադրողականութիւնը, զգալի չափով ետանանում է դյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքը: Բանվորական ձեռքերն ադատվում են, նրանց մի մասը դնում է դյուղատնտեսութեան հատուկ և ինտենսիվ (տեխնիկական) ճյուղերի վարգացմանը մյուս մասը՝ սոցիալիստական արդյունաբերութեանը: Սպասարկվող կոլտնտեսութիւնների վորջ ապրանքային արտադրանքը նախորդ կոնարակտացիայի յենթարկելով, ՄՏԿ-ները պրոլետարական պետութիւնն ապահովում են հացով:

Պրոլետարական պետութեան ձեռքում արտադրողական ուժերը, այդ թվում նաև մեքենատրակտորային կայանները, կրում են ցայտուն արտահայտվող դասակարգային բնույթ— նրանք դասակարգային պայքարի և սոցիալիստական եկանոմիկայի կառուցման հոր լծակներ են իտանքն ու շինարարութիւնն ընթանում են կուլակութեան և պրոլետարիատին թշնամի տարրերի դեմ մղվող դասակարգային սուր պայքարի պայմաններում:

Դրա պատճառները լիովին հասկանալի չեն, վորովհետեւ ՄՏԿ-ները խիստ բարձրացնելով կոլտնտեսութիւնների ապրանքայնութիւնը, կուլակային արտադրութիւնն արագորեն փոխարինում են կոլտնտեսութիւնների արտադրութեամբ և դրանով իսկ արագացնում են կուլակութեան առանձին ջոկատների վերացումը:

ՄՏԿ-ն միայն ենդեղեղիկական կենտրոն չի հանդիսանում: ՄՏԿ-ն քաղաքականապես կազմակերպող կենտրոն է, և նրա քաղաքական-կազմակերպչական այդ աղբկցութեան թերազնահատումը ամենակոպիտ աջ ուղորտունիստական սխալ է: Դտնել, վոր «մեքենատրակտորային կայանը շրջապատի դյուղատնտեսութեան արտադրական սպասարկման համար անհրաժեշտ վորջ քաշող ուժի (մեքենայական) և տեխնիկական



արքավորման կենտրոնակետն է...», վոր «կայանի առաջ առավել քարդ խնդրի է դրված» նիշտ արտադրական և կազմակերպչական շաղկապ ստեղծելու շրջակա գյուղատնտեսության հետ, վորի համար ելնենց նա ստեղծված է») և միաժամանակ չնչել նրա կազմակերպչական-քաղաքական դերը, նշանակում է թույլ տալ գործամուկական, նեղ-տեխնիկական մոտեցում ՄՏԿ-ների հանդեպ, անտեսել նրանց դասակարգային խնդիրները և ստվերի մեջ թողնել մասսայական քաղաքական աշխատանքը:

Կազմակերպելով կոլտնտեսական լայն մասսաներին, ՄՏԿ-ները նրանց անմիջապես մասնակից են դարձնում սոցիալիստական շինարարությունը: Կոլտնտեսությունների շինարարություն գործում կոլտնտեսական մասսաների ցուցաբերած ինքնագործունեությունը և պրոլետարական պետություն կազմակերպչական և տեխնիկական աջակցությունն ու ղեկավարությունն ըստ ամենայնի լրիվ զուգորդվում են ՄՏԿ-ում: Կոլտնտեսականներին լայն մասսաներին—բատրակներին, չքավորներին, ու միջակներին—ներգրավելով դյուղատնտեսական մեքենայի կառավարման գործում, ՄՏԿ-ները դրանով իսկ զբաղիորեն քարձրացնում են նրանց ընդհանուր կուլտուրական մակարդակը: Իսկ կուլտուրայի զարգացման և մասսայական քաղաքատիրակազմական աշխատանքի զուգորդումը ՄՏԿ-ները դարձնում է կուլտուրական հեղափոխությունն ու ղեկավարողները և կենտրոնները գյուղում:

Կուսակցություններից դուրս չպրտված աջ ուսուցիչներին մի քանիսը փորձեցին մեքենատրակտորային կայանների խնդիրը հակադրել կուսակցության՝ գյուղում վարած վողջ քաղաքականությունը: Այդ ուսուցիչներին տեսակետով, ՄՏԿ-ները «հնարավորություն են տալիս՝ բանվոր դասակարգին և գյուղացիությանն աղատագրել (!) ՀամԿ (բ) Կ-ի ցնորական քաղաքականությունից, ՀամԿ (բ) Կ-ի, վորը մոլորվել է (!) մեր շինարարությունն բոլոր հարցերում, ինչպես արդյունաբերություն, այնպես էլ գյուղատնտեսությունն ասպարիզում»: Նրանց, այդ ուսուցիչներին, թվում է թե ՄՏԿ-ները գյուղը վերականգնում են «վոչ թե կուլեկտիվացման համար մղվող հեղափոխականորեն լարված պայքարի միջոցով, վորպիսին գյուղատնտեսությունը տանում է դեպի գյուղի արտադրողական ուժերի ղեկավարությունը, այլ եվոլյուցիոն ֆանապարհով ամբողջ գյուղացիության հետ միասին, վորովհետև նա (գյուղացիությունը) հասարակության հիմնական բաղադրիչն է հանդիսանում» («Պրավդա» № 204, 1929 թ. սեպտ. 5, Պիսարեվի նամակը):

Այլ խոսքով, աջ ուսուցիչները Պիսարեվը անհրաժեշտ էր համար

ընդ մեքենատրակտորային կայանների միջոցով ընդգրկել բոլոր գյուղացիներին, այդ թվում նաև կուլակներին:

Կուսակցությունն ամբողջապես մերկացրեց աջ ուսուցիչներին «թեորիաների» կուլակային բնույթը, «թեորիաներ», վորոնք ժրտում էին կուլակության դեմ դասակարգային անհաշտ պայքար մղել և համատարած կուլեկտիվացման հիման վրա նրան, իբրև դասակարգ, վերացնելու անհրաժեշտությունը: Տվյալ դեպքում՝ այն դատողությունը, թե «կուլեկտիվացման համար մղվող՝ հեղափոխականորեն լարված պայքարը տանում է դեպի գյուղի արտադրողական ուժերի ղեկավարացիան», և այն յերազանքները, վոր վերաբերում են «եվոլյուցիոն ճանապարհին ամբողջ գյուղացիությունն հեռ միասին», վոչ այլ ինչ են, յեթե վոչ՝ սոցիալիզմի մեջ կուլակի «խաղաղ ներաճման» քուլտուրային «թեորիայի» կրկնեղությունը:

Կյանքն ամբողջապես ջախջախեց՝ ՄՏԿ-ներին միջոցով «կուլակին խաղաղ տնտեսական վոչնչացման» յենթարկելու աջ ուսուցիչներին փտած թեորիան: Կուլակը—կոլտնտշինարարության այդ յերդվյալ թշնամին—բավականաչափ ցույց է տվել իր հակահեղափոխական ելույթները: Ընդհակառակն՝ գյուղում տեղի ունեցող իրադարձությունների պատմական ընթացքը լիովին հաստատեց համատարած կուլեկտիվացման հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու ուղղությունը կուսակցության վերցրած հիմնական դիրքավորման ճշտությունը:

Աջ ուսուցիչներին մեջ գտնվեցին նաև այնպիսիները, վորոնք հայտարարում էին, թե ՄՏԿ-ներն անհամատեղելի յեն Լենինի կոոպերատիվ պլանի հետ: «Շեվչենկովսկի» առաջին ՄՏԿ-ի փորձի հիմքում, գրում է ուկրայնացի ուսուցիչ Գորդիենկոն, «դրված է պետական կազմակերպչական սկզբունքը: ՄՏԿ-ներին լայն ցանց կայմակերպելու միջոցով այդ փորձի ծավալումը քարոզելով, նրա կողմնակիցները, ուզեն թե չուզեն, կամենում են այդ ճանապարհով կոոպերատիվ սկզբունքը փոխարինել պետական սկզբունքով և դրանով իսկ կուսակցությանը այդ հարցում հրում են լենինյան ճիշտ ճանապարհից... «Շեվչենկովսկի» փորձը Լենինի պլանի հետ սկզբունքորեն անհամատեղելի յե... Այդ ձևը կիրառելի միանդամայն անիմաստ են և չեն կարող իրադրվել գյուղի չքավոր ու միջակ լայն մասսաների նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը, այստեղ այդ մասսաներն արհեստականորեն հեռացվում են իրենց սեփական գործից» («Хозрайство Украины» № 11, 1928 թ.):

Հաղիվ թե կարիք լինի ապացուցել, վոր Գորդիենկոն սրբիտարական պետություն դերը դիտում է վորպես տիպիկ ռեվոլյուցիոնիստ: Նա չի հասկացել, վոր սրբիտարական պետությունը ամենարարձր տիպի պետությունն է, վոր իր մեջ կենտրոնացնում է իսկական պրո-

\*) МАРКЕВИЧ—Межселенные машинотракторные станции стр. 29—30.



լետարական դեմոկրատիան, չի հասկացել, վոր պրոլետարական պե-  
տութիւնը դատարարաբար հասարակութիւնը սոցիալիստական հա-  
սարակութեան ուղղութեամբ վերակազմելու ամենակտիւ դործոնն է։  
Պրոլետարական պետութիւնը աշխատավորական մասսաների կազմա-  
կերպիչը և ղեկավարն է սոցիալիստական շինարարութեան գոր-  
ծում։

ՄՏԿ-ները աշխատանքում անցյալ տարի ձեռք բերված արտադրա-  
կան ու քաղաքական նվաճումները ցույց տվին կոլտնտեսական մաս-  
նաների ստեղծարար խանդավառութեան վիթխարի վերելքը՝ կուսակ-  
ցութեան ղեկավարութեամբ։ Սոցիալիստական աշխատանքի հիմնական  
ձևերը—սոցմրցման, հարվածայնութեան, հանդիպական պլանների,  
հասարակական բուքսիները և այլ ձևերի լայն կիրառումը հանդիսա-  
նում է վորպէս պրոլետարական դեմոկրատիայի նոր և բարձրագոյն  
ձևերի զարգացում։ Կյանքը ջախջախեց աշխարհ մարզարեյութիւնները  
և ապացուցեց, վոր կուսակցութեան գիծը միակ ճիշտ գիծն է։

Կոլեկտիվացման պրոցեսները ՄՏԿ-ների կողմից սպասարկվող  
չըջաններում, մեքենատրակտորային բազա չունեցող շրջանների հա-  
մեմատութեամբ, ունեն մի քանի տարբերութիւններ, վորոնք ցույց են  
տալիս այն ցեմենտի պէս ամրացնող դերը, վոր ունեն ՄՏԿ-ները կոլ-  
տնտէշինարարութեան գործում։ Այդ յերեմում է հետևյալ աղյուսա-  
կից։

Մեքենաների ԿԱՅԱՆՆԵՐ	Կոլեկտիվացման տեղից ցանքի ա- ռաջին տասնորյակում ( 1930 թ ).		
	Ամբողջ շր- ջանում	ՄՏԿ-ների մասիվում	Տարբե- րով
Կրիտչանի (Վոլգա) . . . . .	30	80	50
Շենտաի (Պովոլտիեյի Գերմ. հանր.)	40	70	30
ժուլտինի (Սիլին Վոլգա) . . . . .	49	65	16
Ուրոչեվի (Կենտր. Սեպոզ. մարզ)	12	82	70
Պարյեվի ( » » » ) . . . . .	7	25	18

Բայց միայն դրանում չէր, վոր արտահայտվեց ՄՏԿ-ները դերը։  
Այն պահին, յերբ անկայուն տարրերը մազվում էին կոլտնտեսու-  
թիւնից (1930թ.), ՄՏԿ-ները շրջաններում այդ մազումն արտահայտ-  
վեց այլևի վորք թվերով. խոտորումները, կուսակցութեան գծի խե-  
ղաթյուրումները ՄՏԿ-ները մասսիվներում զգալիորեն ավելի քիչ յե-  
ղան։ Հացահատիկային պրոբլեմի լուծման համար մղվող պայքա-  
րում («Պայքարը հացի համար, պայքար է սոցիալիզմի համար»),  
ՄՏԿ-ներն աշխատանքի բայլչեվիկյան տեմպեր ցուցաբերեցին։ Գար-

նանացանի պլանը գերակատարվեց 36 տոկոսով։ Հոկտեմբերի 13-րդ  
տարեգրածի առթիւ Տրակտորիկենտրոնի կողմից մեքենատրակտորային  
կայանի առաջ դրված մարտական խնդիրը—հացահատիկի հանձնումն  
ավարտել, գերակատարելով հացամթերման պլանը 10 տոկոսով—կա-  
տարվեց։ ՄՏԿ-ները հացամթերումների պլանը կատարեցին 110,3  
տոկոսով, աշնանացանի պլանը՝ 107,6 տոկոսով։ 1931 թ. սկզբին  
ՄՏԿ-ները հացամթերման պլանը կատարել էին 122 տոկոսով։ ՄՏԿ-  
ների հաջողութիւնները և սոցիալիստական աշխատանքի ձևերն (սոց-  
մրցումը, հարվածայնութիւնը, հանդիպական արդֆինսպլանը) ող-  
տադործող կոլտնտեսականների խանդավառութիւնն ու անձնագոհ աշ-  
խատանքը չբավորմիչակ մասսաների նոր հոսանք ստեղծեցին դեպի  
կոլտնտեսութիւնները։

Համբ (բ) Կ Կենտրոնական Կոմիտեն բոլոր հիմունքներն ուներ  
հայտարարելու, վոր «մի տարվա աշխատանքի ընթացքում վորոշվեց  
աճի բացառիկ կարևորութիւն ներկայացնող նշանակութիւնը, վոր  
ունեն մեքենատրակտորային կայանները և Տրակտորիկենտրոնը գյու-  
ղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման գործում։ Առա-  
ջավոր տեխնիկայով պիւլված ՄՏԿ-ները, դասակարգային հոսակի պիւլ  
և բայլչեվիկյան տեմպեր կիրառելու հիման վրա, իրոք դարձան համա-  
տարած կոլեկտիվացման և կուլակութեան վորպէս դասակարգի՝  
վերացման կարևորագոյն հենակետներ»\*):

Այն հակայական նշանակութիւնը, վոր ունեն ՄՏԿ-ները վորպէս  
համատարած կոլեկտիվացման և կուլակութեան վորպէս դասակարգի՝  
վերացման հենակետներ, չպետք է կասեցնի գյուղացիական ինվէնտա-  
րի պարզ միացման վրա հիմնված կոլտնտեսութիւնների կազմակերպ-  
ման գործը։ «Արտաբուստ այդ կոլտնտեսութիւնները տեխնիկայի տե-  
տակետից ստեղծեց տարրերվելիս չլինեն մանր գյուղացիական տնտե-  
սութիւնից (քիչ մեքենա, քիչ տրակտոր կա)։ Այնինչ գյուղացիական  
գործիքների պարզ միացումը կոլտնտեսութիւնների ներսում այնպիսի  
եֆեկտ ունեցավ, վորի մասին մեր պրակտիկները չեն յերագում ան-  
գամ» (Ստալին)։

Տրոցիկու այն հայտարարութիւնը, թէ «գյուղացիական արտոն-  
րեց և գյուղացիական հալից ընկած ձիերից, թեկուզ և միացնելով,  
չի կարելի խոշոր գյուղատնտեսութիւն ստեղծել, ինչպէս վոր ձկնոր-  
սական նավակների միացումից չի կարելի շոգենավ պատրաստել» և  
աջ ոպորտունիստ Սիբրցովի հայտարարութիւնը, թէ «կոլտնտեսու-  
թիւնների տոկոսը մեզ համար նշանակութիւն կունենա այն դեպքում,  
յերբ նրանց յետևում կան նոր սկզբունքներով կազմակերպված արտա-  
գրողական ուժեր»,—կոլտնտէշինարարութեան ասպարիզում հայտա-

\* ԿԿ-ի 1930 թ. հոկտ. 16-ի վորոշումը։ «Պրավդա», № 292, 1930 թ. հոկտ. 22։



բերվող ուղղորտունիղմի տիպիկ նմուշներ են հանդիսանում: Այդ դեռ  
քիչ է. «լիդերներին» այս հայտարարութիւնները վոչ այլ ինչ են, յե-  
թե վոչ ամենահասարակ ձևի ծաղրանք կոլտնտեսութիւնների հաս-  
ցեյին:

«Կարիք չկա ասելու, վոր կոլտնտեսութիւնների գերակշռութիւ-  
նը անհատական գյուղացիական տնտեսութեան համեմատութեամբ աս-  
տիճակ ևս անփոփոխելի կղտնա, յերբ համատարած կոլեկտիվացման  
չըջաններում սկզբնական կոլտնտեսութիւններին ոգնութեան կհասնեն  
մեքենատրակտորային կայաններն ու կալոնները, յերբ իրենք՝ կոլ-  
տնտեսութիւնները հնարավորութեամբ կստանան իրենց ձեռքում կենսա-  
րոնացնելու տրակտորներն ու կոմբայները» (Մտալիւն):

Կուսակցութեան խնդիրն է՝ ՄՏԿ-ների լայն շինարարութեան դուզ-  
լնթաց ծախսել կոլտնտէշնարարութեան ֆրոնտը, անչեղորեն կազմա-  
դերպելով առաջիմ գյուղացիական ինվենտարի վրա հենվող կայուն-  
տեսութիւններ:

#### ԿՈՆՏՐՈՒ ԶԱՐՅԵՐ

1. Ի՞նչպիսին է ՄՏԿ-ների դերը համատարած կոլեկտիվացման  
և կուլակութեան՝ վորպէս դասակարգի՝ վերացման գործում:
2. Ի՞նչ նշանակութիւն ունեն ՄՏԿ-ները կուլտուրական հեղափո-  
խութեան գործում:
3. Կարելի՞ յէ արդէոք ՄՏԿ-ների բազա ունեցող կոլտնտեսու-  
թիւնները հակադրել գյուղացիական ինվենտարի պարզ միացման վրա  
հիմնված կոլտնտեսութիւններին:
4. Ինչո՞ւ են աջ ուղղորտունիստների սխալները ՄՏԿ-ների հար-  
ցում:
5. Վորո՞նք են ՄՏԿ-ների նվաճումները վերջին տարում:
6. Ինչո՞ւ կուլակութիւնը պայքարում է ՄՏԿ-ների դեմ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1 ԲԱԺՆԻ ԶԱՄԱՐ

1. И. СТАЛИН.— «К вопросам аграрной политики в СССР».

ցումը:

3. С. ЛЕЙКИН.—Ревизионистская атака на ИТС. «На фронте  
коллективизации», № 7—8 за 1930 г.

4. Բախմաներ.—ա) ԿԿ-ի նոյեմբերյան պլենումի բանաձևը «Կոլ-  
տնտէշնարարութեան արդյունքների և հետագա խնդիրների մասին»:  
բ) XVI կուսհամագումարի բանաձևերը ԿԿ-ի հաշվետվութեան  
առթիւ և «Կոլտնտէշնարարութեան և գյուղատնտեսութեան վերելքի  
մասին»:

#### II. ՄՏԿ-ների աշխատանքի հիմնական թերութիւնները

Այն հսկայական նվաճումների կողքին, վոր ձեռք են բերել մեքե-  
նատրակտորային կայանները բոլոր հիմնական ցուցանիշների գծով,  
այնուամենայնիվ նրանցից մի քանիստ կան այնպիսի էական թերու-  
թիւններ, վորոնք շատ բանում նսեմացնում են աշխատանքի ար-  
դյունքները և պահանջում են նրանց անհապաղ վերացումը: «Արդյու-  
նաբերութեան և հատկապէս նրա հիմնական ճյուղերի արտադրական  
առաջադրութիւնների թերակատարման կարևորագույն պատճառն այն  
է, վոր բացակայում է հարկ յեղած յեռանդն ու նախաձեռնութիւնը  
ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի գործում...» (ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի  
1930 թ. սեպտեմբերի 3-ի դիմումից): Պետք է ասել, վոր ներքին ռե-  
սուրսների ողտնադործման խնդրում հայտարարվող լծացածութեան և  
բյուրեկրատիպի որինակները հանդիպում են մի շարք ՄՏԿ-ներում:  
Մեքենատրակտորային կայանների կողմից ներքին ռեսուրսների ող-  
տադործման հանդեպ ցուցաբերված այդ վոչ բավարար ուշադրու-  
թիւնը ձգձգում, արդելակում, վորոչ գեղքերում անգամ վիժեցնում  
էր տնտեսական-քաղաքական կամպանիաների պլանների կատարումը:  
Ձգձգվում է, որինակ, կոլտնտեսութիւնում հացահատիկի կալումը,  
պահասում են տրակտորները և բարդ կալիչները, կոլտնտեսութիւ-  
նում կան ձիաքարչ կալիչներ, ձիերը ման են դալիս, իսկ ՄՏԿ-ն չի  
աշխատում նրանց ողտադործել: Արդյունքը լինում է այն, վոր հացա-  
հատիկը ժամանակին չի կալում, հացածթերման պլանը թերակա-  
տարվում է... Մենք ունենք մի շարք դեպքեր, յերբ խոսում էյին բան-  
վորական ձեռքերի և անասունների պահածութեան մասին, իսկ գործ-  
նականում բոլորովին այլ պատկեր էր: Այդ յերևում է Վորոչիլովի  
անվան (Միջին Վոլգա) կոլտնտեսութեան որինակից: Այնտեղ 1795  
հեկտ. հերիկից ձիերի միջոցով հերկված է միայն 25 հեկտ., և այդ այն  
ժամանակ, յերբ 620 ձի կար, վորից 200-ը ազատ արածում էյին, մինչ-  
դեռ աշնանացանի և աշնանահերկի պլանները թերակատարվում էյին:

Այս որինակը բավական պարզ ցույց է տալիս, վոր ՄՏԿ-ն չի կա-  
րողացել ճշտիվ շաղկապել տրակտորների պարկի և կոլտնտեսութեան  
ձիերի քաշող ուժի աշխատանքը: Մի շարք կոլտնտեսութիւններում  
դեռևս կան կուլակային տենդենցներ, վորոնց նպատակն է վաճառքի  
հանել բանող անասուններին, սակայն կայաններն այդ թշնամական  
տրամադրութիւններին համարյա վոչ մի դիմադրութիւն ցույց չեն  
տալիս:

Մի քանի մեքենատրակտորային կայաններ, հացահատիկային  
պրոբլեմի լուծման գործում գզալի հաջողութիւններ ձեռք բերելով  
բավարարվեցին միայն դաշտաբուծութեան բնադավառով և վոչ մի  
միջոց չեն ձեռնարկում շարունակելու աշխատանքը անասնաբուծու-



թյան, կերի ու տեխնիկական կուլտուրաների պրոբլեմների լուծման ուղղությամբ, մոռանալով, վոր այդ աշխատանքն անչեղորեն պետք է կատարվի: Այս ճյուղերի հանրայնացման տեմպերը բացահայտորեն անբավարար են, և դրանումն է այդ կայանների աշխատանքի ելակայան թերութիւնը:

Մի շարք կայաններում տրակտորները բավարար չափով չեն ոգտադործվում: Պրակտիկայում դեռևս բավական հաճախ են հանդիպում տրակտորների անհարգելի պատճառներով պարապուրդներ, դատարկ վազքեր, վառելանյութի ծայրահեղ ծախսումներ:

Անցած տարի մի քանի կայաններում յեղան մեքենաների դիտումնալիսր փչացման, բացահայտ վնասարարութեան դեպքեր. դասակարգայնորեն թշնամի տարրերը տրակտորները շարքից հանում էլին, նվազեցնում էլին կայանների արտադրողականութիւնը, նպատակ դնելով վարկարեկել այն աշխատանքը, վոր կատարում են ՄՏԿ-ները դյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ: Իսկ այդ կայանների ղեկավարներն իրենց քաղաքական կարճատեսութեան հետևանքով այդ վնասարարական ակտերի մեջ չեկին տեսնում կուլակային աշխատանքը, մեր թշնամու դասակարգային սլայքարը: Նրանք անհրաժեշտ վճռական միջոցները ձեռք չեկին առնում մերկացնելու նման փաստերի խեղական նշանակութիւնը և նրանց հիման վրա համապատասխան դասակարգային դաստիարակութիւն տալու սոցիալիստական շինարարութեան գործին նվիրված աշխատողներին ու կուլտընտեսականներին:

ՄՏԿ-ները պետք է ակտիվ աջակցութիւն ցույց տան կուլտնտեսութեաններին՝ նրանց կազմակերպչական աշխատանքի ընթացքում: Կայաններն իրենց արամադրութեան տակ ունեն համապատասխան աշխատողներ, վորոնք կարող են և պետք է հարկ յեղած կազմակերպչական աջակցութիւնը ցույց տան կուլտնտեսութեանը. բայց և այնպես մի շարք ՄՏԿ-ներում այդ աջակցութիւնը բավարար չափով ցույց չտրվեց: Աշխատանքի կազմակերպման, բերքի ու յեկամուսների բաշխման հարցերը մի քանի կայանների կողքովն անցկացան, և պահանջվեց կուսակցական ու խորհրդային կազմակերպութիւնների միջամտութիւնը, վորպեսզի ՄՏԿ-ներն ընդհուպ մոռենան այդ աշխատանքին:

ՀամԿ (Բ) Կ ԿԿ-ը 1930 թ. հոկտեմբերի 16-ի վորոշման մեջ մատնանշեց, վոր ՄՏԿ-ները շրջաններում մասսայական աշխատանքին թույլ ուշադրութիւն են դարձվում: Մասսայական քաղաքական աշխատանքի թերադնահատումը և վորոշ չափով անտեսումը բնորոշ են մեծ քանակութեամբ ՄՏԿ-ները համար: Թույլ են աշխատում արտադրական խորհրդակցութիւնները կուլտնտեսութիւններում, վոր մի աշխատանք չի տարվում չքաղորութեան մեջ, իսկ ՄՏԿ-ների ղեկավարներն այդ

աշխատանքին վոր մի ուշադրութիւն չեն դարձնում: Մի շարք ՄՏԿ-ների դյուղատնտեսները, յերբ նրանք կուլտնտեսութիւններն են դալիս, լավագույն դեպքում կոնսուլտանտներ են հանդիսանում դյուղատնտեսութեան տեխնիկական հարցերի շուրջը, վորովհետև իրենց աշխատանքը չեն շարժապոստ կուլտնտեսականների մեջ լայն մասսայական աշխատանքի կազմակերպմանը: ՄՏԿ-ների ղեկավարները շատ հաճախ մոռանում են, վոր իրենց անմիջական պարտականութիւնն է գործնականում իրականացնել կուսակցութեան XXVI համագումարի այն ցուցմունքը, թե «կուլտնտեսութիւններում աշխատանքի բարձր արտադրողականութեան հասնելու համար անհրաժեշտ նոր հասարակական կարգապահութիւն կարելի յետեղծել միայն այն ժամանակ, յերբ իսկական ինքնադործունեութիւն կծավալվի կուլտնտեսականների և կուլտնտեսակներին մեջ, յերբ նրանք ակտիվ մասնակից կդարձվեն կուլտնտեսութեան կառավարմանը»:

Միջակի հարցը կուլտնտեսութիւնում քաղաքական մեծ նշանակութիւն ունի: XXVI կուսահամագումարը մատնանշեց, վոր անհրաժեշտ է կուլտնտեսութիւնում միջակին գրավել ղեկավար աշխատանքի և ոգտադործել նրա տնտեսական փորձը խոշոր կուլտնտեսութիւն կազմակերպելու գործում: Գործնականում մենք նկատում ենք դեպքեր, յերբ միջակին յետ են քաշում ղեկավարութիւնից, և նրա շուրջն անվստահութեան մթնոլորտ են ստեղծում: Իսկ ՄՏԿ-ների ղեկավարները հաճախ հաշտվողական վերաբերմունք են ցույց տալիս կուսակցութեան քաղաքականութեան այդպիսի խեղաթյուրումների հանդեպ:

Աղարնահիւթային միջոցների մորելիդացիան կայանները պետք է կատարեն բայելեիկյան տեմպերով, քանի վոր դյուղացիութեան հիմնական մասսաները շահադրուված են ՄՏԿ-ների շինարարութեամբ: Այնուամենայնիվ մի շարք կայաններում այդ հարցին հարկ յեղած ուշադրութիւնը չի դարձվում: Կան դեպքեր, յերբ կուլտնտեսութիւններում «սորեսական» տրամադրութիւններ դոյութիւն ունեն, իսկ կայանների ղեկավարները նրանց դեմ չեն պայքարում: Որինակ՝ «12-րդ հոկտեմբեր» կուլտնտեսութիւնը (Կինելսկի շրջան, Միջ. վորգայի յերկիր), Տրոսայանի ՄՏԿ-ի կազմակերպման պահից սկսած (1930 թ. գարուն) մինչև աշունը, դրեթե մինչև պայմանագրի կընքման ժամկետը, Տրակտորկենտրոնի ակցիաներ ձեռք բերելու համար կայանն էր մուծել ընդամենը 2 ու 50 կ.:

Սոցմրցումը, հարվածայնութիւնը, հանդիպական սլանի կազմակերպման աշխատանքը մի շարք ՄՏԿ-ներում բացահայտորեն անբավարար չափով են գորդացած: Մի քանի կայաններում սոցմրցումը ձեվական բնույթ է կրում, չի ստուգվում վերցրած պարտավորութիւնների կատարումը: Սոցմրցման պայմանագրերը կընքվում են առանձին կայանների միջև, բայց կայանի ներսում, բրիգադները միջև սոց-



մրցումը բացակայում է : Կարելի չէ համարձակորեն ասել, վոր մի շարք ՄՏԿ-ների աշխատանքում, ճիշտ այնպես, ինչպես արդյունաբերութեան մեջն է, «սոցիալիստական մրցութեան և հարվածայնութեան խոչորադուրյն թերութեանն անդրադարձել են յերևան յեկած արտադրական ճեղքվածքների վրա, արդֆինսլանի կատարման դործում ստեղծված վիժման լուրջ վտանգի վրա...» (ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի 1930 թ. սեպտեմբերի 3-ի ղրմումից) :

Մատնանշելով աշխատանքի թերութեանն, հարկավոր է ընդգծել, վոր տեղական կուսկազմակերպութեանն րաժականաչափ ուշադրութեան չեն դարձրել ՄՏԿ-ների աշխատանքին : Մենք ունենք որինասկներ, յերբ մի քանի տեղական կուսկազմակերպութեաններ, փոխանակ ակտիվ աշակցութեան ցույց տալու ՄՏԿ-ներին պետական առաջադրութեանն կատարման դործում, խառնվում էլին նրանց սպերատիվ աշխատանքին և դրանով իսկ հնարավորութեան չեն տալիս ժամանակին ու ճշտիվ կատարելու արտադրական պլանը : Այս և նման փաստերը նկատի ունենալով, ՀամԿ (բ) Կ ԿԿ-ը ՄՏԿ-ների մասին ընդունած հատուկ վորոշման մեջ (տե՛ս «Պրավդա», № 292, 1930 թվի հոկտ. 22) խիստ ղրերկտիվ տվեց տեղական կուսկազմակերպութեաններին, թե անհրաժեշտ է այնպես կազմակերպել կուսկակալարութեանը, վոր նա լիովին ապահովի կայանների բոլոր աշխատանքների, գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման կողմնուղղված բոլոր միջոցառումների կատարումը :

**ԿՈՆՏՐՈՒ ԼԱՐՅԵՐ**

1. Վորո՞նք են ՄՏԿ-ների աշխատանքի հիմնական թերութեանները :
2. Ի՞նչպես է կոլտնտեսութեանները պայքարում անդրադառնում ներքին ուտարանների անբավարար ոգտադործումը կայանների կողմից :
3. Ինչո՞ւմ պետք է արտահայտվի կայանների կողմից կոլտնտեսութեաններին ցույց արվելիք կազմակերպչական ոգնութեանը :
4. ՄՏԿ-ների և կոլտնտեսութեանների աշխատանքում ի՞նչ նշանակութեան ունեն սոցիալիստակա աշխատանքի հիմնական ձևերը (սոցմրցում, հարվածայնութեան, հանդիպական պլան) :
5. Ինչո՞ւմ պետք է արտահայտվի կուսկակալարութեանը ՄՏԿ-ների նկատմամբ :

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ II ԲԱԺՆԻ ԼԱՄԱՐ**

1. Постановление ЦК ВКП(б) от 11 августа 1930 г. «О работе Шевченковской МТС» («Правда» № 255 от 16 августа 1930 г.).
2. Постановление ЦК ВКП(б) от 16/X 1930 г. «О партийно-мас-

совой работе в районах деятельности МТС» («Правда» № 292 от 22/X 1930 г.)»

3. «Опорные пункты сплошной коллективизации» и «Решительно перестроить работу в районах МТС» (статьи в «Правде» № 292 от 22/X 1930 г.).

**III. ՄՏԿ-ների շինարարութեան 1931 թ. պլանը :  
ՄՏԿ-ները վորպես շրջանների մասնագիտացման  
գործոններ**

XVI կուսկամազում արը խնդիր դրեց արմատական վերակառուցման յենթարկել գյուղատնտեսութեանը, գյուղատնտեսութեան մեջ արադորեն արմատացնել տեխնիկական կուլտուրաները—մեր սոցիալիստական արդյունաբերութեան այդ հումքային բազան, լուծել, անասնաբուժութեան պրոբլեմը : Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը սոցիալիզմի ամբողջ Ֆրոնտով ծավալուն սոցիալիստական հարձակողականի որդանական մասն է հանդիսանում և իրագործվելու յե համատարած կոլեկտիվացման և կուլտիւթեան՝ վորպես դասակարգի՝ վերացման հիման վրա : Այս մեծ խնդրի կատարման համար Տրակտորիկենտրոնը 1931 թ. դարնանը կազմակերպում է 812 նոր ՄՏԿ-ներ : 1931 թ. աշնան մեքենատրակտորային կայանների ցանցն ընդարձակվելով հասնելու յե 1400 միավորի : Թե ինչքան են այն խնդիրները, վոր դրված են ՄՏԿ-ների շինարարութեան պարհին, յերևում է այն բանից, վոր 1929—30 թ. թ. ՄՏԿ-ներ մասնագիր էլին կին կին միայն 2000 կոլտնտեսութեանների հե տեխրոնք միավորում էլին 250-000 գյուղացիական տնտեսութեանի 1930—31 թ. ընթացքում ՄՏԿ-ների ցանցը պայմանադրել անտեղրկելու յե 20 հազար կոլտնտեսութեան, վորոնց մեջ մասնակց միլիոն գյուղացիական տնտեսութեաններ, մոտ 15 միլ. շնչով :

Տրակտորիկենտրոնի 1931 թ. արտադրական ծրագրերը նստում է ընդգրկել 33 միլ. հեկտ. հողամաս, վորից 13 միլ. հարնան ցանքսի համար : Ընդգրկվելու յե 1.5 միլ. հեկտ. (տրակտորի հերկ՝ 750 հազար հեկտար), 250 հազար հեկտար ճակնդեղ և 275 հազար հեկտար վուշ : Աշնանացան է 17 միլ. հեկտ., աշնան ցեղ՝ 17 միլ. հեկտ. : շինականում լուծցատիկային պրոբլեմը, ՄՏԿ-ներն այն պետք է ընդս վերջնականապես լուծեն մոտադա տարիների ընթացքում : դործական, վուշադործական և ճակնդեղացան շրջաններն ընրացի, յեկող տարի ՄՏԿ-ներ պետք է կազմակերպվեն անասկան և գյուղատնտեսութեան յերկրորդական ճյուղերի շրջան

ВВОД-  
ЗЕМЛЕ-  
№ 344



Նոր կազմակերպվելիք 812 կայաններից 539-ը կազմակերպվելու յն հացահատիկային շրջաններում, 120-ը՝ բամբակացան, 67-ը՝ ճակնդեղացան և 86-ը՝ վուչադործական շրջաններում: Հետևաբար՝ տրակտորների ընդհանուր քանակության 36 տոկոսը գնալու յն տեխնիկական կուլտուրաներ արտադրող շրջաններում կառուցվելիք ՄՏԿ-ներին:

Բամբակադործական շրջաններում ՄՏԿ-ների խնդիրն է՝ փոխել չավազանց հետամնաց վոտոգման սխեմները, վողջ եներգետիկայի և եկոնոմիկայի փոփոխման կապակցությամբ: Վուչադործական շրջաններում ՄՏԿ-ները պետք է վերջնականապես թաղեն ստոլիպինյան դյուրեակները և կազմակերպեն խոշոր վուչադործական կոլեկտիվներին: Վուչադործական շրջանների ՄՏԿ-ները առաջ այս տարի խնդիր է դրված չորացնել ճահիճները, ամայի տարածությունները դարձնել վուչադործության հարստագույն պետություններ: Ճակնդեղացան շրջաններում ՄՏԿ-ները պետք է ընդարձակեն ճակնդեղի ցանքի՝ շրջանակները, ճակնդեղն, ինչքան կարելի յն, մեծ քանակությամբ շրջանների ցանքստիտություն մեջ մտցնեն:

Այսպիսով, ՄՏԿ-ները հանրայնացման հիման վրա շրջանները մասնադիտացման յենթարկելու հզոր դործոններ են հանդիսանում: 1931 թ. գարնանը Մոսկվայի մարզում կազմակերպվում է 22 նոր Կ: ՄՏԿ-ները ցանցը մարզում ավելանում է մի քանի անգամ: Մոսկվա մարզը պատկանում է այսպես կոչված սպառող դոտու մարզերի Սակայն, մարզի եկոնոմիկայի բաղադրանությունը (բանջարատուն, վուչ, հացահատիկ, կաթնա-անասնապահական տնտեսն) խնդիր է առաջադրում ներկայումս առավելագույն մասնաները յենթարկելու նրա դյուրեակտնտեսությունը:

Իսկ վայի մարզը, ունենալով հանդերձ անասնապահության լայն ներդրման բոլոր անհրաժեշտ նախադրյալները (մարզադեղատններով մեծված լինելը, արդյունաբերության կերային թափուկների աթյունը, վորոնք զգալի յափով պիտանի յեն կանաչ դանդթյունը և այլն), դեռևս չարունակում է մնալ վորպես անասկուլթյան ասպարիդում ամենից ավելի հետամնաց մարզերից մրցումս ամ Կ Մոսկվայի Կոմիտեյի IV պլենումի վորոշումից):

Եյն տնտեսական և քաղաքական նախադրյալները դալիս են ներքնոր միանգամայն հնարավոր է արագ վերակառուցել մարզի տնտեսությունը անասնապահության հզոր դարգացման ուղղությամբ: Մոսկվայի մարզը կաթնա-անասնապահական տնտեսության արտադրող մարզերի կարգը դնել:

Մեկայումս Մոսկվայի մարզը կոլեկտիվացված է 6 տոկոսով, ըստ մրգա-բանջարաբուծական շրջանները՝ 12 տոկոսով, կաթնա-

